[Յ] [Հ]

ԱՌԱԾՆԵՐ և ԸՆՏԻՐ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

"Well, whatever bit of a wise man's work is honestly and benevolently* done, that bit is his book, or his piece of art." — RUSKIN.

"I know her ways of loving, all of them;
A sweet§ soft‖ way the first is; afterward
It burns and bites like fire." — SWINBURN.

"Never count your chickens before they are hatched."

"A bird in the hand is worth two in the bush."

---

* be-nev'o-lent-ly (պէնէ՛վօլէնթլի) բարեացակամութեամբ, բարի կամենալով

§ sweet ([illegible]) քաղցր, անուշ

‖ soft (սօֆթ) կակուղ, փափուկ, քնքուշ, մեղմ (յոյն)

ԴԱՍ ԾԲ. (LESSON LII.)

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—*Շարունակութիւն բայերու խոնարհման։*

REDUNDANT VERBS.

ԹԷ ԿԱՆՈՆԱՒՈՐ ԵՒ ԹԷ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ։

(Պէտք Եղածէն Աւելի Գլխաւոր Մասեր Ունեցող Բայեր։)

(Տեսնել Երես 109 Բայերու Դասակարգութիւնը։)

Այս թէ կանոնաւոր եւ թէ Անկանոն բայերը թուով ինը-սունհինգ հատ են, ի բաց առեալ իրենցմէ ածանցուածներն եւ բաղադրեալներն։

(Տեսնել Թէ Անկանոն եւ Թէ Կանոնաւոր Բայերու Ցանկը Գրքին Վերջը։)

Այս 95 *բայերէն ալ* 59*ի կանոնաւոր Գլխաւոր Մասերն աւելի գործածական են քան թէ անկանոններն. եւ ներկայիս մեծ ջանք կը լինի բայերու աւելի կանոնաւոր ձեւերը գոր-ծածելու։*

ԴԻՏ.— Այս թէ կանոնաւոր եւ թէ անկանոն բայերու մէկ մասի անցեալի եւ անցեալ ընդունելութեան երկրորդ ձեւերը, որոնք առ հասարակ հին բանաստեղծութեանց եւ Ս. Գրքին մէջ գործածուած են, այժմ հասարակ գործածութեանց մէջ բոլորովին անգործածելի են դարձած. թէեւ ինքնին լաւ Անգ-լիերէն կը սեպուին. այսպէս "And none *spake* a word (*ասաց*) unto him." — *Job*, ii, 13. *«Եւ ոչ ոք բառ մը խօսեցաւ իրեն։»* — Յոբ. բ. 13։

111. *Վարժութիւն*

[Գտնել հետեւեալ թէ՛ կանոնաւոր եւ թէ՛ անկանոն բայերու Գլխաւոր Մասերը ցուցակէն եւ գրել տետրակին մէջ։ Շինել նաեւ [illegible] բայերու [illegible] [illegible] գործածելով մի տարբեր դէմք. եւ [illegible] անցեալ ընդունելութեան [illegible]։]

to abide	to dig	to hang	to mean	to roast
to build	to freeze	to kneel	to pay	to shake
to catch	to grind	to lay	to quit	to throw

DEFECTIVE VERBS. ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՑԵՐ։

(Տեսնել Երես 109 Բայերու Դասակարգութիւնը։)

Պակասաւոր բայերը՝ թուով տասնեւմէկ, հետեւեալներն են.

LIST OF THE DEFECTIVE VERBS. ՑԱՆԿ ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՑԵՐՈՒ

Present. Ներկայ։	*Preterit.* Անցեալ։	*Present.* Ներկայ։	*Preterit.* Անցեալ։
Beware, (պիուէ՛յր)	——	Quoth, (քուօթհ)	quoth.
Զգուշանամ,	(չունի)	*Ըսեմ,*	*ըսի։*
Can,	could.	Shall,	should.
Կրնամ,	*կրցայ։*	*Պիտի,*	*պիտի։*
May,	might.	Will,	would.
Կրնամ,	*կրցայ։*	*Պիտի,*	*պիտի։*
Methinks,	methought.	Wis, (ուիս)	wist. (ուիստ)
Ինձ կը թուի,	*ինձ թուեցաւ։*	*Գիտեմ.*	*գիտցայ։*
Must,	must.	Wit, (ուիտ)	wot. (ուօտ)
Պէտք է,	*պէտք է։*	*Գիտեմ,*	*գիտցայ։*
Ought, (օթ)	Ought.		
Պէտք է։	*Պէտք է։*		

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1· **Methinks** և methought *շատ քիչ կը գործածուին։*

2· **Must** և ought *ամեն դէմքի մէջ անփոփոխ կը մնան։*

3· Quoth և wis, wist *այժմ անգործածելի են դարձած։*

4· Will *երբեմն կը գործածուի իբր գլխաւոր բայ, որ ատեն կանոնաւոր բայ է և ամեն եղանակ ու ժամանակ ունի։*

5· Wit *ի աներեւոյթ եղանակը միայն գործածական մնացեր է. այսպէս* to wit, *կը նշանակէ* այսինքն։

IMPERSONAL (իմ-փըր՛սըն-ըլ) VERBS. ԱՆԴԷՄ ԲԱՑԵՐ։

Քանի մը բայեր՝ իրենց ակնարկած նիւթի բնութեան համեմատ, եզակի երրորդ դէմք միայն կը գործածուին, տէր բայի ունենալով it. այս բայերը կը կոչուին անդէմ *կամ* միադէմ *բայեր։ Այս բայերու տէր բային (եթէ* it *էն ի զատ ուրիշ բառ ալ ըլլայ) մասնաւոր գոյական անուն մը չը ցուցնելով, բայց ընդհանուր նշանակութիւն մը միայն կ'ունենայ. այսպէս,* it rains, *կ'անձրեւէ.* it snows, *կը ձիւնէ.* it freezes, *կը սառեցնէ.* What ails you? *Ի՞նչ կ'ըլլայ ձեզ. եւայլն։*

PARTICIPLES. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ։

(Տեսնել Երես 108 Ծանօթութիւն։)

Անգլիերէնի մէջ միշտ երեք ընդունելութիւններ կան, Անկատար, Կատարեալ եւ Նախ քան Կատարեալ, որոց կարգը անփոփոխ ըլլալուն համար աւելի դիւրութեան համար կը կոչուին Առաջին, Երկրորդ *եւ* Երրորդ։

Ա. Անկատար *ընդունելութիւնը առ հասարակ* ing *ով կը վերջանայ, եւ կ'արտայայտէ եղելութեան, գործողութեան կամ անինչանքի շարունակութիւնը. ինչպէս, being,* ըլլալով. *loving,* սիրելով. *եւայլն։*

Բ. Կատարեալ *կամ* Անցեալ *ընդունելութիւնը առ հասարակ ed կամ en ով կը վերջանայ, եւ կ'արտայայտէ եղելութեան, գործողութեան կամ անինչանքի կատարուած լմնցած ըլլալը. այսպէս, been,* եղած. *loved,* սիրած. *written,* գրած. *եւայլն։*

Գ. Նախ քան Կատարեալ *ընդունելութիւնը առ հասարակ having բառն ունի իր հետ եւ կ'արտայայտէ եղելութեան, գործողութեան կամ անինչանքի ժամանակ առաջ լմնցած ըլլալը. այսպէս, having loved,* սիրած ըլլալով, *having seen,* տեսած ըլլալով, *having written,* գրած ըլլալով. *having been loved,* սիրուած ըլլալով. *having been writing,* գրել շարունակելով *(գրելու վրայ եղած ըլլալով). having been written,* գրուած ըլլալով. *եւայլն։*

Առաջինը *կամ* Անկատար Ընդունելութիւնը *երբ պարզ (ձև) է, միշտ կը կազմուի բային արմատին վրայ* ing *աւելցնելով. ինչպէս,* look, *նայիլ.* look*ing, նայելով. մինչ երբ բաղադրեալ ձևը կ'ուզուի, բայի պարզ ընդունելութեանը being բառը նախադասելու է. այսպէս, being reading, կարդալը շարունակելով being read, կարդացուած ըլլալով։*

Երկրորդը *կամ* Կատարեալ Ընդունելութիւնը *միշտ պարզ ձև ունի և կանոնաւորապէս կը չինուի բայի արմատին d կամ ed աւելցնելով. հակառակ պարագային կամ Անկանոն և կամ Թէ կանոնաւոր եւ Թէ Անկանոն է. որոյ կատարեալ ընդունելութիւնը միշտ ցանկէն սովրելու է։*

Երրորդը *կամ* Նախ քան Կատարեալ Ընդունելութիւնը *միշտ բաղադրեալ ձեւ ունի, եւ կը կազմուի կատարեալին having նախադասելով, երբ բաղադրեալը կրկին է. իսկ երբ բաղադրեալը երեքկին է having been պէտք է նախադասել կատարեալին կամ անկատարին. ինչպէս, having loved* սիրած ըլլալով. *having been loved,* սիրուած ըլլալով. *having been loving,* սիրել շարունակելով։

ԲԱՅԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Սահմանական Անկատար և Կատարեալ ժամանակներ. — *Հայերէնի մէջ մինչդեռ Անկատար, Կատարեալ եւ Յարակատար ժամանակներն իրարմէ շատ որոշ են, Անգլիերէնի մէջ ընդհակառակն յաճախ շփոթութեան տեղի կուտան. ուստի կ'արժէ աւելի պարզենք։*

Անգլիերէնի մէջ Անկատարը առ հասարակ Հայերէն կատարեալին կը համապատասխանէ եւ այնպէս ալ թարգմանելու է, որը կը ցուցնէ թէ կատարուած գործողութիւնը խօսքն ըսուած ժամանակին հետ կապակցութիւն չունի. մինչ Անգլիերէն կատարեալը Հայերէնի մէջ յարակատարին կը համապատասխանէ եւ այնպէս ալ թարգմանելու է. որովհետեւ կը ցուցնէ գործողութեան կատարուած ժամանակը խօսքն եղած (Նեքսթ-դէյ) առենին հետ կապակցութիւն ունի. այսպէս, "The letter, *you mailed* yesterday, *we have not received** yet" — *Նամակը, (զոր) դուք նամակատունէն ղրկեցիք երէկ, տակաւին (դեռ մինչեւ հիմա) առած չենք. օրինակին մէջ you mailed, հաստատական անկատարը (անցեալ կատարեալ ըստ Հայերէնի) իր հետ ունեցած yesterday բառովը կը ցուցնէ թէ նամակին երէկ ձեր թղթատունը ձգելու գործողութիւնը մեր այսօրուան խօսած առենին հետ կապակցութիւն մը չունի, քանի որ նամակը նամակատուփը ձգելու գործողութիւնը երէկ եղեր վերջացեր է. մինչ we have not received բացասական կատարեալը (յարակատար ըստ Հայերէնի) իր հետ ունեցած yet բառովը կը ցուցնէ թէ նամակին այսօր չստացուելու գործողութիւնը մեր խօսած առենին (դեռ մինչեւ հիմա) հետ կապակցութիւն ունի. ուսկից որոշ կը հետեւի թէ գործողութիւն մը թէ նոր կատարուած ըլլայ թէ շատոնց, քանի որ ներկայիս հետ ժամանակի նկատմամբ կապակցութիւն չունի, պէտք է Անգլ.* Imperfect, *Անկատար (Հայերէն Անցեալ կատարեալ) գործածել. այսպէս,* loved, said, sent, went, *եւայլն. իսկ եթէ ներկայիս հետ կապակցութիւն մ'ունենայ,* Perfect, *կատարեալ (Հայերէն Յարակատար) գործածելու է. այսպէս,* **has loved, has said,** has sent, have gone, *եւայլն։*

Գիտնալու է նաեւ որ Անգլ. Perfect, *Կատարեալը (Հայերէն Յարակատարը) կը գործածուի ցուցնելու համար.*

ա. Տակաւին չլմնցած գործողութիւն մը. ինչպէս, It *has rained* all this week, այս բոլոր շաբաթ անձրեւ եկաւ։

---

* to re-ceive' (րի-սի՛վ) *ստանալ, ընդունիլ*

բ. Նոր լմնցած գործողութիւն մը. ինչպէս, I understand that an Armenian writer *has arrived** from Tiflis, կը հասկնամ թէ Թիֆլիսէն Հայ գրող (գրագէտ) մը հասած է. *այսինքն նոր հասած է։*

գ. Առաջուց եղած գործողութիւն մը, որուն հետեւանքը, արդիւնքը դեռ կը տեւէ. ինչպէս, I have learned§ my lesson, and now enjoy the result‡, դասս սորված եմ, և հիմայ արդիւնքը կը վայելեմ։

դ. Առաջուց եղած եւ բոլորովին լմնցած գործողութիւն մը. ինչպէս, We all *have been* young sometimes past, անցեալին մէջ մենք բոլորս տղայ եղած ենք։

ե. Առաջուց եղած գործողութիւն մը, որ տակաւին կայ. ինչպէս, Plato† *has written* the republic‖, Պղատոն գրած է Հանրապետութիւնը։

Անգլիերէն Սահմանական Անկատարը (Հայերէն Անցեալ Կատարեալը) ուրիշ ոճով ալ կ'ըսուի (որ աւելի որոշ կ'արտայայտէ թէ, գործողութիւնը թէեւ առաջ կ'ըլլար, հիմա ալ չըլլար), բային աներեւոյթ եղանակը to use *բային անկատար ժամանակին առջեւը դնելով. այսպէս,* I used to love, *կը սիրէի (ժամանակին սովորութիւն ունէի սիրելու,* (բայց ոչ հիմա)։ *Այս ոճը ժողովրդական խօսակցութեանց մէջ բաւական գործածական է։*

2. Սահմանական Գերակատար. — *Այս ժամանակը կը ցուցնէ գործողութեան կատարումը ուրիշ մասնաւոր անցեալ ժամանակէ մ'առաջ. ինչպէս,* We *had dined* when he arrived, մենք ճաշած էինք (*երբ ինք ժամանեց*) մենք ճաշ ըրած էինք։

3. Ապառնի ժամանակ *արտայայտելու համար յաճախ հետեւեալ ոճն ալ կը գործածուի.* I am going to love, *պիտի սիրեմ (բառական թարգմանութեամբ* կ'երթամ (որ) սիրելու). we are going to write, *գրենք պիտի։*

4. Ստորադասական Ներկայ և Անկատար ժամանակներուն *տարբերութիւնն աս է որ ներկան կը ցուցնէ* անորոշութիւն, *մինչ անկատարը՝* ժխտում. *այսպէս,* if it rain, *եթէ անձրեւ գայ (պիտի գայ թէ ոչ անստոյգ է).* if it rained, *եթէ անձրեւէր (եթէ անձրեւ գար, բայց չեկաւ)։*

---

* to ar-rive´ (ըրրա՛յվ) *հասնիլ, ժամանել*

§ to learn (լըռն) *ուսանիլ, սորվիլ*

‡ re-sult´ (րիզը՛լտ) *արդիւնք*

† Pla´to (փլէ՛յթօ) *Պղատոն*

‖ re-pub´lic (րիփը՛պլիք) *հանրապետութիւն*

Ստորադասական անկատարը կարելի է չինել նաեւ if *բա-ռը (Շաղկապը) զանց ընելով ու տէր բային բայէն կամ օժան-դակէն առքը դնելով. այսպէս had you* come a little sooner, you would have seen him, *եթէ քիչ մ'աւելի շուտ եկած ըլլայիք, զինք տեսած պիտի ըլլայիք. were it* so, *այսինքն* if it were so, *եթէ այդպէս ըլլար։*

Թէ գրութեանց եւ թէ խօսակցութեանց մէջ յաճախ եւս ստորադասականին փոխարէն սահմանական ձեւը կըգործածուի։

5. To be *եւ* to have *բայերուն քանի մը ժամանակները ու-րիշ բայերուն աներեւոյթ եղանակին հետ գործածուելով պարտաւորութիւն, ստիպում կը ցուցնեն. ինչպէս,* I am to go, *երթալու եմ.* I have to go, *երթալու եմ (անդադրման, աւելի զօրաւոր է).* I have to work for my living, *ապրուստիս համար գործելու եմ (ստիպուած եմ գործել)։*

6. *Եթէ հարցում ընող խօսքի մը բայը օժանդակ ունենայ, պատասխանին մէջ, տէր բային եւ օժանդակը միայն կը գոր-ծածուին, բայը զանց ընելով. թէեւ բայը դնելն ալ սխալ չէ, սակայն առաջին տեսակը աւելի համառօտ ըլլալուն, աւելի ա-նուշ կը սեպուի. այսպէս,* Do you know my name? *Անունս գի-տէ՞ք։* I do. *Գիտեմ։* — May I go home? *Կարելի՞ է տուն երթամ։* You may. *Կարելի է (կրնաք երթալ)։* — Have you been in London? *Լոնտոն եղա՞ծ էք։* I have not. *(Եղած) չեմ։* — Did you see my sister? *Քոյրս տեսա՞ք։* We did. *Այո՛ (տեսանք)։*

7. Shall *եւ* will *օժանդակներու գործածութեանց մասին որքան որ անուանի գրագէտներն անգամ յաճախ կը շփոթին, դարձեալ կ'արժէ որ հնար եղածին չափ պարզել ուսանողին աւելի դիւրութիւն մ'ընծայած ըլլալու համար։*

(Տեսնել երես 46 և 125–126։)

ա. Shall *Ա. դէմքին մէջ միայն կ'իմացնէ թէ գործողու-թիւն մը պիտի ըլլայ առանց հաստատելու կամ ստուգելու. իսկ Բ. եւ Գ. դէմքերուն մէջ կը նշանակէ թէ ստուգիւ պիտի ըլլայ, (պէտք է որ ըլլայ). օրինակի համար,* I shall write, *պիտի գրեմ.* you shall be rewarded*, *պիտի վարձատրուիք (անշուշտ).* he shall be punished§, *պիտի պատժուի (ստուգիւ)։*

բ. Will *Ա. դէմքին մէջ կը ցուցնէ թէ բան մը ստուգիւ պիտի ըլլայ, որոշուած է, եւն. իսկ Բ. եւ Գ. դէմքերուն մէջ միայն կ'իմացնէ թէ պիտի ըլլայ՝ առանց հաստատութիւն կամ*

---

* to re-ward' (րի-ուօ՛րտ) *վարձատրել.* reward, *վարձատրու-[թիւն*

§ to pun'ish (փը՛-նիշ) *պատժել*

ստուգութիւն տալու, ինչպէս, I will go, պիտի երթամ (ափա-ֆէ-)․ You will soon be there. Դուք շուտով հոն պիտի ըլլաք (Հաւանաբար)․ He will expect you. Ձեզ պիտի ակնկալէ (սպասէ)։

գ․ Shall հարցական խօսքերու մէջ Ա․ և Գ․ դէմքով կը գործածուի, 1․ մէկէ մը հրաման ուզելու, կամ անոր կամքը հասկնալու համար․ և 2․ մէկէն տեղեկութիւն մը կամ լոյս մը առնելու նպատակաւ․ իսկ Բ․ դէմքով՝ միայն տեղեկութիւն առնելու նպատակաւ․ այսպէս, Shall I take this book home? Այս գիրքը տանե՞մ տուն (հրաման կուտա՞ք)։ Shall he bring you another book to read? Ինքը բերէ՞ (կուզէ՞ք որ բերէ) ձեզ ուրիշ գիրք մը կարդալու (համար)։ Shall you be in Paris next year? Գալ տարի Փարիզ պիտի ըլլա՞ք (կուզեմ գիտնալ, տեղեկութիւն առնել)։

դ․ Will հարցական խօսքերու մէջ Բ․ և Գ․ դէմքով կը գործածուի մէկուն կամքը հասկնալու համար․ իսկ Գ․ դէմքով՝ ապառնի գործողութեան մը վրայով տեղեկութիւն առնելու համար․ այսպէս, Will you go? Պիտի երթա՞ք (կուզէ՞ք երթալ)։ Will he run for justice* of peace? Հաշտարար դատաւորութեան (պաշտօնին) համար պիտի վազէ՞ (կամք ունի՞ ընտրութեան թեկնածու ըլլալու)։ When will the boat leave for Boston‡? Նաւը ե՞րբ պիտի մեկնի Պոսդոն գնալու համար։

ե․ Ստորադասական խօսքերու մէջ՝ shall ամեն դէմքով ալ ենթադրութիւն կը ցուցնէ․ իսկ will՝ կամք․ ինչպէս, "If we shall say, From heaven" «Թէ որ (ենթադրենք թէ) ըսենք՝ Երկինքէն» "If any man will come after me", «Թէ որ մէկը իմ ետեւէս գալ կ'ուզէ (կամք ունենայ)»։

զ․ Shall, will, ինչպէս նաև may, can, օժանդակներուն անցեալները should, would, might, could, որոնք պարտք, ենթադրութիւն, հնարաւորութիւն, կարողութիւն կը ցուցնեն (Տեսնել երես 58, 125, 126) ժամանակի կողմանէ շատ անորոշ են․ երբեմն ներկայի մերթ անցեալ և մերթ ապառնիի միտք կուտան․ այսպէս, I *would* do it with pleasure if I *could*. Հաճոյքով, կ'ընէի (հիմայ) անիկայ, եթէ կարենայի (յետոյ)։ He could not do it yesterday, for he was otherwise engaged† Երեկ (անցեալ) ինքը չէր կրնար ընել զանիկա, որովհետեւ ուրիշ գործով զբաղուած էր։

---

* jus'tice (ճը'ստիս) արդարութիւն․ դատաւոր

‡ Bos'ton (պօ'ստըն) Պոսդոն

† to en-gage' (էնկէ'յճ) խոստումներով կամ երդումով կ[illegible]ուած ըլլալ․ նշանուիլ․ վարձով բռնել․ զբ[illegible]

If he would not go to-day; I might go with him to-morrow. *Եթէ այսօր չուզէ երթալ, վաղը ես կարելի է երթամ (մայթ կօ, թումարօ) իրեն հետ։*

է. To go, *երթալ* և to come, *գալ բայերը կրաւորական ձեւ կառնեն չէզոք նշանակութիւնով* (Տեսնել երես 177) He *is* gone, He *has* gone, *գնաց.* He *is* risen, He *has* risen, *յարեաւ։*

ը. Do *օժանդակը յաճախ կը գործածուի ուրիշ բայ մը չը կրկնելու համար. այսպէս,* I read more books in a week, than you *do* in a month. *Ես մէկ շաբաթուայ մէջ աւելի շատ գիրք կը կարդամ, քան դուք (յու տու) մէկ ամիսուան մէջ։*

թ. Ought *կը ցուցնէ պարտաւորութիւն. ինչպէս,* I ought to read, *պէտք է որ կարդամ.* He ought to do it, *ընելու է անիկա։*

112. *Վարժութիւն*

[Ը] [Թ]

bore (պօր) store (ըսթօր)* gain (կէյն) bar'gain (պա'րկըն)
cross (քրօս)* prose (փրօզ) tongue (թընկ) a-mong' (ըմը'նկ)
fade (ֆէյտ) gate (կէյթ) knit (նիթ) per-mit' (փըրմի'թ)
faint (ֆէյնթ) paint (փէյնթ) act (էքթ) ex-act' (էկզէ'քթ)
false (ֆօլս) pulse (փըլս) press (փրէս)* ex-press' (էքսփրէ'ս)
firm (ֆըրմ) in-firm' (ինֆը'րմ) am'ple (է'մփլ) ex-am'ple (էկզէ'մփլ)
flat (ֆլաթ)* glad (կլատ)* plain (փլէյն)* ex-plain' (էքսփլէ'յն)
form (ֆօրմ) in-form' (ինֆօ'րմ) cer'tain (սը'րթէյն) cur'tain (քը'րթէյն)
full (ֆուլ) wool (ուուլ) for-bid' (ֆօ'րպիտ) mor'bid (մօ'րպիտ)
harp (հարփ) sharp (շարփ) meas'ure (մէ'ժըր) pleas'ure (փլէ'ժիուր)
just (ճըսթ) un-just' (ընճը'սթ) cor'al (քա'րըլ) quar'rel (քուօ'րէլ)
off (օֆ) golf (կալֆ, կօֆ) hay (հէյ) pay (փէյ)
pure (փիուր)* sure (շուր) ex-cept' (էքսէ'փթ) ex-cise' (էքսա'յզ)
share (շէյր) shave (շէյվ) shame (շէյմ) shame'ful (շէ'յմֆուլ)
com-plete' (քըմփլի'յթ) mis'sion (մի'շըն) per-mis'sion (փըրմի'շըն)
prod'uce (փրա'տիուս) in''tro-duce' (ինթրօտի'ուս) quite (քուայթ)*
as-so'ci-ate (էսօ'շիէյթ) con-ve'ni-ent (քընվի'յնիընթ) play (փլէյ)*
beau'ti-ful (պիո'ւթիֆուլ) ex-am'ine (էկզա'մին)

---

* *Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։*

113. Վարժութիւն

[Ֆ] [Ժ]

Bore cross fade faint false firm flat form full harp just pure share associate store gate prose off paint pulse infirm glad inform wool sharp golf unjust sure shave convenient gain tongue knit press ample plain certain complete exact measure mission introduce produce except shame among beautiful bargain permission permit express example excise explain act shameful curtain pleasure examine quarrel hay morbid coral pay quite play.

ԴԱՍ ԾԳ. (LESSON LIII.)

[Ի]

Rare, [illegible]
stare, [illegible]
gain, շահ, օգուտ [illegible]
bargain, աժան առարկայ [illegible]
cross, խաչ. [illegible]
prune, [illegible]
tongue, լեզու
among, մէջը [illegible]
gate, դուռ, մեծ դուռ
permit, արտօնագիր
faint, նուաղում, նուաղել
paint, ներկ
painting, նկար, նկարչութիւն
act, գործ, արարք. արարուած
exact, ճիշդ ու ճիշդ
false, սուտ, սխալ
pulse, զարկերակի զարկ [ճնշան
press, մամուլ, տպագրութիւն.
express, ընթանալիր. ճեպընթաց
kառաչարք [ռատուն
firm, հաստատուն, ամուր. վաճա-
infirm, տկար
ample, ճոխ, առատ
example, օրինակ
for example, օրինակի համար,
գործօրինակ
flat, հարթ, տափակ. յարկաբա-
glad, ուրախ
plain, պարզ, անպաճոյճ, հասա-
բակ. հարթ. դաշտ
form, ձև, կերպարանք. ոճ. կա-
զապար, (պաշտօնական) տիպար
certair, որոշ, ստոյգ. ոմն. մը.
curtain, վարագոյր [այոինչ
quite, բոլորովին, բաւական շատ
coral, բուստ (մարջան)
quarrel, բանակռիւ
complete, ամբողջ

full, լեցուն, ամբողջ
wool, բուրդ
morbid, վատառողջ, հիւանդոտ
forbid, արգելք
harp, տաւիղ (ամբիոն)
sharp, սուր, սրածայր. դիւ (Ձայն)
measure, չափ, կշիռ
pleasure, հաճոյք
just, ճիշդ. արդար. մականա-
խաղ (Տմ. ճիշդ)
unjust, անարդար
mission, պատգամաւորութիւն.
պաշտօն, գործ. քարոզ-
չական կեդրոն
permission, թոյլտուութիւն
off, …է, …էն, աւելի հեռու.
ի բաց, մէկդի
golf, կոլֆ, գնտօթեան (խաղ)
play, խաղ. դեր
produce, արտադրութիւն, երկ-
րի բերք
pure, մաքուր. ողջախոհ
sure, ստոյգ, վստահ
except բացի, …է. ի զատ
excise, ներքին տուրք. ոգելից
ըմպելիններու տուրք.
share, բաժին, բաժնեթուղթ
shave, ածելուիլը
shame, ամօթ
shameful, ամօթալի [նակից
associate, ընկերակից, պաշտօ-
convenient, յարմար. դիւրին
beautiful, (գեղեց) գեղեցիկ (մեղմ
և երգել)
hay, չոր խոտ
pay, վճարք
pay day, վճարելու օր
woolen, բրդէ, բրդեղէն

to act, գործել · դեր կատարել
to associate, ընկերակցիլ
to bore, ծակել · ձանձրացնել
to cross, խաչակնքել · իրար հանդիպիլ · խաչաձև ընել · դիմացի կողմը անցնիլ
to exact, պահանջել
to examine, քննել, զննել
to explain, բացատրել
to express, արտայայտել
to fade, խամրիլ, գոյնը աւրիլ
to faint, նուաղիլ
to forbid, արգիլել
to form, կազմակերպել · ձև տալ
to gain, շահիլ
to hay, խոտ հնձել ու չորցնել
to inform, տեղեկացնել
to introduce, ներկայացնել, ծանօթացնել
to knit, (ֆուլղայէ դէօ) հիւսել, կապել
to measure, չափել
to paint, ներկել · նկարել
to pay, վճարել
to permit, թոյլ տալ
to play, խաղալ · նուագել, նուա- [գածել
to press, արդուկել · ճնշել, ճմլել
to produce, արտադրել
to quarrel, բանակռուիլ
to shame, ամչցնել, ամօթով խայտառակել
to share, մասնակցիլ
to shave, ածիլել · տաշել
to store, ամբարել, մթերել

114· Վարժութիւն

[Թ] [Ժ] [Ն]

1. Bertha, I intend to go to five and ten cents store this afternoon, to look for some bargains; would you like to come along?— I would with pleasure.— But you shouldn't bore mama for anything.— No, I wouldn't.— 2. "He can not write; but his cross is a good cross, and is honored......".— Did he gain much?— Not worth of speaking of. — 3. "And how hear we every man in our own tongue, wherein we were born?"—"He that is without sin among you, let him first cast a stone at her. — 4. When the man did not permit me to pass the gate, I almost fainted.— Will it be convenient for you to send an express here? — It will. — 5. Can you feel my pulse.— Of course* I can.— I am firm in my believe that his case will not be pressed. — 6. Aram, please make that form ready for the press.— Will you press this coat for me.— Yes, sir.— When can I have it?— First thing in the morning. How will that do? — Allright. — 7. Cora, I want to express you my thanks for

---

* Այս ոճի խորդ Ամերիկերէնն է sure I can, որը գործածելու չէ։

[illegible] — That is nothing. I did my [illegible] I expect to get a good pay.— How [illegible] — 8. That was a fine painting [illegible] me what do we call [illegible] — Yes, ma'am, I under-[illegible] for example "Tell [illegible] you what you are". This [illegible] head *was* like the pure [illegible]".— You can never [illegible] We were very glad to see that [illegible] — Is that complete?— No, [illegible] — No, sir, I can't; but [illegible] I like.— Do you play [illegible] Bertha, it is always [illegible] — And it is no less to me.— [illegible] Pleased to meet you.— [illegible] — What do you think [illegible] It is alright with me.— [illegible] — Now children, [illegible] you know you should [illegible] — Are you certain about that.— [illegible] like to buy five shares.— [illegible] that shame that [illegible] Every body knows [illegible] — Yes, sir, they [illegible] I don't.— Can you [illegible] that they will [illegible]. Will you measure this [illegible] — 18. Nora, I like [illegible] brother.— I do some [illegible] will be hay day for [illegible] have no hay this year.— Say [illegible] It is made of fine coral.— [illegible] shared with others".— 20. [illegible] me, and forbid them not". [illegible] name, I will do *it*."

[illegible]

[illegible]

115· Վարժութիւն

[Ժ]

1· Պետրոս, կը սիրէ՞ք գնտօթեւան խաղալ ինծ հետ։— Ինչու չէ (ո՛չ)։ Եթէ կը սիրէք ճիշդ հիմայ կրնանք երթալ։ Տեղը շատ հեռո՞ւ է ([illegible])։ — Քիչ մը։ — 2· Որքա՞ն վճարեցիք այդ բուրդին համար ([illegible])։— Ասիկա շատ լաւ բուրդ է· և կ'արժէ բաւական շատ (a quite deal)։— Ուսկի՞ց գնեցիք։ — Մեծ խանութէն։ — 3· Կարդացի՞ք ոգելիցներու նոր օրէնքի մասին այս առաւօտեան թերթերուն մէջ։— Ոչ, ի՞նչ էր, դուք ըսէք մեզի։— Գները պիտի բարձրացնեն։— Թող բարձրացնեն, ան աւելի լաւ։— 4· Արմէն, խաղցէք քրոջդ հետ այս տեղ, բայց մեծ մայրիկը որեւէ բանի համար չը ձանձրացնէք· ես հօր խանութը կ'երթամ և շուտով պիտի վերադառնամ։— Այո, մայրիկ, մենք պիտի խաղանք և բնաւ չը պիտի կռուինք։— 5· Թոյլ տուէք ինծ ձեզ ներկայացնելու եղբայրս Պետրոսը։ — Ուրախ եմ ձեզ հանդիպելուս։ — Ի՞նչպէս կը սիրէք Փարիզը։ — Շատ լաւ։ — 6· Ամեն Ուրբաթ աժան ապրանքի օր մ'է այս խանութին մէջ։ Այս խաչի գինն ի՞նչ է ([illegible])։— Ասիկա շատ պարզ է։— Ի՞նչ պիտի ըլլայ այս տաւիղի լեցուն գինը ([illegible])։— 7· Ի՞նչ գեղեցիկ ձև մ'ունի ասիկա։— Նորա, կրնա՞ք տաւիղ ածել։— Քիչ մը· բայց եղբայրս շատ աւելի լաւ կընուագէ քան գիս։ — Երբեկ քիչ մնաց նուագէի ([illegible])։— 8· Կը հաճէ՞իք վարագոյրը քիչ մը վեր հանել։— Հաճոյքով։— Բոլորովին մութ է հոս։— Այս յարկարաժինը վարձու է (to let) այնպէս չէ՞։— Այո։— 9· Լսեցի Ամերիկաի մէջ մաքուր ուտելիքի օրէնք մը կայ եղեր, դուք ի՞նչ գիտէք այդ մասին։— Իրաւ որ ես ալ կարդացի այդ մասին, շատ լաւ բան է· ամեն ուտելիք կը քննեն և կը գտնեն մաքուր է թէ ոչ։— 10· Այս աղնիւ մարդը պատգամաւորութիւն մ'ունի ձեզի. կուզէ՞ք զինք լսել։— Ինչու չէ, թո՛ղ ներս գայ։— Թոյլ տուէք ինծ ձեզ ներկայացնելու պաշտօնակիցս, Արայ Պետրոսը։— Շատ ուրախ եմ ձեզ հանդիպելուս։— 11· Եգիպտոսի մէջ քարոզչական կեդրոնի մը հանդիպեցանք, որը ամեն կերպով շատ հաճելի թուեցաւ մեզ։— 12· Նիւ Եօրքի մէջ շատ մեծ թուով լրագրավաճառ տղաներ և հարուստ վաճառատուններ կան։— Այս տղան կարծես քիչ մը վատառողջ կ'երեւայ։— Ձեր այդ արարքին մէջ հաճո՛ք մը չեմ տեսներ։— 13· Ձեր աղջիկներն ի՞նչ կ'արտադրեն։— Առատ խոտ։— Դուք ալ երբեմն

խոտի վրայ կը բանակուի՞ք։—Մենք ոչ երբէք կը բանակուինք, բացի արդարացի պատճառի մը համար։— 14· *Այս ի՞նչ ներկ է հոս։— Ես բերի, ամբողջ տունը պիտի ներկեմ· կ՚ուզէ՞ք որ ձեր յարկաբաժինն ալ ներկեմ։— Այո, եթէ կը հաճիք։ Նայեցէք այս նկարին, Փարիզի մէջ գնեցինք։—* 15· *Կը կարդա՞ք Պարսկաստանէն և Թուրքիայէն եկած լուրերը, ի՛նչ տխուր են։ Այո՛, ոչինչ աւելի տխուր կրնան ըլլալ քան այս առաւօտուան լուրերը· բազմաթիւ սպաննուածներ կան· կռիւը կը շարունակուի* (is going on)։— 16· *Օր մը* (a certain day) *երբ կը քալէինք, անցանք առաջին, երկրորդ և երրորդ անցքերը և հասանք չորրորդ անցքը, ուր անցքը արգիլուած գտանք։—* 17· *Մամուլը այս արարքին դէմ է· բայց նպաստաւոր է ողեւիցներու հարկի արարքին։— Երբ վարագոյրը բարձրանայ հինգերորդ արարուածը պիտի սկսի։—* 18· *Այդ ինչ է, տակաւին ածիլուած չես· ամօ՜թ, շատ ամօ՜թ· շուտ ածիլուէ՛, ու պարզ հագուիր որ երթանք, տեղը շատ հեռու է։—Ստոյգ։—Իրաւ։—* 19· *Այս գործիքը բաւական սուր է։— Բայց ոչ այնքան որքան իմինս՝։— Այս չափը որի՞նն է։— Իմս է· ու՞ր գտաք զայն։— Ծիշդ հոս էր։— Վաղը դիւրութիւն ունի՞ք (է ան դէ-րէն հօմըր ջեղ) զիս տեսնելու (թէ-ննէւ զէ-)։— Վաղը ոչ, բայց միւս օր կարելի է։—* 20· *Այս խանութը պիտի գոցուի Կիրակի օրերը (վէրօյ նէյ-կէ)։— Այս թուղթերուն մէջը նայեցէք Լոնտոնէն նամակ մը կա՞յ։— Այո, ահաւասիկ (հօօ է ան)։— «Ամեն մարդու ալ խաչ մը կայ, ինծի ալ խաչ մը կայ»։— «Թէ որ իմ անուանովս բան մը խնդրէք, անիկա պիտի կատարեմ»։*

116. *Վարժութիւն*

[*Հետեւեալ վարժութիւնը ընդօրինակելու է տետրակին մէջ նոյնութեանց և իւրաքանչիւր բառին տակէն նոյնձայն վանկով և նոյնաձայնք բառ մը գտնել ու գրելու է. Օրինակ,* Cora, *Nora*; faint, *paint.*]

Cora, ...	**by, ...**	**cost, ...**
faint, ...	**box, ...**	**curl, ...**
should, ...	**fold, ...**	**zeal, ...**
fame, ...	**full, ...**	**fig, ...**
all, ...	**fair, ...**	**big, ...**
arm, ...	**cornmeal, ...**	**back, ...**
childhood, ...	**aid, ...**	**baby, ...**
coarse, ...	**pay, ...**	**either, ...**
coat, ...	**going, ...**	**sick, ...**
cross, ...	**send, ...**	**brown, ...**

ԴԱՍ ԾԴ· (LESSON LIV.)

ՔԱՂՈՒԱԾՔ (REVIEW)

[Հետևեալ հարցումներուն պէտք պատասխանելու է աշակերտին [illegible] յետոյ [illegible] գիրքին մէջ գտնելով. անոնց հետ բաղդատելու է։]

1· Ի՞նչ է բայը։ Կանոնաւոր և Անկանոն Բայերը ինչո՞վ կը տարբերին իրարմէ։ Անկանոն բայերը դիւրաւ սորվելու համար ի՞նչ գիտնալու է։ Թէ Կանոնաւոր և Թէ Անկանոն բայերը ինչո՞վ կը տարբերին Կանոնաւոր և Անկանոն բայերէն։ Որո՞նք են Պակասաւոր բայերը և ինչո՞ւ Պակասաւոր կը կոչուին։ Ի՞նչ տեսակ բայերը Անդէմ կը կոչուին։

2· Ընդունելութիւնն ի՞նչ է։ Քանի՞ տեսակ Ընդունելութիւն կայ և ինչո՞վ կը զանազանուին իրարմէ։ Ո՞ր մէկ Ընդունելութիւնը կը գործածուի բաղադրեալ ժամանակներու մէջ։ Ո՞ր մէկ ընդունելութիւնը կը գործածուի յառաջդիմական խոնարհման մէջ։

3· Բայերուն քանի՞ եղանակներ կան և ինչո՞վ կը տարբերին իրարմէ։ Քանի՞ ժամանակներ կան և ի՞նչ տարբերութիւն ունին իրարմէ։ Անգլիերէն Սահմանական Անկատարի ու Կատարեալի միջև ի՞նչ տարբերութիւն կայ։ Սահմանական Կատարեալ և Գերակատարի միջև ի՞նչ տարբերութիւն կայ։ Ապառնի ժամանակ արտայայտելու համար, առանց shall և will գործածելու, ուրիշ ի՞նչ կերպ կայ։ Սահմանական Ներկայի և Անկատար ժամանակներուն միջև ի՞նչ տարբերութիւն կայ։

4· Ո՞ր բայերու քանի մը ժամանակներն ուրիշ բայերու աներևոյթ եղանակին հետ գործածուելով պարտաւորութիւն և [illegible] կը ցուցնեն. տուր երկ երկու օրինակ։ Եթէ հարցում ընող խօսքի մը բայը օժանդակ ունենայ. այդ խօսքին կարճ պատասխանը ի՞նչպէս ըլլալու է։

5· Shall և will իրարմէ ի՞նչով կը տարբերին թէ հարցական եւ թէ հաստատական խօսքերու մէջ. տուր մէկ մէկ օրինակ։

117. Վարժութիւն

[Ց] [Հ]

"Tell me with whom you associate, and I will tell you what you are."

"Well begun is half done." - says Hesiod.

2· Անցեալ ժամանակ ցուցնողներն

al-read'y (օլրէ՛տի)	արդէն
just now	ճիշդ հիմա
lately	վերջերս
re'cent-ly (րի՛յսընթլի)	վերջերս, մօտ ժամանակ
yesterday	երէկ
for'mer-ly (ֆօ՛րմըրլի)	առենօք, յանցելումն
ancient-ly (է՛յնշընթլի)	ի հնումն
once	անգամ մը, ժամանակաւ
here"to-fore' (հիյրթու-ֆօ՛ր)	յառաջագոյն, ասկէ առաջ
hith"er-to' (հիտհըրթու՛)	ցարդ, մինչև հիմա
since (սինս)	...էն ի վեր
till now (թիլ նաու)	մինչև հիմա
long a-go' (լանկ կամ լօնկ ակօ՛)	ի վաղուց հետէ, շատոնց
ere'while‡ (է՛յրհուայլ)	քիչ առաջ
erst (ըրսթ)	ի սկզբան

3· Ապառնի ժամանակ ցուցնողներն

to-morrow	վաղը
hereafter†	այսուհետև, ասկէ ետքը
hence"forth' (հէնսֆօռ՛թհ)	այսուհետև, ասկէ ետքը
hence"for'ward (հէնսֆօ՛ռուըրտ)	այսուհետև, ասկէ ետքը
by-and-by	հետզհետէ, մէկ պահիկէն
soon	շուտով
ere'long (է՛յրլօնկ)	ի մօտոյ
shortly	կարճ ի կարճոյ, համառօտելով

4· Յարաբերական ժամանակ ցուցնողներն

when	երբ
then (տհէն)	այնատեն
first	առաջին
just	ճշդապէս, իրաւացի
before	առաջ
after	ետքը
while (հուայլ)*, whilst (հուայլսթ)*	մինչդեռ
mean'while" (մի՛յնհուայլ)	միևնոյն ատեն

‡ Գրաբառ է, այժմ անգործածելի։

† Ինչ երկու բառերէ կը բաղկանայ։

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

as	*պէս, նման. մինչ*
till, un-til' (թիլ. ընթի՛լ)	*մինչև*
sea'son-a-bly (սի՛յզընըպլի)	*յարմար առթիւ*
be-times' (պիթա՛յմզ)	*յարմար ժամանակ*
early	*կանխաւ, կանուխկէկ*
late	*ուշ ատեն*
whenever‡	*երբ որ ալ ըլլայ*
aft'er-ward (է՛ֆթըրուըրտ)	*յետոյ, ապա*
aft'er-wards (է՛ֆթըրուըրտզ)	*յետոյ, ապա*

5· *Բացարձակ ժամանակ ցուցնողներն*

al'ways (օ՛լուէյզ)	*միշտ, հանապազ*
ever	*երբէք*
never	*բնաւ, ոչ երբէք*
aye (էյ)	*շարունակ*
e-ter'nal-ly (իթը՛րնըլի)	*մշտնջենապէս*
forever‡	*յաւիտեան*
per-pet'u-al-ly (փըրփէ՛չուըլի)	*յաւերժաբար*
con-tin'u-al-ly (քընթի՛նիուըլի(	*շարունակաբար*
in-ces'sant-ly (ինսէ՛սընթլի)	*անընդհատաբար*
end'less-ly (է՛նտլէսլի)	*անվերջ կերպով*
evermore‡	*միշտ, յարաժամ*
e''ver-last'ing-ly (էվըրլա՛սթինկլի)	*անվախճանաբար*

6· *Կրկնուած ժամանակ ցուցնողներն*

often, oft (օֆն, աֆն. օֆթ, աֆթ)	*յաճախ, շատ անգամ*
a-gain' (ըկէ՛ն)	*դարձեալ*
oc-ca'sion-al-ly (ըքքէ՛յժընըլի)	*պատահմամբ*
fre'quent-ly (ֆրի՛քուընթլի)	*ստէպ ստէպ*
sometimes‡	*երբեմն*
sel'dom (սէ՛լտըմ)	*քիչ անգամ, դուն ուրեք*
rare'ly (րէ՛յրլի)	*դուն ուրեք, հազիւ*
daily (տէ՛յլի)	*օրական, օրը մէկ անգամ [մը*
week'ly (ուի՛քլի)	*շաբաթական, շաբաթն անգամ*
month'ly (մը՛նթհլի)	*ամսական, ամսօրեայ*
year'ly (եի՛յրլի)	*տարեկան*
an'nu-al-ly (ա՛նիուըլի)	*տարուէ տարի*
once	*մի անգամ, անգամ մը*
twice	*երկիցս, երկու անգամ*
thrice *or* **three times**	*երիցս կամ երեք անգամ*

---

‡ *Այս երկու բառերէ կը բաղկանայ*

118. Վարժութիւն

[Ընդօրինակելու է հետեւեալ վարժութիւնը տետրակին մէջ, յետոյ գտնելու է ամէն մէկ նախադասութեան մէջի Մակբայներն ու ստորագծելու է. միեւնոյն ատեն ըսելու է թէ ամէն մէկ մակբայ ինչ տեսակ բառի մը (բայի, ընդունելութեան, ածականի թէ մակբայի) ժամանակը կը ցուցնէ։]

I am going now to the store.
He left the place immediately.
I told you twice already.
When was that?
He came in while you were addressing.
We will know all that by-and-by.
Formerly we used to live in Armenia, but presently we live in [America.
He will be here to morrow.
I have never met him.
You are late to-day, my dear girl.
Please be here early in the morning.
Is he here now?
You can always find a cause.
Do it now.
The cost of living is very high nowadays.

119. Վարժութիւն

[Հետեւեալ նախադասութիւններն նոյնպէս ընդօրինակելու է տետրակին մէջ, ու թողուած տեղերը պատշաճ ժամանակ ցուցնող մակբայներ դնելով։ Նայելու է որ նոյն մակբայը երկու անգամ չը գործածուի։]

We will go New York............
Can you read this book..................?
............will you see him?
............he was speaking no one left the room.
It is very warm............
You are..................to-day my little boy.
I shall see you..................
You must be here very........................in the morning.
I have been waiting here........................
Where were you........................?
You all can go home........................
May we see you.........?
Come.........my dear, I want to tell you something.
We are going to meet them........................
Was Bertha here........................?

վերը, բարձրը
վարը, ցածը
դէպի ետը
յառաջ, անդին. դուրսը
մէկդի. մէկուսի
ցամաքի վրայ, ծովուն եզերքը
հեռու, դուրս, տար աշխարհ,
բարձրերուն մէջ [օտար երկիր
դէպի տուն, բնակավայրը, եր-
դէպի ներս [կիրր
դէպի վեր
դէպի վար
դէպի ետև
դէպի յառաջ
[illegible] մը ցուցնողներն
ուսկից, ուրկէ
անկէ, հիմակուընէ, ուստի
անկէ, ան ատենէն, ուստի
հեռու, բացակայ
դուրս, դուրսը, բացակայ. յայտ-
նուած, լուսաւած. մարած, հատած
հեռու, հեռուէն, հեռուանց [illegible]
հեռուն, անդին, բաւական ան-
հեռուէն, ի հեռուստ, [illegible]
ցուցնողներն ([illegible])
առաջին, նախ
երկրորդ, երկրորդ արար
երրորդ, երրորդ արար
չորրորդ, չորրորդ արար, են.

[illegible] ([illegible])։
[illegible] մը վերջը [illegible] ([illegible])* [illegible]
[illegible], բառը Մակբայի կը վերածուի և
և կը համապատասխանէ Հայերէնի
[illegible] վերի արմատներուն։
[illegible] անուն մը վերջը ly (լի) մաս-
[illegible] չինել, ածական. յաճախ և մակբայ.
weekly, շաբաթական։ Բայց երբ ածա-
[illegible], այն կը չինէ Մակբայ. այսպէս
հարուստ [illegible] ([illegible])
)

Ժամանակի Բաժանումներն

second†	երկվայրկեան, մանրերկրորդ
minute	րոպէ, վայրկեան
a quarter of an hour	քառորդ ժամ
half an hour	կէս ժամ
three quarters of an hour	երեք քառորդ ժամ
an hour	ժամ մը
dawn	արշալոյս
morning	առաւօտ
forenoon	կէս օրէ առաջ
noon	կէսօր
afternoon	կէսօրէ վերջ
nightfall	մութը կոխած ատեն, ճրագ վառելու ատեն
twi'light" (թուա'յլայթ)	վերջալոյս
eve'ning	երեկոյ
night	գիշեր
mid'night" (մի'տնայթ)	կէսգիշեր
day	օր
yesterday	երէկ
day before yesterday	երէկ չէ առջի օր
to-morrow	վաղը
day after to-morrow	վաղը չէ միւս օր
week (ուիիք)*	շաբաթ
last (լասթ) week	անցեալ (վերջին) շաբաթ
week before last	անցեալ շաբաթ չէ առջինը
next (նեքսթ)* week	գալ շաբաթ
week after next	գալ շաբթու չէ միւսը
week day	լուր օր
week from to-day	այսօրուընէ շաբաթ մը վերջ
fort'night (ֆօ'րթնայթ)	երկու շաբաթուայ միջոցին
holy day	զատիկ օր
month	ամիս
year	տարի
cen'tu-ry (սէ'նչուրի)	դար
ju'bi-lee (ճու'պիլի)	յիսնամեակ
cen'te-na-ry (սէ'նթինըրի)	հարիւր տարուան, հարիւրամեակ
e-ter'ni-ty (իթը'րնիթի)	յաւիտենականութիւն

[Ժամանակի վերոգրեալ բաժանումները Անգլիերէններն գոց կրկնելու է երկու անգամ, յետոյ անգամ մ'ալ նոյնպէս գոց գրելու է տետրակին մէջ։]

---

† Գիտելու է սոյն բառի այս նոր նշանակութիւնը։
* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

120․ *Վարժութիւն*

[՝ խ]

1․ *Քանի՞ երկվայրկեան կայ մէկ րոպէին մէջ․ քանի՞ վայրկեան՝ մէկ ժամին մէջ։* — 2․ *Ժամը քանի՞ն է* (ինչ ժամանակ է անիկա (*it*)։ — *Տասնին քառորդ կայ* (անիկա (*it*) է քառորդ to տասն)։ — 3․ *Ո՞ւր էիք կէս ժամ առաջ։* — (Ես) *Թողուցի տունը ժամ մ'առաջ։* — 4․ *Առաւօտները ի՞նչ ատեն վեր կ'ելլէք* (ինչ ատեն [illegible])։ — *Ես միշտ կ'ելլեմ արշալոյսին։* — 5․ *Կէս օրին ո՞ւր պիտի ըլլաք։* — *Մեր տունը։* — 6․ *Կրնա՞ք գալ մեր խանութը կէսօրէն առաջ։* — *Ոչ կէսօրէն առաջ․ բայց կէսօրէն վերջը կրնամ։* — 7․ *Տեսա՞ք ի՜նչ գեղեցիկ վերջալոյս մը կար այս իրիկուն։* — *Այո, իրաւցնէ շատ գեղեցիկ վերջալոյս մ'էր։* — 8․ *Կէս գիշեր է․ ամեն ոք պէտք է իր տունը գնա․ դուք ալ չէ՞ք խորհիր այդպէս։* — *Անշուշտ։* — 9․ *Երէկ չէ առջի օր գնացինք մեծ մայրիկը տեսնելու* (տեսնել Մեծ մայրիկը)․ *ի՞նչու դուք ալ մեզ հետ չեկաք։* — *Ժամանակ չունէինք* (չունէինք ժամանակ)։ — 10․ *Վաղը չէ միւս օր պիտի երթանք հօրեղբայրս տեսնել․ կը խորհիմ Պետրոս քեռին ալ հոն պիտի ըլլայ։* — 11․ *Ե՞րբ պիտի սկսիք այդ գիրքը կարդալ։* — *Այսօրուընէ շաբաթ մը վերջ։* — 12․ *Գրեցի՞ք Լոնտոն այդ խնդրոյ մասին։* — *Շատոնց, անցեալ շաբաթ չէ առջի շաբաթը գրեցի։* — 13․ *Այսօր լուր օր է՞ թէ զատիկ։* — *Այսօր զատիկ օր է․ Ուաշինկդընի ծննդեան օրն է։* — 14․ *Տարուան մէջ քանի՞ ամիս կայ։* — *Օ՜հ անշուշտ ամեն մարդ ալ գիտէ այդ, տասներկու։* — 15․ *Քանի՞ տարի կ'ընէ դար մը։* — *Հարիւր տարին կ'ընէ դար մը։* — 16․ *Թուրքիոյ Հայերը այս տարի առաջին անգամն ըլլալով տօնեցին* Մկրտիչ Փորթուգալեանի* (Mgrdich Portoukalian) *յոբելեանը․ դուք ալ տօնեցի՞ք ձեր տեղին մէջ։* — *Այո, մենք ամեն արժանաւոր անձի յոբելեանը կը տօնենք։* — 17․ *Ցաւխտենականութիւնը վերջ չունի, այնպէս չէ՞ հայրիկ։* — *Այո, սիրելի տղաս։* — 18․ *Մենք, բոլորս յաւիտենականութեան համար պէտք է պատրաստուինք։* — *Անշուշտ։* — 19․ *«Ըսէ՛ ինծի քու ընկերներդ, ըսեմ քեզի քու ի՛նչ ըլլալդ»։* — 20․ *«Եթէ առաջին անգամ չը յաջողիս, նորէն ու նորէն փորձէ* (թրայ, թրայ նորէն)։

---

* to cel'e-brate (սէ՛լիպրէյթ) *տօնել, տօնախմբել*

ԴԱՍ ԾԶ· (LESSON LVI.)

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ· — *Շարունակութիւն Մակբայներու։*

(Տեսնել նաև Երես 210–212)

[Զ]

Բ· Տեղ ցուցնողներն* (Տեղական Մակբայ), *որոնք կը պատասխանեն* Where?** Ո՞ւր, ***Whith'er (հուի'դհըր) Ո՞ւր տեղ, ***Whence*** (հուէնս*) Ուսկի՞ց, ո՞րմէ՞, ուստի՞ կամ ***Whereabout?***† Ո՞ւրտեղ, ո՞ր կողմ հարցման։

Տեղական մակբայներն ալ կարելի է ստորաբաժնել չորս տեսակի։

1· Տեղի մը ճիշդ ցուցնողներն

where	*ուր, ուր տեղ*
here	*հոս, այս տեղ*
there	*հոն, այնտեղ*
yon'der (եա'նտըր)	*հոն* (յիշատակ ցցուցած հեռու տեղ մը)
above	*վերը*
be-low' (պիլօ')	*վարը· տակը*
about	*չուրջանակի, բոլորտիքը*
a-round' (ըրա'ունտ)	*չուրջը, աստ անդ*
somewhere†	*տեղ մը, ուրեք*
anywhere†	*որևիցէ տեղ*
elsewhere†	*ուրիշ տեղ, այլուր*
otherwhere†	*միւս տեղ*
everywhere†	*ամեն տեղ*
nowhere†	*ոչ ուրեք*
wherever†	*ուր որ*
wheresoever†	*ուր որ ալ, ուր ալ*
within†	*ներսը, ներսէն· մօքէն*
without†	*դուրսը, դրսէն*
whereabout†, whereabouts	*ուր տեղ, որ կողմ*
hereabout†, hereabouts	*այս կողմերը, չուրջանակի*
thereabout†, thereabouts	*մօտաւորապէս, գրեթէ*

2· Դէպի տեղ մը ցուցնողներն

whith'er (հուի'դհըր)	*ուր, ուրտեղ*
hith'er (հի'դհըր)	*դէպի այստեղ, յայսկոյս*
thith'er (դհի'դհըր)	*դէպի այնտեղ, յայնկոյս*
in	*մէջը, ներսը*

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

† Սոյն բառը ինչ տարբեր բառերէ կը բաղկանայ։

up	վեր. բարձր
down	վար. ցած
back	դէպի ետ
forth (ֆօրթ)*	յառաջ. անդին. դուրս
a-side' (ըսայտ)	մէկդի. մէկ կողմ
a-shore' (ըշօր)	ցամաքին վրայ. ծովուն եզերքը
a-broad' (ըպրօտ)	հեռու. դուրս. օտար աշխարհ.
a-loft' (ըլօֆթ)	բարձրերուն մէջ [illegible] երկնք
home, homeward‡	դէպի տուն. բնակարանը. եր-
inward‡, inwards‡	դէպի ներս [կիրը
upward‡, upwards‡	դէպի վեր
downward‡, downwards‡	դէպի վար
backward‡, backwards‡	դէպի ետև
forward‡, forwards‡	դէպի յառաջ

3. Տեղի մը ցուցնողները

whence	ուսկից. ուրկէ
hence (հէնս)*	ասկէ. հիմակուընէ, ուստի
thence (տհէնս)*	անկէ. ան ատենէն, ուստի
a-way' (ըուէյ)	հեռու, բացակայ
out	դուրս. դուրսը. բացակայ. յայտնուած, լռուած. մարած, հատած
off	հեռու, հեռուէն, հեռացած [գին
far	հեռուն. անդին. բաւական ան-
re-mote'ly§ (րիմօթլի)	հեռուէն, ի հեռուստ, թեթևօրէն

4. Տեղի մը կարգը ցուցնողները (Դասական Մակբայ)

first	առաջին, նախ
secondly§	երկրորդ, երկրորդաբար
thirdly§	երրորդ, երրորդաբար
fourthly§, etc.	չորրորդ, չորրորդաբար, ևն.

* Շեշտը [illegible] (Տ.ս. [illegible]).

‡ ԿԱՆՈՆ. — Եթէ բառի մը վերջը ward (ուորտ)* wards (ուորտզ)* մասնիկն աւելցուի, բառը Մակբայի կը վերածուի և կը նշանակէ ուղղութիւն. և կը համապատասխանէ Հայերէնի մէջ դէպի բառին. տեսնել վերի օրինակները։

§ ԿԱՆՈՆ. — Երբ Գոյական անունի մը վերջը ly (լի) մասնիկը աւելցնենք զայն կը չինէ ածական. յաճախ և մակբայ. ինչպէս, week, շաբաթ. week*ly*, շաբաթական։ Բայց երբ ածականի մը վերջը աւելցնենք, զայն կը չինէ Մակբայ. օրինակ, rich, հարուստ. rich*ly* հարուստ կերպով։ (Տեսնել և վերի օրինակները — Երես 92. Դէտ. 2։)

Գ. Աստիճան ցուցնողներն (Աստիճանական Մակբայ), որոնք կը համապատասխանեն *How much?* Ո՞րչափ կամ *How little?* Ո՞րչափ քիչ (պզտիկ) հարցման։

Աստիճանական Մակբայներն ալ կարելի է ստորաբաժնել նոյնպէս չորս տեսակի,

Ա. Առաւելութիւն կամ առատութիւն ցուցնողներն
(Առաւելական Մակբայ)

much	շատ, կարի, յոյժ
more	աւելի շատ, աւելի ևս, ալ
most	ամենէն շատ, առաւելապէս, չափէն աւելի, չափազանց խիստ
too	ալ, նաև, ևս, նմանապէս [շատ
very	շատ, յոյժ, կարի
greatly‖	մեծապէս [դին
far	հեռուն, անդին, բաւական ան-
be-sides' (պիսա՛յտզ)	ևս, ալ, աւելի, դարձեալ
chief'ly‖ (չի՛յֆլի)	գլխաւորապէս. մանաւանդ
prin'ci-pal-ly‖ (փրի՛նսիփըլի)	գլխաւորաբար. մանաւանդ
main'ly‖ (մէ՛յնլի)	գլխաւորաբար. մանաւանդ
most'ly‖	մեծաւ մասամբ
gen'er-al-ly‖ (ճէ՛նըրըլի)	ընդհանրապէս, առհասարակ
en-tire'ly‖	ամբողջովին, լիովին
full	լիովին, անթերի [ւոյն
fully‖	լիովին, բոլորովին, ըստ արժան-
completely‖	կատարելապէս, լիուլի
perfectly‖	կատարելապէս, ամբողջովին
whol'ly‖ (հօ՛լի)	ամբողջովին, բոլորովին
to'tal-ly‖ (թօ՛թըլի)	բովանդակ կերպով, ամբողջովին
al''to-geth'er (օլթուկէ՛տհըր)	բոլորն ի միասին, առանց բացառութեան, ամենքը մէկտեղ
all	բոլորովին,
quite	լիովին, բոլորովին
clear	ամբողջովին. որոշ
stark (ը)սթարք)*	բոլորովին, գլխովին, բացարձակ
exceedingly‖	գերազանց կերպով
ex-cess'ive-ly‖ (էքսէ՛սիվլի) [լի	յանչափս, չարաչար
ex-trav'a-gant-ly (էքսթրա՛վըկընթլի)	չռայլաբար

‖ Ի՞նչ է այս բառի արմատը կամ ածականը։
* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

—

er-a-bly (ինթա'լըրէպլի)	անհանդուժելի կերպով
eas'ur-a-bly (իմէ'ժուրէպլի)	անչափելի կերպով
ı-ceiv'a-bly (ինքընսի'վէպլի)	անըմբռնելի կերպով
ite-ly (ի'նֆինիթլի)	անհունօրէն

Հաւասարութիւն կամ բաւականութիւն ցուցնողներն

h	բաւական
cient-ly‖ (սըֆֆի'շընթլի)	ըստ բաւականին
e-tent-ly‖ (քա'մփիթընթլի)	բաւական կարող կերպով
uate-ly (ա'տիքուէյթլի)	պէտք եղած չափով
or'tion-al-ly (փրօփօ'րշընըլի)	համեմատաբար
-ly‖ (ի'քուըլի)	հաւասարապէս
	այսպէս, սոյնպէս, անանկ
	պէս, նման, իբր թէ, որպէս թէ,
	զոր օրինակ
(ի'վըն)	նոյն իսկ. մինչև անգամ
	արդարացի, իրաւացի
y‖	ճշդիւ, ճիշդ ու ճիշդ [այս.
se'ly‖ (փրիսա'յսլի)	ճշդիւ, ճշդութեամբ. համա՛.

Նուազութիւն ցուցնողներն (Նուազական Մակբայ)

	քիչ, քչիկ մը
	աւելի քիչ, ոչ այնքան, նուազ
	ամենէն քիչ
ly (ը)րէ'յրլի)	հազիւ հազ, շատ քիչ անգամ
y	դժուարաւ
ly (ը)րէ'նթլի)	հազիւ բաւական կերպով, բա-
	ւականէն նուազ կերպով. խեղ-
	ճօրէն, գձուձ կերպով
i-ly (ը)րէ'նթիլի)	հազիւ, դժուարաւ
ly (մի'յրլի)	պարզապէս
y (պէ'յրլի)	խեղճուկ կերպով. մերկ
	միայն, լոկ, սոսկ [աւելի քան
	միայն, ոչ ուրիշ կերպ քան, ոչ
(փա'րթլի)	մասամբ
ıl-ly (փա'րշըլի)	մասամբ. աչառութեամբ
	մօտաւորապէս, գրեթէ
ıt	գրեթէ
gh	գրեթէ
ıite	ոչ բաւականին

Ի՞նչ է այս բառի արմատը կամ ածականը։

4. Վերացեալ քանակութիւն ցուցնողներն
(Վերացական-քանակական Մակբայ)

how	ի՞նչպէս (ի՞նչ աստիճան մը)
however†	այսու ամենայնիւ, սակայն
how so-ev'er (հաուսօէ՛վըր)	ո և է կերպով
everso	շատ
something	բան մը
anything	ո և է բան մը
nothing	ոչինչ
a groat (կրօթ)*	դանկ մը, ընիոն մը
a sixpence (սիքսփէնս)	կէս շիլինոց
a sou-marquee etc. (սու՛մարքէյ)	փուճ, չնչին բան, յումպէտս

Դ. Կերպ. Որպիսութեան կամ Տեսակ ցուցնողներն, որոնք կը պատասխանեն *How*, ի՞նչպէս հարցման. կամ հաստատելով, կամ ժխտելով և կամ տարակուսելով։

Այս Մակբայներն ալ կարելի է ստորաբաժանել հինգ տեսակի.

1. Որպիսութիւն կամ Որակութիւն ցուցնողներն
(Որակական Մակբայ)

well	լաւ, աղէկ
ill	գէշ, չարաչար կերպով [պով
wisely†	իմաստութեամբ, իմաստուն կեր-
foolishly§	յիմարաբար
justly	արդարութեամբ, ուղղութեամբ
wick'ed-ly (ուի՛քէտլի)	չարութեամբ

---

† Այն բառը ի՞նչ տարբեր բառերէ կը բաղկանայ։

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

† ԾԱՆ. ա.— Այս *ly* վերջաւորող Մակբայներուն պէս կանոնաւորիչ շատեր, որոնք կը շինուին որպիսութիւն ցուցնող ածականներուն վրայ *ly* մասնիկն աւելցնելով (Տես՝ եր. 217). որը կըհամապատասխանէ Հայերէնի մէջ ...պէս և ...աբար մասնիկներուն և կերպով բառին. տեսնել վերի օրինակներն։

բ.— ...*ly* մասնիկը Անգլօ-Սաքսոն *lic* կամ *like* բառի համառօտութիւնն ու Անգլիերէն Մակբայներու ամենէն հասարակ վերջաւորութիւնն է։

§ ԿԱՆՈՆ.— Բառի մը վրայ *ish* (իշ) մասնիկը աւելցնելով անոր աւելի նուազական ածականի իմաստ կու տայ. այսպէս fool, յիմար. fool*ish*, յիմարութեան մօտեցած. քիչ յիմար, յիմարական։

2· *Հաստատութիւն կամ Հաւանութիւն ցուցնողներն*
(Հաստատական Մակբայ)

yes — *այո՛* (Ռմկ. Հըմէրէս)
yea (եէյ)* — *այո՛, յիրաւի, արդարև*
ay, aye — *այո՛, հա*
ver'i-ly (վէ'րիլի) — *ճշմարտիւ, ստուգիւ· ամէն*
truly — *ճշմարտիւ, իրաւցնէ*
indeed — *ստուգիւ, արդարև*
sure'ly — *ապահովապէս, հաստատապէս*
certainly — *ստուգիւ, անշուշտ*
doubt'less† (տ'աութլէս) — *անտարակոյս, աներկբայ*
undoubtedly — *անկասկած կերպով*
as-sur'ed-ly¶ — *ապահովարար, վստահարար*
cer'test‡ (սըր'թէսթ) — *անտարակոյս* [Ռմկ. հա է

for-sooth'‖ (ֆօռսօ'թհ) — *ճշմարիտ, իրաւ որ, շատ աղէկ*
a''men' (էյմէ'ն, ամէն) — *ամէն, եղիցի, թող ըլլայ, իրաւցնէ*

Բացասականութիւն կամ Ժխտում ցուցնողներն
(Բացասական կամ Ժխտական Մակբայ)

no, not, nay (նէյ) — *ոչ, չէ*
nowise, noway, noways — *ոչ երբէք, ամենևին*
nohow — *ոչ մի կերպով* (Ռմկ.)

4· *Տարակոյս կամ Անորոշութիւն ցուցնողներն*
(Երկբայական կամ Տարակուսական Մակբայ)

per-haps' (փըրհէ'փս) — *գուցէ, թերևս*
hap'ly (հէ'փլի) — *պատահարար*
pos'si-bly (փօ'սիպլի) — *հնար է. թերևս. հաւանականաբար*
per-chance' (փըրչա'նս) — *պատահմամբ, թերևս*
per''ad-ven'ture (փէրէտվէ'նչըր) — *եթէ երբէք, թերևս*
may-be — *կարելի է*

5· *Եղանակ կամ կերպ ցուցնողներն* (Եղանակական Մակբայ)

thus (տհըս) — *այսպէս, սանկ*
so — *այսպէս, սանկ· տանկ, անանկ*
how — *ինչպէս, ինչ*
somehow — *կերպով մը*

---

† doubt (տաութ – մէկ վանկ) *կասկած* to doubt, *կասկածիլ*

¶ to as-sure' (աշօ'ւր) *ապահովել, վստահացնել։*

‡ Գրաբառ է այժմ անգործածական է։

‖ Այս բառը առաջներ հաստատութիւն կամ հաւանութիւն ցոյց տալու համար կը գործածուէր, մինչ հիմայ սոսկ հեգնելու համար կը գործածուի։

nohow†	ոչ մի կերպով
anyhow†	ինչև իցէ, ո և է կերպով [կերպով
however†	այսու ամենայնիւ, սակայն, ո և է
howsoever†	ո և է կերպով. տակաւին
like	նոյնպէս, նոյն կերպով
else	եթէ ոչ. ուրիշ կերպ
otherwise*	ուրիշ կերպ. եթէ ոչ, ապա թէ ոչ
a-cross' (ըքրո՛ս)	խաչաձև, խոտորնակի
to-geth'er (թուկէ՛տհըր)	միասին, միատեղ
a-part' (ըփա՛րթ)	զատ, ուրոյն, առանձին
a-sun'der (ըսը՛նտըր)	ուրոյն, իրարմէ զատ
namely	այսինքն, որ է
par-tic'u-lar-ly (փարթի՛քիուլըրլի)	մասնաւորաբար
nec'es-sa"ri-ly (նէ՛սէսէրիլի)	ի հարկէ
hes'i-ta"ting-ly (հէզի՛թէյթինկլի)	վարանմամբ
trip'ping-ly (թրի՛փինկլի)	արագութեամբ, թեթևօրէն
ex-tem'po-re (էքսթէ՛մփօրի, էյ)	յանպատրաստից
ex-tem"po-ra'ne-ous-ly (էքսթէմփօրէ՛յնիըսլի)	յանպատրաստից
headlong†	գլխիվայր
lengthwise§	երկայնութեանը, երկայնքին

Այս վերոյգրեալներէն ի զատ կան տեսակ մ'ալ Մակբայներ, որոնք նախադասութիւն մը ուրիշ նախադասութեան մը հետ կապելու կը ծառայեն, մի և նոյն ժամանակ արտայայտելով ժամանակի, տեղի, պատճառի, ևլն. մի որ և է պարագայն կամ հանգամանքը, այս պատճառաւ և կը կոչուին Կապակցող կամ Շաղկապական Մակբայներ. *և որոնք առ հասարակ մէկէ աւելի բայեր կը յարաբերեն. ասոնք թուով շատ քիչ են և կ'ստորաբաժնուին երկու կարգի,*

1. Պատճառ ցուցնողներն

why	ինչո՞ւ, ի՞նչ դիտաւորութեամբ
where fore	ի՞նչ պատճառաւ, ի՞նչ նպատակաւ
there'fore	այս կամ այն պատճառաւ

---

† Այս բառը ի՛չ տարբեր բառերէ կը բաղկանայ։

§ length (լէնկթհ) *երկարութիւն։*

* ԿԱՆՈՆ.— *Երբ բառի մը վերջը ly կամ wise մասնիկը աւելցնենք, բառը մակբայ կը դառնայ և կը նշանակէ կերպ. ինչպէս* like, *նման* like*wise*, *նմանապէս։*

2. Դերանուանական բաղադրուածներն

herein	ասով. հոս, այստեղ
therein	ատով, անով. հոն, այնտեղ
wherein, etc.	յորում, ուր

Հետեւեալներն ալ առ հասարակ կը գործածուին իբր կապակցող Մակբայներ. after, again, also, as, before, besides, con'se-quent-ly (քա՛նսիքուէնթլի — հետեւաբար) else, ere, even, furthermore,† hence, how, however, moreover, neverthless otherwise, since, so, still,‡ till, then, thence, therefore, too, until, when, where, wherefore, whither եւ while կամ whilst.

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ժամանակական, Տեղական եւ Որակական մակբայներն առ հասարակ բայերու եւ ընդունելութիւններու վրայ կը դրուին. մինչ չափականական մակբայներն աւելի շատ ածականներու կամ մակբայներու վրայ՝։

2. Քանի մը բառերէ բաղկացեալ մակբայներն երբեմն ինչ բառերէ որ կը բաղկանան, անոնց նշանակութիւնը կը պահեն. ինչպէս, *not so*, ոչ այդպէս. երբեմն ալ բոլորովին տարբեր նշանակութիւն մը կուտան. ինչպէս, *in order*, որպէսզի։

3. *There* մակբայը եթէ դրուի այնպիսի բայի մը վրայ, որոյ տէր բային բայէն ետքը դրուած ըլլայ, անոր նշանակութիւնը չի փոխեր. այսպէս, *there* came to the beach* a poor man, ծովեզերքը աղքատ մ'եկաւ։

4. *Too* մակբայը բայի հետ գործածուած ատեն կը նշանակէ ալ. իսկ ածականի կամ մակբայի հետ՝ կը ցուցնէ չափէ աւելի. ինչպէս, He was there *too*, ինքն ալ հոն էր. It is *too* warm, չափէ աւելի տաք է. That is *too* much, չափէ աւելի է անիկա։

5. Ածականներէն ոմանք ինչպէս *ly* մասնիկով մակբայ կ'ըլլային (Տեսնել Երես 217 եւ 220), նոյնպէս ոմանք ալ *in* բառը նախադասելով մակբայ կ'ըլլան. ինչպէս, *in* gen'er-al (ճէն՛ըրըլ — ընդհանուր) ընդհանրապէս։

Բառեր ալ կան իրենց սկիզբը *a* մասնիկը առնելով մակբայ կ'ըլլան, և Հայերէն վրայ, մէջ բառերուն նշանակութիւնը կուտան. այսպէս *a*shore (նոյն at կամ on shore), ծովեզերքին վրայ. *a*sleep (նոյն *in* sleep), քունի մէջ։

---

† fur'ther (ֆը՛րտհըր) աւելի հեռուն բաղդատականն է forth բառին։

‡ still (ս)թիլ — [illegible]) այս կամ այն ատեն. տակաւին։

* beach (պիյչ) ծովեզերք։

ՄԱԿԲԱՅՆԵՐՈՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Մակբայներն եթէ երբեք փոփոխութիւն մը կրեն, այն ալ իրենց բաղդատութիւնն է։

1· Մակբայներն ալ Ածականներու պէս կրնան բաղդատուիլ. մեծ մասամբ Բ. Մէթոտով (Տեսնել երես 78-79)· քիչերն կը բաղդատուին Ա. Մէթոտով. ինչպէս, soon, sooner, soonest; fast,* faster, fastest։

2· Հետեւեալներն կը բաղդատուին անկանոն կերպով, well, better, best; badly կամ ill, worse, worst; little, less, least; much, more, most; far, farther, farthest; fort, fur'ther, fur'thest (ֆըրթհէսթ): rath (րէթհ) ժամանակին, rath'er (րա'թհըր) աւելի լաւ է, լաւ եւ. մանաւանդ, rath'est (րա'թհէսթ) ամենէն աւելի լաւ է. այս վերջինոյն միայն բաղդատականը կը գործածուի։

3· Ly վերջաւորող Մակբայներն առ հասարակ Բ. Մէթոտով կը բաղդատուին։

121· Վարժութիւն

[Ընդօրինակելու է հետեւեալ վարժութիւնը տետրակին մէջ, յետոյ գտնելու է ամէն մէկ նախադասութեան մէջի Մակբայներն ու ստորագծելու է. միեւնոյն ատեն որոշելու է թէ ամէն մէկ մակբայ ինչ տեսակ բառի մը (բայի, ընդունելութեան, ածականի թէ մակբայի) մէկ պարագան կը ցուցնէ։]

Here he is. There he goes.

"I will also ask of you one question."

Where are you going now?

He came in first.

"Say well is good, but do well is better."

"And whatsoever ye do, do it heartily."

"And straightway he will send him thither."

"Wisdom crieth without."

"Ye can not tell whence I come."

"For scarcely for a righteous man will one die: yet peradventure for a good man some would even dare to die." Rom. v., 7.

Are you sure of that? Perhaps he was not there.

"If the son therefore shall make you free, ye shall be free indeed."

"Who knows her whereabouts?"

"The gate whereby he passed,"

---

* fast (ֆասթ) ամուր, հաստատ. արագ արագ։

...der he lies, by the side of the old church.
She is at home wherever she is."
That looks exceedingly beautiful.
He is stark mad.
Generally speaking we are all free.
I had scarcely spoken, when he came in.
He spoke very well of you indeed.
There were wellnigh a thousand men.
"It is inconceivable to me that man should ever fly."
He was one of Washington's aides* .... when he was barely twenty years old.
The question was put barely before them.

122. *Վարժութիւն*

[*Հետեւեալ նախադասութիւններն նոյնպէս ընդօրինակելու է տետրակին մէջ, բայց ձգուած տեղերը պատշաճ մակբայներ դնելով։ Նայելու է որ միեւնոյն մակբայը երկու անգամ չը գործածուի։*]

"........., ..., I say unto you, If a man keep my saying, he shall .... see death."
.... is one likely to find it?
I have not .... of it. It is ....
We are .... right. I know .... of him.
He has been .... good to me.
You can be .... about it. I met him in London ....
.... he will come ....
They sailed .... on the twenty fifth of September.
"Thou shalt .... help him."
"And they came .... into the house."
"We .... will be with you."
"And .... he came ....
"................. went I up in the ....
"Be not .... from me." That is .... true.
It is .... done. That is .... what I want.
That is .... done .... I am .... ready.
"And .... earlier every year,
Our singing birds take wing." — Lowell.
.... I will tell you about it. It isn't worth a ....
I like it .... "We all are borne .... to die."

---

* aid *կամ* aide *օգնական* aide-de-camp (*էյտ-տը-քէմփ*) *համհարզ* (*Տճկ. եավէր*)։

ԴԱՍ ԾԷ. (LESSON LVII.)

[Ն]

wolf	(ուուլֆ)	գայլ
lamb†	(լէմ)	գառ
lamp†	(լէմփ)	կանթեղ, լապտեր
thirst	(թըրսթ)*	ծարաւ, իղձ, տենչանք
thirst'y	(թը՛րսթի)	ծարաւի
clear	(քլիյր)*	վճիտ, յստակ, ջինջ
stream	(ս)թրիյմ)*	Ջրի հոսանք (Տես. առոգ. հնչիւն)
ground	(կրաունտ)*	գետին, հող
yard	(եարտ)*	Ամերիկեան կամ Անգլիական կանգուն
meal	(միյլ)	անգամի մը կերակուր (Տե՛ս. Եօյլա)
feast	(ֆիյսթ)	խնջոյք, կոչունք, տօնախմբութիւն
cry	(քրայ)*	ճչիւն, աղաղակ
rage	(րէյճ)	ցասում, կատաղութիւն
bold	(պօլտ)	յանդուգն
mud	(մըտ)	տիղմ, ցեխ
lie	(լայ)	սուտ
lie	(լայ)	մոխրաջուր
fox	(ֆա՛քս)*	աղուէս
blood	(պլըտ)*	արիւն
blood'thirsty‡		արեան ծարաւի
rav'enous	(րա՛վ(ը)նըս)	անյագ, անկուշտ, գիշատիչ
sheep‖	(շիյփ)	ոչխար
a-fraid'	(աֆրէ՛յտ)	վախով, երկիւղալի
sure'ly	(շօ՛ւրլի)	վստահ կերպով, անպատճառ
mis-take'	(միսթէ՛յք)	սխալ
meek	(միյք)	հեզ
im'pu-dent	(ի՛մփիուտընթ)	լպիրշ, լիրբ, անամօթ
ras'cal	(րա՛սքալ)	սինլքոր, սրիկայ
up-on'	(ըփա՛ն)	վրայ
fa'ble	(ֆէ՛յպլ)	առակ
help	(հէլփ)	օգնութիւն

---

† Դիտէ lamb և lamp բառերու տարբերութիւնները։

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

‡ Այս բառը երկու տարբեր բառերէ կը բաղկանայ։

‖ Կան բառեր, որոց Յոգնակիները նոյնն են. ինչպէս, sheep, ոչխար· sheep, ոչխարներ։

helpless‡		անօգնական
to quench	(քուէնչ)*	ծարաւը անցնել [ուիլ
to clear		պարզել, լուսաբանել. օդը բաց-
to ground		գետինը դնել, հաստատել, հիմ- նել, աղէկ սովրեցնել
to fall		հետը իյնալ. իյնալ, կործանիլ
to cry		պոռալ, գոչել, աղաղակել. լալ
to stir	(ը'սթըր)*	խառնել, շարժել, ցնցել
to spoil	(ըսփոյլ)*	աւրել, խանգարել, եղծանել
to an'swer†		պատասխանել
to reply'†	(րիփլա՛յ)	պատասխանել [կենալ
to lie§		պառկիլ, երկննալ, տարածուիլ,
to lie§		ստել
to lie in		ծննդաբեր (փղաջկան) ըլլալ
to be afraid		վախնալ
to bear	(պէյր)	ծնանիլ. կրել. համբերել
to ex-claim'	(էքսքլէ՛յմ)	բացագանչել, գոչել
to howl	(հաուլ)*	գայլի ոռնալ
to dare	(տէյր)	համարձակիլ, յանդգնիլ
to con''tra-dict'	(քոնթրատի՛քթ)	հակառակախօսել, դիմադար- ձութիւն ընել
to fly		թռչիլ
to cause		պատճառել

‡ ԿԱՆՈՆ. Եթէ Գոյական անուան մը վերջը *some* (սըմ), *ful* (ֆուլ), կամ *less* (լէս) մասնիկն աւելցնենք, Գոյականը Ածականի կը փոխուի և կը ցուցնէ առատութիւն կամ պակասութիւն: Սովորաբար *ful* մասնիկը Հայերէնի մէջ ալ, լեցուն բառին կը համապատասխանէ մինչ *less* մասնիկը բացասական մասնիկներուն. այսպէս, troub'le (թրը՛պլ) նեղութիւն, վիշտ, ձանձրոյթ — trouble*some*, նեղիչ, ձանձրացուցիչ. fruit, պտուղ— fruit*ful*, պտուղով լեցուն, պտղաբեր, պտղատու — fruit*less*, անպտուղ. help, օգնութիւն — help*less*, անօգնական: (Տեսնել նաև երես 55:)

† to answer կը նշանակէ պատասխանել հարցման մը. մինչ to reply կը նշանակէ պատասխանել պատճառաբանեալ իրայայտութեան մը, անոր հակառակ պատճառաբանելով: (Ռմկ. կ'ըսուի խօսքը ջրել:)

§ to lie, պառկիլ և to lie, ստել երկու բայերու տարբերութիւններն պէտք է գտնել իրենց գլխաւոր մասերէն. առաջինը անկանոն բայ է, մինչ վերջինը կանոնաւոր:

123. Վարժութիւն

[Ն]

THE WOLF AND THE LAMB

. One day a wolf and a lamb came at the same time to quench their thirst in a clear stream. The wolf stood to drink, where the ground was high; while the lamb stood some yards off down the stream. As the wolf had had no meal that day, he thought, if he could but fall out with the lamb, he could eat him up, and so get a good feast. So he cried out in a great rage to the lamb. "What makes you so bold as to stir up the mud in the stream, and so spoil my drink?"– "Sir," says the lamb, "that I can not do; for, the stream runs down this way from you to me, and not from me to you as you say."

"Be it so," answered the wolf, "but what will you say, when I tell you I have heard all the lies which you told the fox about me, a year ago, saying that I am a bloodthirsty, ravenous creature, and that the sheep are all afraid of me?"

"That is surely a mistake," meekly replied the lamb, "for I never met the fox, and a year ago I was not born. I am only six months old."

"It was your brother, then," exclaimed the wolf. "On my honor, sir, I never had a brother," replied the lamb. "Impudent rascal!" howled the wolf, "how dare you contradict me so!" So saying he flew upon the helpless lamb and ate him up.

From this fable we learn that those who wish to quarrel can always find cause.

ԴԱՍ ԾԸ. (LESSON LVIII.)

[Ձ]

CON-JUNC'TIONS (քընճը՛նքշընս – կցորդութիւն) ՇԱՂԿԱՊՆԵՐ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Շաղկապ կը կոչուին այն բառերը, որոնք բառ մը ուրիշ բառի մը հետ, կամ խօսք մը ուրիշ խօսքի մը հետ և կամ նախադասութիւն մը ուրիշ նախադասութեան մը հետ կը կապեն, և այսպէս կապուածներուն ալ իրարմէ ինչ կախում ունեցած ըլլալը կը ցուցնեն. ինչպէս, "Thou *and* he are happy, *because* you are good." *«Դու և ինքն երջանիկ էք, որովհետեւ աղէկ (բարի) էք» խօսքին մէջ* and *և because Շաղկապներ են, որովհետեւ առաջինը* Thou *և* he *բառերն իրարու հետ կը կապէ, մինչ վերջինը* Thou and he are happy *և* you are good *նախադասութիւններն իրարու հետ կը կապէ։*

ԴԻՏ.— Նկատելու է որ Շաղկապներն ինքնին խօսքի մը իրական նիւթին վրայ որ և է բան չեն արտայայտեր, այս իսկ պատճառաւ ալ Արիստոտէլ և իր հետեւողներն Շաղկապներն նշանակութենէ զուրկ բառեր կը ճանչնային։ Իրենց միակ պաշտօնն է իրարու կապել։

ԴԱՍԱԿԱՐԳԵՐ

Անգլիերէնի մէջ՝ Ներկայիս Շաղկապներն երկու ընդհանուր դասակարգերու կը բաժնուին, որոնք կը կոչուին Բաղհիւսական (cop'u-la-tive – քա՛փիւլէթիվ – *իրարու հետ հիւսող*) *և* Տրոհական (dis-junct'ive – տիսճը՛նքթիվ – *իրարմէ զատող, իրարու հակառակող*)։ *Այս իւրաքանչիւր դասակարգէն կան քանի մը բառեր ալ, որոնք միւս միացածներէն կը տարբերին իրենց* զոյգ զոյգ գործածութեամբը. *ասոր համար և ասոնք ալ երրորդ դասակարգ մը կը համարուին և կը կոչուին* Ցորնչական (cor-rel'a-tive – քըրրէ՛լէթիվ – *իրարու վերաբերող*) *Շաղկապներ։*

ա. Բաղհիւսական շաղկապ կը կոչուին այն շաղկապներն, որոնք կը ցուցնեն յաւելում մը, պատճառ մը, հետեւանք մը կամ եզրակացութիւն մը, ինչպէս, "He *and* I shall not dispute*; *for*, *if* he has any choice†, I shall readily grant§ it." – *«Ինք և ես չպիտի հակաճառինք, վասն զի եթէ ինք (ան) որ և է ընտրածն ունի, ես պատրաստակամութեամբ (յօժարութեամբ) պիտի շնորհեմ զանիկա»։*

---

* to dis-pute' (տիսփիւ՛թ) *հերքել, հակաճառել, վիճաբանիլ, բանակռուիլ։*

† choice (չոյս, չոյս) *ընտիր. թանկագին. ընտրողութիւն, ընտրածը. նախամեծարածը։*

§ grant (կրանթ – մէկ վանկ) *շնորհելը. շնորհածը.* to grant, *շնորհել։*

Բաղհիւսական շաղկապները հետեւեալներն են

and, *ու, և* — if, *եթէ*

as, *որպէս թէ* — that, *որ, թէ*

both, *երկուքն ալ* — then, *ուրեմն* [*չափ*

because, *որովհետև* — since, *ըստ որում, քանի որ, ցոր-*

even, *մինչև անգամ* — seeing, *նկատելով որ*

for, *վասն զի* — so, *այսպէս, այդպէս, այնպէս*

բ. Տրոհական շաղկապ *կը կոչուին այն շաղկապներն, որոնք կը ցուցնեն նշանակութեան հակառակը. ինչպէս,* "*Though* (թհօ — [illegible] — *Թէ և, Թէպէտ և*) he were dead, *yet* shall he live." — *St. John's Gospel. XI., 25.* «*Թէ և մեռնի, սակայն և այնպէս պիտի ապրի*»։ «Be not faithless*, *but* believing." — *Id. XX., 27.* «*Մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ*»։

Տրոհական շաղկապները հետեւեալներն են

or, *կամ* — al-though' (օլթհօ*) *թէև, թէպէտև*

nor, *ոչ ալ* — yet *սակայն, բայց և այնպէս*

either, *կամ. թէ* — but *բայց. սակայն* [*ոչ*

neither, *ոչ* — ex-cept' (էքսէ՛փթ) *մինչեւ որ. եթէ*

than, *քան թէ* — wheth'er (հուէ՛թհըր) *թէ, արդեօք*

though, *թէև, թէպէտև* — lest *գուցէ, մի գուցէ, չըլլայ թէ*

un-less' (ըն՛լէս) *եթէ ոչ, բայց միայն, մինչեւ որ*

save (սէյվ) *բացի*

pro-vi'ded (փրօվա՛յտէտ) *պայմանաւ որ. միայն թէ*

not'with-stand'ing (նա՛թուիթհսթէ՛նտինկ) *չընայելով թէ, սակայն, այսու հանդերձ, այսու ամենայնիւ*

where-as' (հուէյրա՛զ) *որովհետեւ. նկատելով որ*

գ. Ցարնչական շաղկապ *կը կոչուին այն շաղկապներն, որոնք կը գործածուին զոյգ զոյգ, այնպէս որ մէկը կ'ակնարկէ կամ կը պատասխանէ միւսին. ինչպէս,* "John (ճա՛ն — Յովհաննէս) came *neither* eating, *nor* drinking." — *Matt. XI., 18.* «*Յովհաննէս եկաւ ոչ կ'ուտէր ոչ ալ կը խմէր*»։ *Whether* he will go, *or* not; I can not tell, *արդէն պիտի երթայ կամ ոչ՝ չեմ կըրնար ըսել*։

Ցարնչական շաղկապները հետեւեալներն են

both .... and — *թէ .... եւ թէ*

as .... as — *այնպէս .... ինչպէս ալ*

այնչափ .... որչափ ալ

as .... so — *ինչպէս .... այնպէս ալ*

---

* faith (ֆէյթհ) *հաւատք*. faitless, *անհաւատ*։

if .... then	եթէ .... ուրեմն
either .... or	կամ .... կամ
neither .... nor	ոչ .... և ոչ ալ
whether .... or	արդէն .... կամ
though կամ although .... yet	թէև, թէպէտ եւ .... սակայն, բայց եւ այնպէս

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հետեւեալ բառերն ալ *for as much as*, վասն զի, որչափ որ. *in as much as*, քանի որ. *in so much that*, քանի որ այնչափ հաւաքաբար գործածուած ատեն, յաճախ իբր շաղկապ կը գործածուին։

2. Շաղկապները քերականական որ եւ է փոփոխութիւն չեն կրեր։

124. Վարժութիւն

[Այս վարժութիւնը նախ առ նուազն երեք անգամ կարդալու է բարձրաձայն, յետոյ ուշի ուշով հասկնալով սորվածներն, թարգմանելու է Հայերէնի. անկէց վերջ ընդօրինակելու է տետրակին մէջ և ամէն մէկ պարբերութեան միջի շաղկապներն դնելով ստորագծելու է. այնուհետև զանազանելու է ամէն մէկ շաղկապ ի՛նչ դասակարգի կը պատկանի և ո՛ր բառերը կամ խօսքերը իրարու հետ կապած է։]

"Why do we fear death, seeing it is but gain to die?"
He is not so wise as his brother.
"Except a man be born again."
I will either write or send.
"He has neither friends nor enemies*, neither vice nor virtue."
"Though deep yet clear, though gentle yet not dull."
Speak so as to be understood
He speaks so low that no one can hear what he is saying.
I will give you such books as I have.
Such is his ignorance†, that he can neither read nor write.
"Answering their questions, as if it were a matter§ that needed it."

---

* en'emy (էն'նէմի) թշնամի

† ig'no-rance (իկ'նօռանս) ագիտութիւն։

§ mat'ter (մա'թըր) նիւթ, խնդիր

Հետեւեալները – acy (էսի), – ade (էյտ), – age (էյճ), – ance (ընս), – ence (ընս), – ancy (ընսի), – ency (ընսի), – ion (ըն), – sion (ժըն, շըն), – tion (շըն), – ism (իզմ), – ment (մընթ, մէնթ), – tude (թիուտ), – ty (թի), – ety (էթի), – ity (իթի), – ure (ըր) Լատիններէնէ կամ Գաղիերէնէ առնուած մասնիկներ են. որոնցմէ մին երբ բառի մը վերջն աւելցուի կը ցուցնէ վիճակ կամ կացութիւն, գործողութիւն մը կամ գործողութեան մ'արդիւնքը. և կամ գործողը. Հայերէնի մէջ մեծ մասամբ – ութիւն մասնիկն կը համապատասխանեն։

125. Վարժութիւն

[Հետեւեալ նախադասութիւններն նոյնպէս ընդօրինակելու է տետրակին մէջ, բայց ձգուած տեղերը պատշաճ շաղկապներ դնելով։ Նկատելու է որ միեւնոյն շաղկապը երկու անգամ չը գործածուիր։ Յետոյ կարդալու է բարձրաձայն առ նուազն երեք անգամ։]

Wisdom is better ...... wealth.*
Neither he ...... I can do it.
Take care ...... thou fall.
Mamma ...... I went down the store.
...... I had a book, I would read it.
He may come in ...... he is a friend.
Annie and Nora ...... were present.
"We live ...... we eat."
It will rain ...... the barometer is falling.
"Why do we fear death, ... it is but gain to dye?"
...... you wish it, it shall be done.
...... he is there.
If you don't like this, ... have that.
I am well ...... I do not feel very strong.†
What will you have corn-cake ...... corn-bread?
He has ...... sister ...... brother.
You must say ...... yes ...... no.
"...... I have cast them far off."
Rude,‡ ...... not unkind.
You may go now ...... you may come again.
"...... a man be born again."
Tell us ...... you are going or not.
"...... they cause *some* to fall." — PR. IV., 16.
"Thou see'st no beauty ...... thou make it first." — LOWELL.
...... that he would pay ten cents a week.
"........................... he had a bee in his bonnet,§ was really a great man." — DE QUINCEY.
"...... he was not worthy of death."

---

* wealth (ուէլթհ – մ.կ վօւկ) հարստութիւն, ստացուածք
† strong (ը)ստրօնկ – մ.կ վանկ) զօրաւոր
‡ rude (րօ–ւդ) անքաղաքավար, անկիրթ
§ bon'net (պօ–նէթ) գլխարկ (ի հնումն էրիկ մարդոց՝ ներկայիս կանանց գլխարկ)

ԴԱՍ ԾԹ. (LESSON LIX.)

PREP''O-SI'TIONS (փրեփօզի'շընզ) ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[Զ]

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Նախադրութիւն կը կոչուին այն բառերը, որոնք տարբեր իրերու կամ մտածումներու իրարու հետ ունեցած յարաբերութիւնները կը ցուցնեն. եւ որոնք ընդհանրապէս գոյական անունէ մը կամ դերանունէ մ'առաջ կը դրուին. (Նախ–դրուած) ինչպէս, "We will wait *for* you *from* morning *till* night." *«Մենք պիտի սպասենք ձեզ համար առաւօտէն մինչեւ գիշեր» խօսքին մէջ for, from եւ till նախադրութիւններ են. վասն զի for* you *դերանունէն առաջ դրուած է եւ կը ցուցնէ* you *դերանունին* wait *բառին հետ ունեցած յարաբերութիւնը. նոյնպէս from* morning *գոյական անունէն առաջ դրուած է եւ կը ցուցնէ* morning *բառի* wait *բառին հետ ունեցած ուրիշ մէկ յարաբերութիւնը. այսպէս ալ till* night *գոյական անունէն առաջ դրուած է եւ կը ցուցնէ* night *բառի* wait *բառին հետ ունեցած ալ ուրիշ մէկ յարաբերութիւնը։*

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Խօսքի մը մէջ գտնուած նախադրութիւններն ամենէն պարզ բառերն են, որոնք քերականական ոեւէ փոփոխութիւն չեն կրեր։*

2. *Ամեն մէկ նախադրութիւն իրմէ վերջ առարկայ մը կամ (Հայկական ձեւով) խնդիր մ'ունենալու է, զոր կը կառավարէ. այս խնդիրը առ հասարակ նախադրութենէն անմիջապէս վերջը կը դրուի. բայց շատ անգամ ալ մէկ կամ երկու բառ կամ աւելի շատ հեռու ները կը դրուի. ինչպէս,* He is *with me*, *Ինձ հետ է.* "Sing *of* man's first dis'o-be'di-ence (տիսօպի՛տիէնս – անհնազանդութիւն)", *«Երգէ մարդու առաջին անհնազանդութեան վրայ»։*

3. *Ամեն մէկ նախադրութիւն իր առարկայովը կամ խնդիրովը միասին ուրիշ բառէ մը կամ խօսքէ մը կախում ունի, որուն կ'ըսուի նախընթացը կամ յարաբերեալը։ Նախադրութեան մը յարաբերեալը կամ առարկան (խնդիրը) շատ դիւրին կրնայ գտնուիլ What? Ի՞նչ հարցում մը գործածելով. այսպէս, եթէ What ը նախադրութենէն առաջ դնելով հարցնենք, գտածնուս պատասխանը յարաբերեալն է. եթէ What ը նախադրութենէն վերջը դնելով հարցնենք, պատասխանը առարկան կամ խնդիրն է. օրինակի համար,* "The price *of* a virtuous woman is far *above* rubies." *«Առաքինի կնոջ մը գինը գոհարներէն ([illegible]) շատ աւելի է»։ Այս խօսքին մէջ*

with-in (ուիդհի՛ն) ներսիդին
with-out' (ուիդհա՛ուդ) դուրսիդին, առանց

Վերոյգրեալներէն ի զատ ուրիշ նախադրութիւններ ալ կան, որոնք մակբայներու պէս քանի մը բառերէ կը բաղկանան. ասոնցմէ քանիններն են,

on ac-count' of (օ՛ն ըքքա՛ունդ օվ) համար, վասն
ac-cord'ing to (ըքքօ՛րտինկ դու) ըստ
in re-spect' of (ին րիսփէ՛քդ օվ) նկատմամբ
in-stead' of (ինսդէ՛տ օվ) փոխանակ
in or'der (ին օ՛րտըր) համար, որպէս զի [գալով
as to (էզ դու) նկատմամբ, (այս խնդրոյն

ԴԻՏ.— Վերոյգրեալ նախադրութիւններէն բաւական թիւ մը ուսանողը պիտի դիտէ որ ինքն արդէն սորված է զանոնք առաջ իբր մակբայներ, յետոյ՝ իբր շաղկապներ և հիմայ ալ կը գտնէ զանոնք իբր նախադրութիւններ։ Միևնոյն բառերու այս զանազան գործածութիւններն շփոթութիւն պատճառելու չեն ուսանողին. ինքն շատ դիւրաւ պիտի ճանչնայ թէ ինչ խօսքին մէջ բառը հոն տեղ իբր մակբա՞յ թէ շաղկապ՝ շաղկա՞պ թէ նախադրութիւն գործածուած է, եթէ ուշադրութիւն ընծայէ (ա) այդ բառի նոյն խօսքին մէջ գրաւած դիրքին և կատարած պաշտօնին. (բ) այդ բառի տուած նշանակութեանը, որը խօսքին մէջ գտնուող միւս բառերու իմաստին լրացուցիչ և պատշաճ պէտք է ըլլայ։ Գիտենք արդէն որ բառ մը ինչ որ կը նշանակէ երբ իբր մակբայ գործածուի, նոյնը չնշանակեր երբ իբր շաղկապ գործածուի. ինչպէս, yet իբր մակբայ կը նշանակէ դեռ, տակաւին. մինչ իբր շաղկապ կը նշանակէ սակայն, բայց և այնպէս. նոյնպէս ալ for իբր շաղկապ կը նշանակէ վասն զի. մինչ իբր նախադրութիւն կը նշանակէ համար։ Ասոնց գործածութիւնը աւելի որոշ կարելի է տեսնել հետևեալ օրինակներուն մէջ։ Do not go *yet*, Տակաւին մ'երթաք. He is willing, *yet* unable, ինք կը կամենայ (կ'ուզէ, կը ցանկայ), սակայն անկարող (է)։ Այս երկու օրինակներէն առաջնոյն մէջ *yet* go բային վրայ գրուած է և նշանակութիւնն ալ տակաւին կը յարմարի. ուստի մակբայ է. մինչ վերջնոյն մէջ *yet* He is willing և *he is* unable նախադասութիւններն իրարու կը շաղկապէ, և նշանակութիւնն ալ սակայն կամ բայց և այնպէս կը յարմարի. ուստի եւ շաղկապ է։ Նոյնպէս՝ "Take my yoke upon you, and learn of me; *for* I am meek and lowly in heart." «Առէ՛ք իմ լուծս ձեր վրայ, եւ ինձմէ սորվեցէք՝ վասն զի հեզ եմ եւ սրտով խոնարհ»․ "I am ready *for* you", «Պատրաստ եմ

ձեզ համար։ Այս երկու օրինակներէն առաջինին մէջ forը ակներեւ կ'երեւայ որ երկու խօսքերը իրար կը կապէ եւ կը-նշանակէ վասն զի. ուստի շաղկապ է. մինչ վերջնոյն մէջ forը գրուած է you դերանունէն առաջ, որը կը կառավարէ եւ կը-նշանակէ համար. ուստի եւ նախադրութիւն է։

126. Վարժութիւն

[Այս վարժութիւնը նախ սա նաւագին երեք անգամ կարդալու է բարձրաձայն, յետոյ ուշի ուշով հետեւելով առոգանութիւններին, թարգմանելու է Հայերէնի. անկէց վերջ ընդօրինակելու է տետրակին մէջ և ամէն մէկ պարբերութեան մէջի նախադասութիւնները զանելով ստորագծելու է. այնուհետև զանելու է ամէն մէկ նախադասութեան կառավարած խնդիրն ու յարաբերեալը։

Can't you tell us something about New York?
It is about hundred feet across the road.
Don't feel yourself above others.
I saw a light above the brightness of the sun.
They arrived one after another.
He was named after his uncle.
That is against the law.
Come along with me.
Among my books, there are two of yours.
We sat around the fire.
You must be here before night.
Before many years have passed this will be forgotten altogether.
She stood behind the door.
He is below fifty.
Don't sink beneath a burden*.
There were many others besides him.
There is nothing between them.
That is beyond my reach.
We progress little by little.
For this reason, I got to see him.
He went from Paris to Rome.
We live in New York.
She was standing at the door.
This paper is written in ink.
Is it written in that book?
January is the first month of the Year.
Whatsoever falls on the stone, shall be broken.

---

* bur'den (պը'րտն) բեռ

Pass on the other side please.
We have been here over a month.
What is he upon?

127. Վարժութիւն

[Հետեւեալ նախադասութիւնները նայելէ ընդօրինակեցէք եւ տետրակին մէջ, բաց ձգուած տեղերը պատշաճ նախադրութիւններ դնելով։ Նկատելու է որ միեւնոյն նախադրութիւնը երկու անգամ չը գործածուի։ Յետոյ կարդացէք եւ թարգմանեցէք առ նուազն երեք անգամ։]

This room is ten feet .... seven.
He is gone .... good.
You must be angry .... something.
He was standing .... the road.
He was named .... me.
The bone .... the arm is broken.
Do not lean* .... this door.
We walked .... the shore .... the sea.
I saw him .... the corn.
"They questioned .... themselves."
They intend to sail .... the world.
.... the question of high cost of living.
He stood .... king Agrippa.
Get .... me, Satan‡.
The thermometer indicates† .... thirty degrees.
Were there others .... you?
Let her sit .... Cora and Bertha.
"What is that .... me and thee?"
"And said, Is not the arrow .... thee?"
Fear not, for I am .... you.
What can I do .... you?
We went .... Paris to Rome.
We waited there .... night.
Don't stand .... the door of the church.
What have you got ...... your hand?
You may take it and cut .... pieces.

---

* lean (լին) նիհար, անժուր (ածէք. ձև.) to lean, հակիլ, կռթնիլ, յենուլ

‡ sa'tan (սէյթըն) սատան, սատանայ (նկատէ տառադարձութիւնը)

† in'di-cate (ինտիքէյթ) ցուցնել, նշանակել

IN''TER-JEC'TIONS (ի՛նթըրճէ՛քշընզ) ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

[Ձ]

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— *Միջարկութիւն* ([illegible]) *կամ Ձայնարկութիւն* ([illegible]) *կը կոչուին կարգ մը փոքրիկ բառեր, որոնք յանկարծ մեր խօսքերուն միջեւ կ'իյնան մեր մտքի յանկարծական կամ սաստիկ մի յուզումը, ինչպէս ուրախութեան, տրտմութեան, [illegible], [illegible] կամ ուրիշ որ եւ է [illegible] արտայայտելու համար. այսպէս,* Hur-rah'! (հըռա՛) *Կեցցէ՜.* Ah! *Ա՜խ.* Begone! *Կորսուէ՜.* What! *Ի՜նչ.* Good-by! *Մնաք բարո՜վ։*

Ինչպէս Հայերէնի մէջ ամէն միջարկութիւն իւր վրայ երկար (˜) նշանն ունի, նոյնպէս Անգլիերէնի մէջ ամեն մէկ միջարկութիւն ([illegible]) *իրմէ վերջ սոյն* (!) *նշանն ունի, որ կը կոչուի* Ex''cla-ma'tion mark (էքսքլամէ՛յշըն մարք) *Զարմացական նշան. եւ կը համապատասխանէ Հայերէն երկարին. այսպէս,* O! *Ո՛.* Oh! *Ո՜հ։*

Միջարկութիւններն ալ Շաղկապներու եւ Նախադրութիւններու պէս քերականական որ եւ է փոփոխութիւն չեն կրեր. սակայն կարելի է զանոնք դասակարգել իրենց արտայայտած յուզմունքներուն համեմատ. ասոնց գլխաւորներն են,

1. Ուրախութեան արտայայտելու համար

Eigh !	(էյ)	Է՜յ, Է՜հ
Hey !	(հէյ)	Հէ՜յ, Ա՜յ, Է՜յ
I'o !	(ա՛յօ)	Ա՜յօ, Օ՜հ, Օ՜խ

2. Տրտմութեան արտայայտելու համար

Oh !	(օ)	Ո՜հ, Վա՜յ, Վա՜խ
Ah !	(ա)	Ա՜հ, Եղո՜ւկ, Ա՜խ
Hoo !	(հու)	Հո՜ւ
A-las' !	(ալա՛ս)	Աւա՜ղ, Ափսո՜ս

3. Ապշութեան կամ Զարմանքի արտայայտելու համար

Ha !	(հա)	Հա՜, Ո՜հ
Strange !	(ստրէյնճ)	Ի՜նչ օտար, ի՜նչ անսովոր
Indeed !	(ինտի՛յտ)	Իրա՜ւ

4. [illegible] արտայայտելու, կամ կոչելու համար

O !	(օ)	Ո՜հ, Ո՜վ

5. Գովեստի արտայայտելու համար

Good !		Լա՜ւ, Աղէ՜կ ըրիք
Well-done !		Լա՜ւ ըրիք
Bra'vo	(պրէ՛յվօ, պրա՛վօ)	Շատ աղէ՜կ, Լա՜ւ, Ապրի՜ք

6. ([illegible]) Զարմանք արտայայտելու համար

What !		Ի՜նչ
Whew !	(հուիու)*	Հո՜ւ, Օ՜ն (Տե՛ս. [illegible])

7. Ցաւ կամ վիշտ արտայայտելու համար

Oh !		Ո՜հ
Ah !		Ա՜հ, Ա՜խ
Eh !	(էյ, է)	Է՜հ
O dear !		Ո՜հ (Տե՛ս. [illegible])

8. Արհամարհանք արտայայտելու համար

Faugh !	(ֆօ)	Թո՜ւ, Թո՜ւհ
Pugh !	(փիու, փիուհ)	Փօ՜ւ, Փօ՜ւհ, Թօ՜ւհ
Pshaw !	(շօ. փշօ*)	Վա՜հ, Օ՜ն անդր
Humph !	(հըմֆ)	Հը՜մ
Hum !	(հըմ)	Հը՜մ

9. Հակակրութիւն կամ Զզուանք արտայայտելու համար

Foh !	(ֆօ)	Օ՜հ
Fie !	(ֆայ)	Վա՜յ, Թո՜ւհ

10. Արտաքսելու համար

Out !		Դո՜ւրս
Off !		Անդի՜ն, Կորսուէ
Shoo !	(շու)	Զո՛ւ, գնա՛, Քը՜շ, Քը՜շ
Begone !		Գնա՛, Կորսուէ՛

11. Մէկը [illegible] կանչելու համար

Ho !	(հօ)	Օ՜, Է՜յ
Hal-lo'! Halloo!	(հելօ՛)	Հէլօ՜

12. Ցնծութիւն արտայայտելու համար

Ah !		Ո՜հ, Օ՜խ
A-ha' !	(ա՛հա՛)	Ահա՜, Էհա՜, Ըհա՜
Hurrah! Hurra!	(հօ-րէյ)	Կեցցէ՜

13. Խնդալու համար

Ha, ha, ha	(հա, հա, հա,)	Հա, հա, հա
He, he, he	(հի, հի, հի,)*	Հի, հի, հի

14. Ողջունելու համար

Wel'come	(ուէ՛լքըմ)	Բարի եկաք
Hail !	(հէյլ)	Ողջո՜յն
All-hail !		Ողջո՜յն

---

* Հնչելու է [illegible] անգամէն ([illegible])։

15. Ուշադրութեան հրաւիրելու համար

Ho !		Է՛յ
Look !		Նայէ՛
See !		Տե՛ս
Be-hold'!	(պիհօ՛լտ)	Նայէ՛, ահա՛
Hark !	(հարք)	Մտիկ ըրէ՛, Լսէ՛

16. Լռեցնելու համար

Hush !	(հըշ)	Հը՛շ, Լռէ՛, Լռեցէ՛ք
Hist !	(հիստ)	Հը՛ս, Լռութիւն, լռ՛ւռ

17. Երկիւղ արտայայտելու համար

Oh !		Ո՜հ, Օ՜հ
Ha ! Hah !	(հա)	Հա՜, Ա՜հ, Ո՜հ
What !		Ի՞նչ

18. Դադրեցնելու համար

Hold !	(հօլտ)	Կեցի՛ր, Կեցէ՛ք, Դադրեցէ՛ք
Whoa ! †	(հուօ)*	Դադրէ՛, Դադրեցէ՛ք

19. Մեկնելու համար

Good by !		Մնաք բարո՜վ, Երթաք բարո՜վ
Good-day !		Բարի օ՜ր, Մնաք Բարո՜վ, Երթաք բարո՜վ
Fare'well !	(ֆէ՛յրուէլ)	Մնաք բարո՜վ, Երթաք բարո՜վ
A-dieu' §	(ա՛տիօ՛ւ)	Տէր ընդ ձեզ

20. Գիտցած կամ գտած ըլլալը արտայայտելու համար

Oho !	(օհօ)	Օհօ՜, Ես ան գիտե՜մ
A-ha !	(ա՛հա՛)	Հահա՜, Ահա՜, Գտա՜

21. Հարցում արտայայտելու համար

Eh ?	Է՞յ (Վերէը՞)	Ho ?	Հա՞, այդպէ՞ս է

ՏԱՆ.— Ուսանողը պէտք չէ շփոթի, երբ նկատէ թէ Միջարկութիւններու վերոյգրեալ շարքին մէջ միևնոյն բառերը գործածուած են մտքի տարբեր յուզումները արտայայտելու համար. միևնոյնը պիտի գտնէ Հայերէնի մէջ եթէ բացէ մը դիտէ՛ օրինակի համար ինչ բառի տարբեր արտասանութիւնները. թող փորձէ ինքնին հնչել ինչ բառը ուժգին, կամաց, հաստ, բարակ, երկար, կարճ, ձանր, թեթև, ևն. ամեն անգամին պիտի զգայ որ ինչ բառի նշանակութիւնը կը փոխուի, մինչդեռ բառը միևնոյնն է։

---

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

† ՏԱՆ.— Այս բառը կը գործածուի մասնաւորապէս ձիեր դադրեցնելու համար։

§ Գաղղիերենէ առնուած — Ադիօ (կը յանձնարարեմ)

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1· Շատ մը բայերու հրամայականներն ալ երբեմն իբր միջարկութիւն կը գործածուին. ինչպէս, Behold! Նայէ՛· Hark! Մտիկ ըրէ · Hold! Կեցի՛ր։

2· Wo կամ Woe (ուօ) Վայ, (կը յայտնէ խիստ մեծ դժբաղդութիւն, ծայրայեղ թշուառութիւն կամ սոսկալի աղէտ) գոյական անուն է. սակայն յաճախ իբր միջարկութիւն կը գործածուի։

128· Վարժութիւն

[Այս վարժութիւնը նախ առ նուազն երեք անգամ կարդալու է բարձրաձայն, յետոյ ուշի ուշով նշանակելով առոգանութիւնները, թարգմանելու է Հայերէնի. անկէ վերջ ընդօրինակելու է տետրակին մէջ և ամեն մէկ պարբերութեան մէջի միջարկութիւնները գտնելով ստորագծելու է։]

Alas! he is no more. Ah! so I have caught you at last!
Hear, O Israel! Aha! they have won.
"Begone! I say. I will not to wedding with thee."–SHAKESPEARE.
"O faithless generation,* how long shall I be with you?"
"Hey, his kiss† put honey‡ in the very porridge-pot§!BUCHANAN.
Ha! Ha! I laugh. Now it is time to laugh!
Fie, nephew, fie! Out! you can stay¶ here no more.
O dear me! can't you stay quite for a while?
Halloo! come here!
"He cried, Ho! no more, for it is done."—CHAUCER.
Bravo! Bravo! they were crying.
Hush! don't cry anymore.
"Hist! the household‖ all is sleeping." —JULIA W. HOWE.
"Behold, I can not speak." Wo to the drunkard!
Whoa! Whoa! Good-by! my dear, good-by!

129. Վարժութիւն

[Հետեւեալ նախադասութիւններն յօյժ ուշով ընդօրինակելու է տետրակին մէջ, բաց թողուած տեղերը պատշաճ միջարկութիւններ դնելով։]

.... must it ever be so! ... is it you?
"......... she is broken." — EZEK. XXVI., 2.
... that the day would come! .... come here.
.... with you! ... is me! "......... he is in thine hand."
"... Happiness! our being's end and aim!"— POPE.
........., my friends, ...

---

* gen´er-a´tion (ճէնըրէ՛յշըն) սերունդ, ազգատոհմ. արտադրութիւն. ծնունդ · to generate, ծնանիլ. արտադրել, յառաջ բերել ‡ hon´ey (հը՛նի) մեղր

† kiss (քիս) համբոյր, պաչիկ — to kiss, համբուրել, պագնել

§ por´ridge (փօ՛րիճ, փա՛րիճ) ցորենէ կամ ալիւրէ ճաշ — pot (փա՛թ) պուտուկ — porridge-pot, ճաշ եփելու պուտուկ

¶ stay (ըսթէյ – [illegible]) մնալ, կենալը — to stay, մնալ, կենալ ‖ house´hold ընտանիք, տնեցիք. ընտանեկան

ԴԱՍ [illegible] LESSON [illegible].

[illegible] REVIEW

[illegible]

1. [illegible]

[illegible] kindly. anyhow. but. whence. till now: [illegible] կարելի է մակբայ չինել:

2. Դասաւորեցէք բերանացի Գոյական ու [illegible] և նոյնը ձեր յիշողութենէն գրեցէք [illegible] յիերէն. յետոյ նոյնը բարձրաձայն կարդացէք [illegible]

3. Ի՞նչ է Շաղկապը. ի՞նչ պաշտօն [illegible] խօսքին կը կրէ: Շաղկապները քանի՞ [illegible] բաժնել. ի՞նչ են անունները [illegible] շաղկապներն ի՞նչպէս կարելի է [illegible] են յարնչական շաղկապները. և [illegible] բերքին: Չեռնեալ շաղկապներէն [illegible] ութեան մէջ գործածելու է. neither [illegible] withstanding, provided.

4. Ի՞նչ տեսակ բառերու [illegible] տեսակ բառերէն առաջ կը դրուին [illegible] կապէն ի՞նչով կը տարբերի. ի՞նչ է [illegible] տարկայ կամ խնդիր: Այս [illegible]

երկերկու օրինակներով ցոյց տալու է՝ ի՞նչպէս կարելի է յարաբերեալն և առարկան կամ խնդիրը գտնել։ Նախադրութիւններն ի՞նչ փոփոխութիւն կը կրեն։ Հետեւեալ նախադրութիւններէն ամեն մէկը մէկ նախադասութեան մէջ գործածելու է. instead of, within, after, pending, from:

Ե. *Միջարկութիւն ո՞ր տեսակ բառերը կ'անուանենք. եւ ի՞նչ դասակարգերու կարելի է բաժնել. երկերկու օրինակներ տալու է՝ Միջարկութիւններն ի՞նչ փոփոխութիւն կը կրեն։ Հետեւեալ միջարկութիւններէն ամեն մէկը մէյ մէկ նախադասութեան մէջ գործածելու է.* Oh! Aha! Halloo! Alas! Farewell!

130. *Վարժութիւն*

[Ց] [Հ]

"He that is without sin among you, let him first cast a stone at her." — JOH. VIII., 7.

"Suffer the little children to come unto me, and forbid them not."— MAR. X., 14.

"Happiness is not complete unless it is shared with others."

"No man can lose what he never had."

"Every where in life the true question‡ is, not what we gain, but what we do."—CARLYLE.

"Who thinks most, feels the noblest, acts the best."— P. J. BAILEY.

"Time flies, man dies."

"The fool doth think he is wise, but the wise man knows himself to be a fool." — *As you like it.* — SHAKESPEARE.

"A thing in beauty is a joy forever."

---

‡ ques'tion (*քուէ'սչըն*) *հարցում. վէճի նիւթ եղածը* — to question, *հարցնել. տարակուսի տակ ձգել։*

ՂԿԿԹԿՍՂՌԿՈԺԳԾ

ՋԵԿՈՅՑ

[Ուսանողը գիտնալու է որ նախորդ վաթսուն դասերուն մէջ ոչ միայն աւելի քան երկու հազար Անգլերէն Բառերու հեգելը, կարդալը, գրելը, նշանակութիւնը և գործածելու կերպերը սորված է, այլ և Տարրական Քերականութեան առաջին երկու գլխաւոր մասերը (Ուղղագրութիւն և Ստուգաբանութիւն կամ Մասունք Բանին) լմնցուց. թէև առանց որոշակի գիտցած ըլլալու որ ինք իր նախնական դասերէն սկսեալ Անգլիերէնէ ի զատ Քերականութիւն ալ կ'ուսանէր։ Այժմ որ բաւական Անգլիերէն գիտէ և քիչ շատ միտքը զարգացած ու լեզուագիտական պաշարը ճոխացած է, կ'սկսինք այսուհետև Քերականութիւնը կանոնաւորապէս Քերականութիւն դաստալ։ Եւ որովհետև սոյն գրքի առաջին դասերուն մէջ, մեր ուսանողի զարգացման վիճակը ի նկատի ունենալով, մեզ կարելի չէր քերականութեան դասերը պէտք եղած ճոխութեամբ աւանդել, այժմ կ'ստանձնենք յաջորդ չորս դասերով, քերականութեան յարեւանցի կերպով անցածնուս մասերը աւելի ընդլայնել և պէտք եղածին չափ ճոխացնել կարեւոր բացատրութիւններով, որոց հետ ուսանողը ինքզինք այնքան լաւ ընտելացնելու է, զայնս յաճախ կարդալով, մինչև որ պէտք եղած ժամանակ զանոնք գործածելու կարողութիւնը ձեռք բերած ըլլայ։]

GRAMMAR (կրէ'մըր) ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԴԱՍ ԿԱ· (LESSON LXI.)

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ *կը կոչուի գիրք մը, որ կը սորվեցնէ լեզու մը ուղիղ կարդալու, գրելու և խօսելու կերպերն (եղանակը), օրէնքներն ու կանոնները։*

Անգլերէն Քերականութիւն *ալ գիրք մ'է որ կը սորվեցնէ Անգլիերէն լեզուն ուղիղ կերպով կարդալու գրելու և խօսելու կերպերն, օրէնքներն ու կանոնները։*

(Լեզու ըսելով ի հնումն կը հասկցուէր մարդու մը իր գաղափարներու բերանացի արտայայտութիւնը· սակայն տառերու գիւտէն ի վեր լեզու բառը սկսաւ նշանակել մարդու մը իր գաղափարներու արտայայտութեան երկու տարբեր կերպերը, բերանոյ և գրաւոր։)

Լեզուի մը Քերականութիւնը դիւրին և պատշաճ կերպով սորվելու միակ կերպն է զայն իր բաղկացնող մասերուն վերլուծել, և անոնցմէ ամեն մէկը բացատրել, անոր ստուգաբանութիւնը ճշդելով, պաշտօնը որոշելով, օրինակներ տալով և վարժութիւններ ընելով։

Իր մը կամ բառ մը **բացատրել** *ըսելով՝ պէտք է հասկնալ նոյն իրը կամ բառը որոշել միւս իրերէն կամ բառերէն անոր մասնաւոր նկարագրութիւնը ընելով, անոր նշանակութիւնը հասկցնելով։*

Բառի մը **ստուգաբանութիւնը** *(ստոյգ բան) ճշդել ըսելով՝ պէտք է հասկնալ նոյն բառի խօսքի ինչ մաս ըլլալը գտնել և անոր կրած փոփոխութիւններն որոշել։*

Բառի մը **պաշտօնը որոշել** *ըսելով՝ պէտք է հասկնալ նոյն բառի ուրիշ բառերու կամ խօսքի հետ ունեցած յարաբերութիւնը ցոյց տալ։*

Օրինակ տալ *ըսելով՝ պէտք է հասկնալ ինքնին գտնելու է այն տեսակ բառ մը կամ խօսք մը որ իր բացատրածը ներկայացնէ կամ ապացուցանէ։*

Վարժութիւններ ընել *ըսելով՝ կը հասկնանք ուսանելու նիւթ եղածը բազմազան ձեւերու տակ այնքան կրկնել· մինչեւ որ մտքին մէջ անմոռանալի եւ գործածելու պատրաստ վիճակի մը մէջ հաստատուի։*

Քերականական կանոնը քիչ թէ շատ ընդհանրացած օրէնք մ'է որ սովորութիւնը հաստատած, կանոնաւորած, եւ նկարագրած է իրր լեզուին ուղիղ գործածութիւնը։

Անգլիերէն Քերականութիւնը չորս գլխաւոր մասերու կը բաժնուի 1. Or-thog'ra-phy (օրթհօ՛կրէֆի) *Ուղղագրութիւն*. 2. Et'y-mol'o-gy (էթիմօ՛լօճի) *Ստուգաբանութիւն կամ Բառագիտութիւն*. 3. Syn'tax (սի՛նթէքս) *Համաձայնութիւն կամ Շարադրութիւն եւ* 4. Pros'o-dy (փրօ՛սօտի) *Տեչտաբանութիւն կամ Առոգանութիւն (ի մասնաւորի Տաղաչափութիւն, Բանաստեղծութիւն — այս ճիւղին կը պատկանի նաեւ Կէտադրութիւն)։ Թէեւ ներկայիս առ հասարակ ընդունուած սովորութեան համեմատ երկրորդ եւ երրորդ ճիւղերը միայն կը կազմեն արդի գործածական Քերականութիւնը, բայց մենք աւելորդ չենք համարիր այս տեղ առաջին ճիւղին վրայ ալ քիչ մը գաղափար տալ, որը Հայ ուսանողի մը համար զգալի պէտք մը կը նկատենք։*

ՄԱՍՆ Ա.

ORTHOGRAPHY. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ *կը սովրեցնէ ուսանողին այն բոլորը ինչ որ պէտք է գիտնայ ձայնաւորներու կամ բաղաձայներու, երկբարբառներու, եռաբարբառներու և ձևերու մասին։*

I. OF LETTERS. *Ա. ԳՐԵՐՈՒ ԿԱՄ ՏԱՌԵՐՈՒ ՄԱՍԻՆ։*

Գիր կամ Տառ կը կոչուի այբուբենի ամեն մէկ հատը, որը առ հասարակ կը ներկայացնէ մարդկային ձայնի մի մասնաւոր հնչումը կամ խօսակցութեան մի մասնաւոր տարրը։ Ամեն մէկ գրի իր հանած մասնաւոր ձայնը կը կոչուի իր զօրութիւնը (*power*)*. երբ բառի մը մէջ գիր մը ձայն չը հանէ, կը կոչուի լուռ կամ համր* (*silent* or *mute*)։

Անգլիերէն Այբուբենը ընդ ամեն քսան և վեց գիր ունի. որոնք սակայն երեսուն վեց կամ երեսուն եօթն ձայն կը հանեն։

Ամբողջ այբուբենը գիտնալ կը նշանակէ սորվիլ անոնց անուններն, կերպերն, զօրութիւններն և ձևերն, որոց հետ՝ ուսանողը համառօտակի արդէն ծանօթացած է սոյն գրքի 1–96 *երեսներուն մէջ, այժմ ալ աւելի ընդարձակօրէն պիտի ուսանի զանոնք։*

1. ԳՐԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

(Տեսնել Անգլիերէն ամբողջ Այբուբէնը Երես 96)

Անգլիերէն Գրերու կամ Տառերու անունններն են,

A, էյ. *Bee*, Պիյ. *Cee*, Սիյ. *Dee*, Տիյ. *E*, Իյ. *Eff*, էֆ. *Gee*, Ճիյ. *Aitch*, էյչ. *I*, Այ. *Jay*, Ճէյ. *Kay*, Քէյ. *Ell*, էլ. *Em*, էմ. *En*, էն. *O*, Օ. *Pee*, Փիյ. *Kue*, Քիու. *Ar*, Ար. *Ess*, էս. *Tee*, Թիյ. *U*, Եու. *Vee*, Վիյ. *Double-u*, Տըպլիու. *Ex*, էքս. *Wy*, Ուայ. *Zee*, Զիյ։

2. ԳՐԵՐՈՒ ԿԱՐԳԵՐԸ

Լեզուի մը ամբողջ տառերը երկու ընդհանուր կարգերու կը բաժնուին Vow'els (վաուըլս) Ձայնաւորներ, *և Con'so-nants* (քան'սօնէնթս) Բաղաձայններ։

Ձայնաւոր կը կոչուի այն գիրը որ ինքնին կրնայ կատարեալ ձայն մը հանել. ինչպէս, a, e, i, o։

Բաղաձայն կը կոչուի այն գիրը որ ուրիշ ձայնաւորի մը օգնութեամբը կը կարողանայ ձայն հանել. ինչպէս, b, c, d, f։

Ձայնաւորններն են a, e, i, o, u և երբեմն ալ w և y. բոլոր մնացած գրերը բաղաձայն են։

W կամ y բաղաձայն կը կոչուի երբ մի եւ նոյն վանկին մէջ հնչուող ձայնաւորէն առաջ դրուի. ինչպէս Well; yet: միւս բոլոր պարագաններուն մէջ ձայնաւոր են։

Բաղաձայններն ալ կարելի է իրենց զօրութեան համեմատ բաժնել երկու դասակարգի. կէս ձայնաւորներ, semivowels և համրներ, mutes.

Կէս ձայնաւոր կը կոչուի բաղաձայն մը՝ որ առանց ձայնաւորի անկատար ձայն մը կրնայ հանել. այնպէս որ իր ձայնը բառի մը վերջը կրնայ յապաղիլ. ինչպէս l, n, z - al, an և azի մէջ։

Համր կը կոչուի այն բաղաձայնը՝ որ առանց ձայնաւորի մը օգնութեան հիչ ձայն չկրնար հանել և որը եթէ վանկի մը վերջը գտնուի հնչած պահուն շունչը յանկարծ կը դադրեցնէ. ինչպէս, k, p, t - ak, ap եւ atի մէջ։

Կէս ձայնաւորններն են f, h, j, l, m, n, r, s, v, w, x, y, z եւ c (սիյ) *ու g* (ճիյ)*. բայց w կամ y երբ վանկի մը վերջը գտնուի ձայնաւոր է. եւ c, f, g, h, j, s, կամ zի ձայնն ալ կարելի է երկարցնել միայն զօրաւոր շունչով։*

Կէս ձայնաւորներէն չորսը *l*, *m*, *n*, եւ *r* հեղուկ կը կոչուին աւելի դիւրաւ հնչուելնուն համար. չորսն ալ *v*, *w*, *y* եւ *z* նմանապէս աւելի ձայնով կը հնչուին քան հագագային։

Համրներն ութն են, *b*, *d*, *k*, *p*, *q*, *t*, եւ *c* (ք) ու *g* (կ) ասոնցմէ ալ *k*, *q* եւ *c* (ք) նոյնահնչիւն են. *b*, *d*, եւ *g* (կ) միւսներէն աւելի յանկարծական կերպով կը դադրեցնեն շունչը։

3· ԳՐԵՐՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրերու զօրութիւններն իրենց հանած պարզ ձայներն են։

Որ եւ իցէ լեզուի մը մէջ գտնուած նախնական պարզ ձայները թուով քիչ են, ոչ աւելի քան երեսուն եւ վեց. բայց այս ձայներն իրարու հետ զանազան կերպով բաղադրուելով անթիւ բառեր յառաջ կը բերեն։

Ամեն մէկ ձայն կամ հնչում յառաջ կուգայ բերանի տարբեր տարբեր բացուելովը, լեզուի մասնաւոր դարձուածքովը եւ ձայնի զօրաւոր կամ մեղմ, երկար կամ կարճ հնչեցնելովը։

Անգլիերէն լեզուն հիմնուած ըլլալով աւելի ձայնաւորներու վրայ, ամեն Անգլիերէն խօսող անհրաժեշտ կերպով պէտք է անոնց հետ լաւ կերպով ընտելանայ։ Այս ձայնաւորներն աւելի որոշ կը լսուին *ate*, *at*, *ah*, *all*, *eel**, *ell†*, *isle‡*, *ill*, *old*, *on*, *ooze‖*, *use*, *us* բառերուն սկիզբն, եւ *u* ինչպէս կը հնչուի *bull* բառին մէջ։

Սոյն տասներկու նախնական ձայները յաճախ կը միանան իրարու հետ ուրիշ վանկեր կազմելու համար. ինչպէս, ay, out. եւ բոլորն ալ շրթունքի կամ լեզուի մի մասնաւոր շարժումովը կամ դարձուածքովը արտադրուած ձայնովը նախադասուելով կամ կցուելով խօսքի ուրիշ մասերը կ'արտադրեն. օրինակի համար, եթէ այդ միեւնոյն տասներկու բառերն եթէ *f* ով նախադասենք կ'ունենանք *fate*, *fat*, *far*, *fall*, *feel*, *fell*, *file*, *fill*, *fold*, *fond*, *fool*, *fuse*, *fuss*, *full*։ Եթէ նորէն *p* ով նախադասենք կ'ունենանք ուրիշ շարք մը. եւ այսպէս անթիւ շարքեր կարելի է յառաջ բերել։

Զանազան գրերով արտասանուած վերոյիշեալ ձայնաւորներէն կէսը առ հասարակ նշանակութիւն ունեցող բա-հնչումներէն ... Բաղաձայներն վանկեր կազմելու միայն կը ծառայեն։ ... ներ են.

* eel (իյլ) օձաձուկ

† ell (էլ) կանգուն չափ մ'է՝ հիմա անգործածելի

‡ isle (այլ) կղզի (բանաստեղծական ձեւն է is'land (այլէնտ) կղզի բառին)

‖ ooze (ուզ) լճի սկային տիղմ. ծորում

Ութը երկար ձայներն cigh, ah, awe, eh, eye, oh, ooh, yew† ինքնին բառեր են. Միացած վեց կարճ ձայներն՝ ինչպէս at, et, it, ot, ut, put ի մէջ առ հասարակ բաղաձայններու հետ կը լսուին, բացի առաջինէն որ առանձինն եւ որոշ կը լսուի* "twice *a* day" *խօսքին մէջ։*

Անգլիերէնի մէջ պարզ բաղաձայններն քսաներկու հատ են, որք են, b, d, f, g (կ), h, k, l, m, n, ng, p, r, s, sh, t, th (թութ), th (դէն), v, w, y, z եւ zh (ժ)։ Բոլոր այս բաղաձայններն որոշ կրնան լսուիլ հետեւեալ բառերուն մէջ. buy, die, fie, guy§, high, kie‡, lie, my, nigh, eying, pie, rye¶, sigh‖, shy, tie, thigh**, thy, vie††, we, ye, zebra§§, seizure‡‡։ *Նոյն տառերը եթէ ոչ նոյն վանկին՝ գէթ նոյն բառին մէջ կրնան կրկնուիլ ալ. այսպէս,* fifty, giggle***, lily§§§, mimic‖‖‖, singing, thither, vivid¶¶¶, *եւն։*

J *եւ* X *Անգլիերէնի մէջ բաղադրեալ բաղաձայններ են. այդ պատճառով ալ եր. էք չեն կրկնուիր։* J *համարժէք է dzh ի. եւ* X *կամ ks ի կամ gz ի։ Անգլիերէնի մէջ չկայ բառ մը որ* J *ով վերջանայ եւ ոչ ալ բառ մը որ* X *ով սկսի. եւ* X *ով սկսող օտար լեզուներէ առնուած բառերուն ալ* X *ը կը հնչուի պարզ* Z *ի պէս. ինչպէս,* Xerxes (Զերքսէս) *Քսերքսէս։*

C *եւ* Q *բաղաձայններն ինքնին մասնաւոր ձայներ չունին։* Q *միշտ k ի ձայն ունի։* C *տառը a, o, եւ u, տառերէն առաջ կը հնչուի k. եւ e, i, ու y տառերէն առաջ կը հնչուի s. այս-*

---

* awe (օ) *սարսափ, յարգալից վախ, երկիւղ*

† yew (եօու) *կարմրածառ* (Տճկ. փօրսուգ աղաճը)

§ guy (կայ) *ծաղրական կամ կայմական չուան. սուտ մարդ* (Տճկ. չէօմլէ կէյմէն)

‡ kie (քայ) (Սկովտերէն) *կովեր*

¶ rye (րայ) *հաճար* (Տճկ. չավդար)

‖ sigh (սայ) *հառաչ, հառաչանք* — to sigh, *հառաչել*

** thigh (թհայ) *երանք, զիստ* (Տճ. պուտը)

†† vie (վայ) to vie, *մրցիլ*

§§ ze'bra (զի՛յպրա) *վագրձի*

‡‡ sei'zure (սի՛յժըր) *գրաւելը. գրաւուած ապրանք*

*** gig'gle (կի՛կլ) *քրքջել* — to giggle *խնդդուելով խնդալ, քրքջել։*

§§§ lil'y (լի՛լի) *շուշան*

‖‖‖ mim'ic (մի՛միք) *միմոս, խեղկատակ*

¶¶¶ viv'id (վի՛վիտ) *շատ պայծառ* (գոյն). *վառ, աշխոյժ*

[illegible] ..., cu, cy վանկերը կը հնչուին ka,
[illegible] ... տառը կը պահէ իւր ձայնը երբ c
[illegible] ... կը միանայ cին հետ երբ c իբր s հնչուի.
[illegible] sci, sco, scu, scy, կը հնչուին ska, se, si,
[illegible] եւ ci երբեմն կը հնչուին sh, շ. ինչպէս,
[illegible] ովկիան, ովկիանոս ([illegible]), so'cial
[illegible] ընկերական. Ch կը հնչուի tsh, չ. ինչպէս church, եկեղեցի։

Կ... քսան եւ վեց գրերու բաղադրութիւններն թէեւ [illegible] կը հասնին, բայց վերոյգրեալներն բաւական են [illegible] մը համար Անգլիերէն լաւ եւ ուղիղ արտասանութիւն մը ձեռք բերելու։ Մի եւ նոյն ատեն՝ ի նկատի ունենալով որ Անգլիերէն լեզուի հնչումներն շատերուն դժուարութիւն պատճառած է, հետեւեալ աւելի մանրամասն դիւրութիւններն ալ կ'աւելցնենք։

ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐՈՒ ՀՆՉՈՒՄՆԵՐԸ

A կը հնչուի վեց տեսակ

a	ա	ինչպէս	American (ամէրիքըն) Ամերիկեան
a	ա՛	ինչպէս	arm (ա՛րմ) բազուկ
a	է	ինչպէս	ask (էսք) հարցնել
a	է	ինչպէս	and (էնտ) և
a	էյ	ինչպէս	fare (ֆէյր) անցագին
a	ա, ը	ինչպէս	according (ըքքօրտինկ) ըստ

Վերոյիշեալներէն բացառութիւն կը կազմեն

a	օ	ինչպէս	all (օլ) բոլոր
a	ա, օ	ինչպէս	what (հուաթ) ինչ

a ով բաղադրեալ ձայնաւորները կը հնչուին

aa	է	ինչպէս	Isaac (Այզէք) Իսահակ
ae	ի	ինչպէս	Caesar (սիզըր) Կեսար
ae	էի	ինչպէս	aerial (էիրիըլ) օդային
ai	էյ	ինչպէս	nail (նէյլ) եղունգ. գամ
ai	է	ինչպէս	said (սէտ) ըսաւ
ai	էյի	ինչպէս	mosaic (մօզէյիք) մօզէյիք
au	օ	ինչպէս	cause (քօզ) պատճառ
au	ա	ինչպէս	aunt (անթ) մօրաքոյր
au	էյ	ինչպէս	gauge (կէյճ) չափ մը
aw	օ	ինչպէս	raw (րօ) հում
ay	էյ	ինչպէս	day (տէյ) օր

E կը հնչուի հինգ տեսակ

է	ինչպէս	m*e*t (մէթ) հանդիպած
ի	ինչպէս	m*e* (մի) զիս
ը	ինչպէս	mom*e*nt (մօմընթ) վայրկեան
ըր	ինչպէս	bak*er* (պէյքըր) հացագործ
էյ	ինչպէս	wh*e*re (հուէյր) ուր

երբոր վերջին e գիրն համր է. ինչպէս, sor*e* (սօռ) վէրք։

e ով բաղադրեալ ձայնաւորները կը հնչուին

է	ինչպէս	h*ea*d (հէտ) գլուխ
ա՛	ինչպէս	h*ea*rt (հարթ) սիրտ
ը	ինչպէս	*ea*rth (ըրթհ) երկիր
իէ	ինչպէս	b*ea*tify (պիէթիֆայ) երանելի ընել
իյ	ինչպէս	*ee*l (իյլ) օձաձուկ
էյ	ինչպէս	v*ei*n (վէյն) երակ
ի	ինչպէս	dec*ei*t (տիսիթ) խաբէութիւն
է	ինչպէս	h*ei*fer (հէֆըր) երինջ
ի	ինչպէս	p*eo*ple (փիփըլ) ժողովուրդ
է	ինչպէս	l*eo*pard (լէփըրտ) ինձ
օ	ինչպէս	G*eo*rge (ճօրճ) Գէորգ [բանտ*
ը	ինչպէս	dung*eo*n (տընճըն) ստորերկրեայ
իօ	ինչպէս	th*eo*logy (թհիօլօճի) Աստուածաբա-
իու	ինչպէս	f*eu*d(ֆիուտ)գժտութիւն [նութիւն
իու	ինչպէս	f*ew* (ֆիու) քանի մը

երբ հանդիպի r էն առաջ կը հնչուի ու. ինչպէս dr*ew*, տրու։

օ	ինչպէս	s*ew* (սօ) կարել
էյ	ինչպէս	pr*ey* (փրէյ) յափշտակել
օ	ինչպէս	b*eau* (պօ) պչրասէր
իու	ինչպէս	b*eau*ty (պիուտի) գեղեցկութիւն
s ըս	ինչպէս	gorg*eous* (կօրճըս) փառաւոր

I կը հնչուի չորս տեսակ

այ	ինչպէս	f*i*ne (ֆայն) գեղեցիկ
ի	ինչպէս	*i*n (ին) մէջ
իյ, ի	ինչպէս	mach*i*ne (մըշին) մեքենայ
ir, ըր	ինչպէս	s*ir* (սըր) տիար

Il, im, in, irr բառերու սկիզբը կը հնչուին իլ, իմ, ին, իրր. ինչպէս, *il*l (իլ) չար, *im*itate (իմիթէյթ) նմանցնել, *in*fant (ինֆընթ) նուկ, *irr*itate (իրրիթէյթ) գրգռել։

---

* տանջանարան (դէտ: ստորադաս[ութիւն])

Երկվանկեաններուն վերջը ild, ind *կը հնչուին այլդ, այնդ. ինչպէս,* mild (*մայլդ*) *մեղմ,* mind (*մայնդ*) *միտք։*

Լատիններէն բառերուն վերջը i միշտ այ կը հնչուի. ինչպէս, alibi (*ալիբայ*) *այլուր։*

Շեշտուած i *է մը անմիջապէս վերջ եթէ ձայնաւոր մը գայ i կը հնչուի այ. ինչպէս,* li'on (*լայըն*) *առիւծ,* di'et (*դայէթ*) *ուտելիք. եթէ* i *ը չեշտուած չըլլայ կը հնչուի է. ինչպէս,* o-be'di-ent (*օպի՛տիէնտ*) *հնազանդ։*

ile, ine, ive *վերջաւորութիւններն սովորաբար կը հնչուին իլ, ին, իվ. զորօրինակ,* hostile (*հօսթիլ*) *թշնամական,* masculine (*մէսքիուլին*) *արական,* active (*էքթիվ*) *գործունեայ*

i *ով բաղադրեալ հեւեալ ձայնաւորները կը հնչուին,*

ia	*ը*	*ինչպէս*	physician (*ֆիզիշըն*) *բժիշկ*
ia	*է*	*ինչպէս*	carriage (*քէրէճ*) *կառք*
ie	*ի*	*ինչպէս*	grief (*կրիֆ*)* *վիշտ*
ie	*այ*	*ինչպէս*	die (*տայ*) *մեռնիլ*

ieu *և* iew *կը հնչուին իու (մէկ վանկ). ինչպէս,* lieuten'ant (*լիութէնընթ*) *տեղակալ.* view (*վիու*)* *տեսարան։*

cion, sion, tion *վերջաւորութիւններուն մէջ* io *կը հնչուի ը. ինչպէս,* co-er'cion (*քօըրշըն*) *ճնշում,* pos-ses'sion (*փըզզէշըն*) *ստացում, ստացուածք.* oc''cu-pa'tion (*աքիուփէյշըն*) *զբաղում, գործ։*

ious *վերջաւորութիւններուն մէջ* iou *կը հնչուի ը. ինչպէս,* re-lig'ious (*րիլի՛ճըս*) *կրօնական։*

O *կը հնչուի հինգ տեսակ*

o	*օ*	*ինչպէս*	o-bey' (*օպէյ*) *հնազանդիլ*
o	*օ*	*ինչպէս*	no (*նօ*) *ոչ*
o	*ա, ա՛*	*ինչպէս*	not (*նաթ*) *ոչ*
o	*օ*	*ինչպէս*	nor (*նօր*) *և ոչ ալ*
o	*ը*	*ինչպէս*	son (*սըն*) *որդի*

o *քանի մը բառերու մէջ կը հնչուի ու. ինչպէս* do (*տու*) *ընել։*

o *կը հնչուի ի միայն* women (*ուիմըն*) *կիներ բառին մէջ։*

o *կը հնչուի ուը միայն* one (*ուըն*) *մէկ և* once (*ուընս*) *մէկ անգամ բառերուն մէջ։*

Բառերու վերջի on *առ հասարակ կը հնչուի ըն. ինչպէս,* reason (*րիզըն*) *պատճառ։*

---

* *Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։*

o ով բաղադրեալ հետեւեալ ձայնաւորները կը հնչուին.

oa կը հնչուի օ. ինչպէս, coal (քօլ) ածուխ։

oe կը հնչուի երբեմն օ. ինչպէս, foe (ֆօ) թշնամի. երբեմն՝ ու. ինչպէս, shoe (շու) կօշիկ. երբեմն՝ ի. ինչպէս, foe'tus, fe'tus (ֆի'թըս) սաղմ. երբեմն՝ օէ. ինչպէս, po'et (փօ'էթ) բանաստեղծ. երբեմն ալ՝ օը. ինչպէս go'er (կօ'ըր) գնացող։

oi կը հնչուի երբեմն օյ կամ այ. ինչպէս, boil (պօյլ, պայլ) եռալ. ovoid (օվօյտ) ձուաձեւ. երբեմն՝ օի. ինչպէս, Sto'ic (Ս)թօ'իք) Ստոյիկեան։ Choir կը հնչուի (քուայր)* երգեցիկ խումբ, mem'oir կը հնչուի (մէ'մուէր) յիշատակ։

oo կը հնչուի ընդհանրապէս ու. ինչպէս, soon (սուն) շուտով. երբեմն՝ ը. ինչպէս blood (պլըտ) արիւն. երբեմն ալ՝ օ. ինչպէս door (տօր) դուռ (դուռ: տառադարձութիւն)։

ou կը հնչուի աու. ինչպէս, round (ռաունտ)* կլոր. երբեմն՝ ը. ինչպէս, rough (ռըֆ) խորտուբորտ. երբեմն՝ ու. ինչպէս, soup (սուփ) ապուր. երբեմն ալ՝ օ. ինչպէս, poul'tice (փօ'լթիս) ապեղանի (Տե՛ս. Ձեռ̣նկ)։

Բառի մը ous վերջաւորութիւնը կը հնչուի ըս. ինչպէս, por'ous (փօ'ռըս) ծակ ծակ, ծակծկոտ։

ow կը հնչուի աու. ինչպէս, brown (պրաուն)* թուխ. երբեմն ալ՝ օ. ինչպէս sow (սօ) սերմանել։

Owe կը հնչուի պարզապէս o և կը նշանակէ պարտիլ։

oy կը հնչուի օյ. ինչպէս, boy (պօյ) մանչ տղայ։

Անգլիերէնի մէջ եօ հնչումը չկայ։

U կը հնչուի վեց տեսակ,

u	եօու	ինչպէս	use (եօուզ) գործածել
u	իօու	ինչպէս	mule (միօուլ)* ջորի
u	ու	ինչպէս	bull (պուլ) ցուլ
u	ը	ինչպէս	bulk (պըլք) զանգուած
u	ի	ինչպէս	bus'y (պի'զի) զբաղուած
u	է	ինչպէս	bur'y (պէ'րի) թաղել

Անգլիերէնի մէջ իւ հնչումը չկայ։

u ով բաղադրեալ հետեւեալ ձայնաւորները կը հնչուին.

ua կը հնչուի երբեմն ա. ինչպէս, guard (կարտ) հսկել. պահպանել, երբեմն՝ ուէյ. ինչպէս, per-suade' (փըրսուէյտ) համոզել. երբեմն՝ ուը. ինչպէս, sen'su-al (սէ'նշուըլ) հեշտասէր, զգայական. և երբեմն ալ՝ ը. ինչպէս, vict'uals (վի'թըլս) պատրաստի կերակուրներ։

---

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

ue կը հնչուի օւ. ինչպէս, bl*ue* (պլօւ – մէկ վանկ) կապոյտ. երբեմն՝ է. ինչպէս, g*ue*st (կէստ) հիւր. երբեմն ալ՝ իօւէ. ինչպէս՝ du'el (տիօւէլ) մենամարտ։

gue և que վերջաւորութիւնները հնչելու է միշտ կ և ք. ինչպէս, league (լիյկ) միութիւն. pique (փիյք) վիրաւորուած հպարտութիւն. բաց ի a'gue, մէջ ընդ մէջ դող և ջերմ (երեք օրուայ դող կրակութիւն) և ar'gue, փաստաբանել, որոնք կը հնչուին (է կիօւ) և (ա՛րկիօւ)։

ui կը հնչուի այ. ինչպէս, guide (կայտ) առաջնորդ. երբեմն՝ ի. ինչպէս, guin'ea (կի՛նի) Անգլիական 21 շիլիննոց կամ 5 տալէրնոց ոսկի. երբեմն ալ՝ օւ. ինչպէս, juice (ճօւս)* հիւթ։

uy կը հնչուի այ. ինչպէս, buy (պայ) գնել. երբեմն՝ ի. ինչպէս, pla guy (փլէ՛յկի) նեղացուցիչ, ապականիչ։

W բառերու սկիզբը կը հնչուի ու, պայմանաւ որ իրմէ անմիջապէս ետքը ձայնաւոր գայ. ինչպէս, *w*ax (ուէքս)* մեղրամոմ։

wr բառերու սկիզբը կը հնչուի միայն ր. ինչպէս *w*rite (րայտ)։

wh բառերու սկիզբը կը հնչուի հու. ինչպէս, *w*hen (հուէն) երբ. բայց եթէ wh էն անմիջապէս ետք o ըլլայ. այն ատեն wh հնչելու է հ. ինչպէս, *w*hole (հօլ) ամբողջ։ Նոյնպէս sword, թուր. two, երկու և answer, պատասխան բառերը կը հնչուին (սօրտ) (թօւ) (անսըր)։

wo կը հնչուի ուը. ինչպէս, *w*orld (ուըրլտ)* աշխարհ։

Y բառերու սկիզբը կը հնչուի ե. ինչպէս, *y*et (եէտ) տակաւին. միավանկ բառերուն և բայերուն վերջը կը հնչուի այ. ինչպէս, m*y* (մայ) իմ. sat'isf*y* (սէ՛տիսֆայ)† գոհացնել. ածականներու և մակբայներու վերջը ու շատ մը բառերու մէջտեղը կը հնչուի ի. ինչպէս, eas'*y* (ի՛յզի) դիւրին. greatl*y* (կրէյթլի) մեծապէս. cr*y*s'tal (քրի՛սթըլ) բիւրեղ. և հետևեալ բառերուն մէջ միայն կը հնչուի ը. m*y*rrh (մըր) զմուռս. m*y*r'tle (մը՛րթլ) մուրտ. mar't*y*r (մա՛րթըր) մարտիրոս (նկատէ՝ տառադարձութիւնը)։

ye կը հնչուի այ. ինչպէս r*ye* (րայ) հաճար։

---

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

† ԾԱՆ.— Հայերէն ընթերցանութեան մէջ յ բազմավանկ բառերուն վերջը միշտ համր է, այդ պատճառաւ (սէտիսֆայ) ի վերջի յն ե ի վերածեցինք որ որոշ հնչուի։

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐՈՒՆ ՀՆՁՈՒՄՆԵՐԸ

B կը հնչուի միշտ պ. ինչպէս, bee, (պիյ) մեղու. բայց m գիրէն ետքը՝ և միավանկ բառերուն մէջ t գիրէն առաջ, չի հնչուիր. ինչպէս, lam*b* (լէմ) գառ, de*b*t (տէթ) պարտք։

c կը հնչուի կամ ս կամ ք (Տեսնել երես 251-252)։

c համր է հետևեալ բառերուն մէջ ar'bus-*c*le (ա'ռպըսլ) տունկ. cor'pus-*c*le (քօ'ռփըսլ) չամանդաղ, հիւլէ. *c*zar (զառ) ձար. in-di*c*t' (ինտա'յթ) դատի տակ ձգել. mus'*c*le (մը'սլ) մկանունք, գնդեր և vi*c*t'uals (վի'թըլս) պատրաստի կերակուրներ։

ch առ հասարակ կը հնչուի չ Տևտոնեան, Նորման և Անգլօ-Սաքսոն լեզուներէ առնուած բառերուն մէջ. ինչպէս *ch*ur*ch* (չըրչ) եկեղեցի. կը հնչուի ք Յունարէնէ և Լատիններէնէ առնուած բառերու մէջ. ինչպէս, *Ch*rist (քրայսթ)* Քրիստոս (դէտ: աստուածաբանութիւն). և կը հնչուի շ Գաղղիերէնէ առնուած բառերու մէջ. ինչպէս *Ch*icago (շիքա'կօ) Շիգակօ։

ch համր է dra*ch*m (տրէմ)* դեղագործական կշիռքի չափ (60 գրէն) (Տե՛ս. տրէմ), ya*ch*t (եաթ) զբօսանաւ. և s*ch*ism (սիզմ) պառակտում, հերձուած բառերուն մէջ։

arch պետ, աւագ, գլխաւոր նշանակող և բառի մը սկիզբին միացող մասնիկը, եթէ ձայնաւորով սկսող բառերու սկիզբը կցուի, կը հնչուի արք. ինչպէս *arch*''an'gel (արքէ'յնճըլ) հրեշտակապետ. իսկ եթէ բաղաձայնով սկսող բառերուն սկիզբը կցուի, կը հնչուի արչ. ինչպէս, *arch*''bish'op (արչպի'շըփ) արքեպիսկոպոս։ Հետևեալ բառերուն մէջ իբր բացառութիւն arch կը հնչուի արչ. arch'er (ա'րչըր) աղեղնաձիգ և arched (արչտ) կամարակապ։

tch կը հնչուի չ։

D կը հնչուի տ. ինչպէս did (տիտ) ըրաւ։

Քանի մը բառերու մէջ d կը հնչուի ճ. ինչպէս, e*d*''u-ca'tion (էճու-քէ'յշըն) կրթութիւն։

Կարգ մը բայերու անկատարին կամ անցեալ ընդունելութեան ed վերջաւորութեանց մէջ կը հնչուի թ կամ տ. ինչպէս, lease*d* (լիյստ) պայմանաժամով վարձու տրուած։

d համր է հետևեալ բառերուն մէջ, han*d*'ker-chief (հէ'նքըրչիֆ) թաշկինակ. han*d*'some (հէ'նսըմ) գեղեցիկ. We*d*nes'day (ուէ'նզտէյ) Չորեքշաբթի։

dge կը հնչուի ճ. ինչպէս, e*dge* (էճ) ծայր։

F կը հնչուի ֆ. ինչպէս, *f*ace (ֆէյս) երես. of կը հնչուի ավ։

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

G կը հնչուի Ճ e, i, y ձայնաւորներէն առաջ, պայմանաւ որ բառը Լատիններէնէ առնուած ըլլայ. ինչպէս, gem (ճէմ) գոհար, gi'ant (ճա՛յէնթ) հսկայ, gym-nas'tic (ճիմնէ՛սթիք) մարմնամարզութիւն. իսկ եթէ Տեւտոնեան լեզուներէ առնուած ըլլայ կը հնչուի Կ. ինչպէս get (կէթ) ստանալ, give (կիվ) տալ, fog'gy (ֆա՛կի) միգապատ։

g կը հնչուի Կ a, o, u ձայնաւորներէն եւ բոլոր բաղաձայններէն առաջ բացի h եւ y է. նոյնպէս բառերուն վերջը գտնուած ատեն. ինչպէս, gain (կէյն) շահ, go (կօ) երթալ, gun (կըն) հրացան. grace (կրէյս—մէկ վանկ) շնորհք, big (պիկ) խոշոր։

Քանի մը Գաղղիերէնէ առնուած բառերու մէջ g կը հնչուի Ժ. ինչպէս rouge (րուժ) կարմիր ներկ։

gg կը հնչուի Կ նոյն իսկ երբ իրմէ վերջը e, i, y ձայնաւորներն ալ գան. բայց երբեմն դիւրութեան համար կը հնչուի Ճ. ինչպէս ex-ag''ger-a'tion (էկզէճըրէ՛յշըն) չափազանցութիւն. երբեմն ալ կը հնչուի ԿՃ. ինչպէս, sug-gest' (սըկճէ՛սթ) թելադրել։

g գիրը m կամ n գրերէն անմիջական առաջ գտնուի համր է. ինչպէս, phlegm (ֆլէմ — մէկ վանկ) մաղաս (պալղամ), sign (սայն) նշան։ Բայց եթէ երկու գրերն ալ զատ զատ վանկերու վերաբերին, թէեւ իրարու քով, երկուքն ալ կը հնչուին. ինչպէս phleg'mon (ֆլէ՛կմըն) ենթամորթային ուռ, sig'nal (սի՛կնըլ) ազդանշան։

gn Գաղղիերէնէ և Իտալերէնէ առնուած բառերու մէջ կը հնչուի Նյէ։

gh բառերուն սկիզբը կը հնչուի Կ. ինչպէս, ghost (կօսթ) ոգի. բառերուն վերջը չի հնչուիր. ինչպէս, dough (տօ) խմոր. նոյնպէս չի հնչուիր՝ եթէ իրմէ ետքը t գայ. ինչպէս, fight (ֆայթ) կռիւ։ gh քանի մը բառերու մէջ ալ կը հնչուի երբեմն Ֆ. ինչպէս, laugh (լաֆ) ծիծաղիլ. երբեմն՝ Կ. ինչպէս, burgh (պըրկ) աւան. երբեմն ալ՝ Փ. ինչպէս, hic'cough (հի՛քըփ։)

Հասարակ ժողովուրդին մէջ սովորութիւն է եղած ing վերջաւորող բառերու վերջին g չը հնչել կամ շատ անորոշ հնչել. ինչպէս, I am going home. (այ էմ կօին հօմ — փոխանակ կօինկ) տուն կ'երթամ։

H գիրը կը հնչուի Հ. ինչպէս, hen (հէն) հաւ։

h գիրը բառերուն սկիզբն ու վերջը r գիրէն ետքը չի հնչուիր. ինչպէս rhyme* (րայմ) ոտանաւորի յանգ, նոյնահնչիւն

---

* Ներկայիս աւելի լաւ կը սեպուի գրել rime, որ աւելի շիտակ ալ է։

վանկ. ca-tarrh' (քէթա՛ր) երկար առնէ ի վեր վրան միացած հարբուխ։ Նոյնպէս հետևեալ բառերուն սկիզբը h համր է. *h*onest (ա՞նէսթ) իրաւ, ճիշդ. *h*our (ա՛ուր) ժամ, *h*onor (ա՞նըր) պատիւ։

h ձայնաւորէ մը ետքը բառերուն վերջը դարձեալ համր է. ինչպէս, O*h*! (օ) ո՜հ. Sa'ra*h* (սէ՛յրա) Սառա†։

J կը հնչուի ճ. ինչպէս, *j*oy (ճօյ, ճայ) ուրախութիւն։ Գաղղիերէնէ առնուած բառերու մէջ j կը հնչուի ժ. ինչպէս, bi-*j*ou' (պիժու՛) գոհար։ j կը հնչուի յ Hallelu*j*ah (հէլլէլուեա) ալէլուիա բառին մէջ։

K կը հնչուի ք. ինչպէս, *k*eep (քիյփ) պահել։

kn երբ բառերուն սկիզբը կամ մի և նոյն վանկին մէջ գտնուին k համր կը դառնայ և n մինակ կը հնչուի ն. ինչպէս *kn*ife (նայֆ) դանակ։

L կը հնչուի լ. ինչպէս, *l*ong (լօնկ) երկար։

l միավանկ բառերու մէջ շատ անգամ համր է. ինչպէս, ha*l*f (հաֆ) կէս. ta*l*k (թօք) խօսիլ։

Բառերու le վերջաւորութիւնը հնչելու է ըլ և ոչ լէ. ինչպէս, ta'b*le* (թէ՛յպըլ)։ Colo'nel կը հնչուի (քը՛րնըլ) Գնդապետ, զօրագունդի հրամանատար։

M կը հնչուի մ. ինչպէս, ar*m* (արմ) բազուկ։

N կը հնչուի ն. ինչպէս, su*n* (սըն) արև։

n գիրը l, m գրերէն ետքը բառերուն վերջը համր է. ինչպէս, kil*n* (քիլ) փուռ (չինուած ապրանքներ չորցնելու, փայտ, կղմինտր ևն.) hym*n* (հիմ) տաղ, երգ։

P կը հնչուի բ. փ. ինչպէս, *p*en (բէն) գրիչ. a*p*e (էյփ) կապիկ։

p բառերուն սկիզբը n, s, t գրերէն առաջ անձայն է. ինչպէս, pneu-mo'ni-a (նիւմօ՛նիէ) թոքատապ (Տճկ. ձաթըլճան), psalm (սա՛մ) սաղմոս, ptis'an (թիզ՛էն) գարեջուրի պէս ըմպելական խմելիք։ corps, (դեսպանական) մարմին հնչելու է (քօր) և re-ceipt', ստացագիր հնչելու է (րիսի՛յթ)։

ph կը հնչուի ֆ. ինչպէս, phrase (ֆրէյզ) քանի մը բառերէ բաղկացեալ խօսք մը, որ նախադասութեան մը մէկ մասը կը կազմէ։ Ste'phen, Ստեփան‡ հնչելու է (ս)թի՛յվն)։

ph եթէ t էն առաջ գան համր են. ինչպէս, phthi'sis (թա՛յսիս, թի՛յսիս) ծիւրախտ, թոքախտ։

Q գրէն անմիջապէս ետքը միշտ u ըլլալու է և qu կը հնչուի քուա. ինչպէս, queen (քուիյն — մէկ վանկ) թագուհի։

† [illegible] Իշխանուհի։

‡ Յունարէնէ առնուած է և կը նշանակէ պսակ։

R *կը հնչուի ռ և ր. ինչպէս,* bar'ber *(պա'րպըր) սափրիչ (Տճկ. պէրպէր)։ Դիտելու է որ* r *Հայերէն ռ-ի կը վերածուի երբ իրմէ անմիջապէս առաջ կամ վերջը երկար եւ լեցուն հնչուած ձայնաւոր մ'ունի. հակառակ պարագային կը հնչուի ր։*

r *քանի մը բառերու մէջ կը հնչուի ըր. ինչպէս,* i'ron *(ա'յըրն) երկաթ։*

r *մէկ քանի բառերու մէջ համր է. ինչպէս,* Worces'ter *('ուու'ստըր) 'Իուսդըր։*

S *կը հնչուի ս. ինչպէս,* sis'ter *(սի'սթըր) քոյր։*

s *երկու ձայնաւորներու մէջ կը հնչուի զ. ինչպէս,* nose *(նօզ) քիթ։*

s *կը հնչուի երբեմն շ եւ երբեմն ալ՝ ժ. ինչպէս,* sure *(շուռ) վստահ.* pleas'ure *(փլէ'ժեօր) հաճոյք։*

sion *վերջաւորութիւնը բաղաձայնէ ետքը կը հնչուի շըն. ինչպէս,* ver'*sion* *(վը'րշըն) թարգմանութիւն. իսկ ձայնաւորէ ետքը կը հնչուի ժըն. ինչպէս,* ad-he'*sion* *(էտհի'յժըն) յարիլը։*

s *կարգ մը բառերու մէջ համր է. ինչպէս,* isle *(այլ),* island *(այլէնտ) կղզի.* corps *(քօռ) դեսպանական կամ ուսուցչական մարմին. եւն։*

T *կը հնչուի տ կամ թ. ինչպէս* tea *(թիյ) թէյ՝* T *Հայերէնի մէջ տ-ի թէ թ-ի վերածելու մասին հետեւելու ենք վերեւը* r*-ի մասին տրուած թելադրութեանը. այն է* t*-էն առաջ կամ վերջը գտնուած երկար ձայնաւորներն եւ լեցուն հնչուած բաղաձայններն* t*-ին ուելի թ-ի լեցուն հնչիւնը կուտան. Հակառակ պարագային՝ տ-ի նիհար հնչումը տալու է։*

tion *բառերու վերջին վանկին մէջ կը հնչուի շըն. ինչպէս,* na'*tion* *(նէ'յշըն) ազգ. երբեմն ալ կը հնչուի չ. մանաւանդ եթէ* t*-էն առաջ* s *ըլլայ ինչպէս,* sug-ges'*tion* *(սըճճէ'սչըն) թելադրութիւն։*

t *համր է հետեւեալ բառերուն մէջ.* Chris*t*'mas *(քրի'սմըս) Քրիստոսի Ծնունդը,* ches*t*'nut *(չէ'սնըթ) շագանակ,* hau*t*'boy *(հօ'պօյ) տեսակ մը եղակ (ըստրօղէրրէ),* mor*t*'gage *(մօ'րկէյճ) անշարժ կալուածքի գրաւ ի դրուիլը,* of*t*'en *(օ'ֆըն) յաճախ,* sof'*t*en *(սօ'ֆըն) կակղացնել. մեղմացնել։*

t *համր է նոյնպէս* stle *եւ* sten *վերջաւորած բառերուն եւ անոնց բաղադրուածներուն մէջ. ինչպէս,* hus'*t*le *(հը'սլ) աճապարանօք եւ կանոնաւորութեամբ գործ մը յառաջ տանիլ.* hus'*t*ler *(հը'սլըր) խիստ աշխոյժ, խիստ գործունեայ.* ha's*t*en *(հէյսն) աճապարել, փութացնել.* has*t*ened *(հէյսընտ) աճապարած։*

tu երբեմն կը հնչուի չու. երբեմն ալ՝ թու կամ թիւօ. ինչպէս, vir'*tu*e (վըր'չու, վըր'թիւօ) առաքինութիւն. op''por-*tu*'ni-ty (օփփըրթիւօ'-նիթի) պատեհ առիթ, պատեհութիւն:

ts գիրերը միեւնոյն վանկին մէջ կը հնչուին ց. ինչպէս, nu*ts* (նըց) ընկոյզներ:

th կը հնչուի երբեմն թհ եւ երբեմն տհ. ինչպէս, *th*in (թհին) բարակ, *th*is (տհիս) ասիկա:

th գոյական անուններուն ծայրը կը հնչուի թհ. ինչպէս, brea*th* (պրեթհ) շունչ. իսկ եթէ նոյն բառը կամ անոր արմատը բայ ըլլայ կը հնչուի տհ. ինչպէս to brea*th*e (պրիտհ):

th սովորաբար Տեւտոնեան բառերուն մէջ եթէ երկու ձայնաւորի, կամ r գրին եւ ձայնաւորի մը մէջտեղ գայ կը-հնչուի տհ. ինչպէս, fa*th*er (ֆատհըր) հայր. իսկ Յունարէնէ առնուած բառերուն մէջ կը հնչուի թհ. ինչպէս e'*th*er (ի'յթհըր) եթեր:

th յատուկ անուններուն եւ քանի մը հասարակ անուն-ներու մէջ կը հնչուի թ. ինչպէս, *Th*om'as (թա'մըս) Թովմաս. is*th*'mus (ի'սմըս, ի'սթմըս) (Փանամայի) պարանոց:

V կը հնչուի վ. ինչպէս, *v*ery (վէրի) շատ:

X կը հնչուի քս. ինչպէս, box (պա'քս, պօքս) սնտուկ:

xi եւ xu երբեմն կը հնչուին քշ. ինչպէս, no*x*'*i*ous (նա'քշըս) վնասակար (առողջութեան կամ բարոյականութեան). lu*x*'*u*-ry (լը'քշու-րի) զեղխութիւն:

x երբեմն համր է. ինչպէս, Es'qui-mau*x* (է'սքիմօ) էսքիմօ:

Z կը հնչուի զ. ինչպէս, *z*eal (զիյլ) եռանդ:

z կը հնչուի երբեմն ժ. ինչպէս, a*z*'ure (է'ժիւօ-ր) երկնային կապոյտ (գոյն):

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսանողը անշուշտ վերոյգրեալ օրինակներուն մէջ նկատեց որ ea, ie, io եւ նման երկբարբառներն, ինչպէս նաեւ gn եւ նման երկտառ բաղաձայններն երբ երկվանկ բառի մը մէջ գտնուին այնպէս որ իրենց առաջին գիրը նախընթաց վանկին պատկանի եւ վերջինը հետեւող վանկին, այն ատեն իւրաքանչիւրը իր ուրոյն ձայնը կը պահէր. այնպէս ալ ph, sh, th եւ wh երկտառ բաղաձայններն երբ բաղադրեալ բառերու մէջ գտնուին այնպէս որ երկու գրերէն մէկը նախընթաց բառին եւ միւսը հետեւող բառին պատկանի, այն ատեն [illegible]

վերոյգրեալ կանոններուն համեմատ ֆ, շ, թհ կամ դհ եւ հա-նչուելու, իւրաքանչիւրը իր ուրոյն ձայնը կը հանէ. այսպէս, up-hold' (ըփհօ՛լտ – up եւ hold բառեր.) պաշտպանել, mis-hap' (միսհէ՛փ – mis եւ hap բառեր.) չար փորձանք, դժբաղդութիւն, priest'hood (փրի՛սթհուտ – priest եւ hood բառեր.) քահանայութիւն. քահանայութեան կարգ. cow'hide (քա՛ուհայտ – cow եւ hide բառեր.) կովի կաշի։

4. ԳՐԵՐՈՒ ՁԵՒԵՐՆ

Անգլիերէնի մէջ գրերու ձեւերն տեսակի եւ մեծութեան համեմատ անհամար են, որոց մէջէն գլխաւոր չորս տեսակներն են Roman, Հռովմէական, *Italic*, Շեղագիր, **Old English**, Հին Անգլիական եւ *Script*, Ձեռագիր։

(Տեսնել նաև էրես 96)

Հռովմէական գրերը կը գործածուին սովորաբար Անգլիերէն տպուած գրքերու համար։

Շեղագիրը կը գործածուի առաջին՝ այն ինչ բառին վրայ ընթերցողի մասնաւոր ուշադրութիւնը հրաւիրելու համար. երկրորդ՝ բառ մը օտար լեզուէ առնուած ըլլալը ցոյց տալու համար. երրորդ՝ թարգմանութեանց մէջ՝ ցոյց տալու համար որ շեղագրով շարուած բառը բնագրին մէջ չկայ, այլ թարգմանիչը իր քովէն աւելցուցած է։

Հին Անգլիերէնը հիմայ կը գործածուի հարսանեկան հրաւիրագրերու եւ անոր նման գրութիւններու միայն։

Ձեռագիրը մասնաւորապէս յարմարցուած է գրչով գրելու համար։

Ինչպէս ամեն լեզուի մէջ, նոյնպէս Անգլիերէնի մէջ ալ գրերը երկու տեսակ են, *cap'i-tals* (քէ՛փիթըլս) գլխագրեր եւ *small letters*, փոքր (սմօ՛լ լէթըրզ) գրեր։ Գրութեան մը կամ գրքի մը ամբողջ մարմինը հասարակ գրով կ'ըլլայ. գլխագիրը կը գործածուի աւելի որոշելու կամ աչքի զարնելու համար։ Գրքի մը տիտղոսը, գլուխները եւ անոնց գլխաւոր բաժանումները բոլորովին գլխագիր ըլլալու են։ Նոյնպէս գլխագրով կ'ըլլան ցուցաքարտերը, հաշուետոմսերը, նկարուած նշանակները եւ խորագիրները։

ԳԼԽԱԳԻՐ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

RULES FOR THE USE OF CAPITALS

1․ *Երբ մասնաւոր գրքեր կը յիշուին իրենց անուններովը, գրքի տիտղոսի գլխաւոր բառերէն ամեն մէկը գլխագրով պէտք է սկսի․ ինչպէս,* "Pope's* Essay† on man." – "The Holy Bible‡"։

2․ *Ամեն մէկ որոշ խօսքի, առանձին թիւ կազմող նախադասութեան եւ ամեն մէկ պարբերութեան առաջին խօ քը գլխագրով սկսելու է․ ինչպէս,* "Rejoice evermore. Pray§ without ceasing. In everything give thanks: for this is the will of God‖ in Christ Jesus concerning you. Quench not the Spirit¶. Despise†† not prophesyings**. Prove all things: hold fast that which is good." — *I. Thess.*, v., 16-21.

17. "*For* cutting off our trade‖‖ with all parts of the world:

18. *For* imposing‡‡ taxes§§ on us without our consent***"։

3․ *Աստուծոյ բոլոր անունները տիտղոսները և Իրեն յատկացուած ածականները․ նոյնպէս և զինք ներկայացնողներու անունները գլխագրով սկսելու է․ այսպէս,* God, The Father, The Son, the Holy Spirit, the Almighty։

4․ *Ամեն տեսակ յատուկ անուններ միշտ պէտք է գլխագրով սկսիլ․ ինչպէս,* Armenia, America, Van, New York, London, Constantinople, Ararat, Washington, Euphrates (Եփրատ) The Tribune (Տրիբուն), The Greeks, the Hudson (Հըտսըն – գետ)։

5․ *Պաշտօնի անունները, պատուոյ անունները, նշանաւոր մականունները առ հասարակ գլխագրով կ'սկսին․ ինչպէս,* "His

---

* Pope (փօփ) *Պապ* (յատուկ անուն է) pope, *Հռովմի պապը*

† es'say (էս'սէյ) *մասնաւոր նիւթի մը վրայ գրուածք մը*

‡ Bi'ble (պա'յպըլ) *Աստուածաշունչ*, (սուրբ) *գիրք*

§ pray (փրէյ – մ:կ վա'կ) *աղօթել, աղաչել*․ prayer, *աղօթք*

‖ God (կատ, կա'տ) *Աստուած* ¶ Spir'it (սփի'րիթ) *Հոգի*

†† de-spise' (տիսփա'յզ) *արհամարհել*

** proph'e-sy (փրա'ֆիսի) *մարգարէանալ* – prophesying, *մարգարէութիւն*

‖‖ trade (թրէյտ – մ:կ վա'կ) *արհեստ*․ *վաճառականութիւն*

‡‡ im-pose' (իմփօ'զ) *դնել* (հարկ)

§§ tax (թէքս) *հարկ*․ *տուրք* [[illegible]

*** con-sent' (քընսէ'նթ) *համաձայնութիւն* – to co[illegible]

Excellency, the President*, His Majesty† **Mgrditch the First, Catholicos of all Armenians, Chief§ Justice White, Sir William, St. Paul (Փօլ – Սուրբ Պօղոս), Pe'ter (Փի՛թըր – Պետրոս) the Great, His Majesty George the Fifth**։

6. *Տարբեր բառերէ բաղադրեալ յատուկ անուններն այն պարագային տակ որ իրենց կազմութեան համեմատ, առանց միութեան գծի կրնան իրարու հետ միանալով մէկ բառ կազմել, մէկ բառ գրելու է և միայն գլխագրով մը սկսելու է. ինչպէս,* "Westfield, Newport, Redbank." (*Այս բառերը քաղաքներու կամ գիւղերու անուններ են*)։

7. *Տարբեր բառերէ բաղադրեալ յատուկ անունները՝ այն պարագային տակ որ իրենց կազմութիւնը կը թելադրէ աւելի իրարմէ զատ գրել, զատ զատ գրելու է, և ամեն մէկ բառը գլխագրով սկսելու է. ինչպէս,* "New York, **East Boston, North** G rmantown"։

8. *Երբ ածական մը կամ գոյական անուն մը որոշ կերպով բաղադրեալ յատուկ անուան մը մասը եղած է, պէտք է զայն գլխագրով սկսիլ. ինչպէս,* "Mount‖ Ararat, **Long Island, The** French Republic, The United States of America"։

9. *Երբ յատուկ եւ հասարակ անուն մը իրարու հետ ընկերացած են զիրար բացատրելու համար, առ հասարակ բաւական կը սեպուի յատուկ անունը գլխագրով սկսիլ եւ հասարակ անունը բոլոր գրով. այսպէս,* "New York city¶, the river†† Euphrates, Hudson county§§"։

10. *Դիմառնութեամբ գործածուած, այսինքն մարմնացուցուած որ եւ է առարկայ, որ անձի մը որոշ գաղափարը կը ներկայացնէ, պէտք է գլխագրով սկսի. ինչպէս,* "Come gentle *Spring*, ethereal** mildness, come." — THOMSON."

"O! New Moon, true Moon***,
Tell unto me
Who my true love is to be"։

---

* pres'i-dent (փրէ՛զիտընթ) *նախագահ*

† maj'es-ty (մէ՛ճէսթի) *վեհափառութիւն*

§ chief (չիյֆ) *գլխաւոր*

‖ mount', moun'tain (մաունթ – մա՛ունթըն) *լեռ* – to mount *հեծնել. աթոռ նստիլ. լեռ ելնել*

¶ cit'y (սի՛թի) *քաղաք* †† riv'er (րի՛վըր) *գետ*

§§ coun'ty (քա՛ունթի) *գաւառ* *** moon (մուն) *լուսին*

** e'ther (ի՛յթըր) *եթեր* – e-the'ri-al, *եթերական*

11. *Յատուկ անուններէ բղխած ամեն բառ պէտք է գըլխագրով սկսիլ. այսպէս,* "Armenian, American, Turkish, Roman, German, French, Platonic"։

12. I *եւ* O *միշտ գլխագիր գրուելու են. ինչպէս,* "Praise† the Lord‡, O Jerusalem§; praise thy God, O Zion‖." — *Psalms* cxlvii. "O wretched¶ man that I am!" — For that which I do, I allow not: for what I would, that do I not; but what I hate, that do I." — *Rom.* vii., 24 and 15։

13. *Ոտանաւորի մը ամեն մէկ տողը, բացի այնպիսի տողերէն, որոց ամեն մէկը իր նախընթաց տողի մասը կը կազմէ, պէտք է գլխագրով սկսիլ. ինչպէս,*

"He liveth long, who liveth well;
    All else is life but flung†† away;
He liveth longest, who can tell,
    Of true things, truly done each day!"
"Happy the man whose tender‡‡ care
    relieves** the poor distress'd‖‖!
When troubles¶¶ compass*** him around,
    the Lord shall give him rest****." — 1819*ին Նիւ Եօրքի մէջ տպուած Սաղմոսէ մ'առնուած Գլ. ԽԱ.* 1։

---

† praise (փրէյզ – մ.կ. վանկ) *գովեստ* – to praise, *գովել*

‡ Lord (լօրտ) *Տէր*

§ Je-ru'sa-lem" (ճէրու'սալէմ, ճէրէօ'սալէմ) *Երուսաղէմ (Երբայեցերէն է և կը նշանակէ խաղաղութեան հիմ)*

‖ Zi'on (զայ'ըն) *Սիօն, Սիոն*

¶ wretch (րէչ) *հէգ, անզգամ, անպիտան. թշուառ* – wretched, *խղճալի, ողորմելի*

†† fling (ֆլինկ – մ.կ. վանկ) *նետել, ձգել*

‡‡ ten'der (թէ'նտըր) *փափուկ, կակուղ, մատղաշ* — to tender, *տալ* (է ղուրէ), *ներկայացնել*

** re-lieve' (րիլիյվ) *նեղութենէ ազատել* [*վիշտ*

‖‖ dis'tress (տիս'թրէս) *մարմնային կամ հոգեկան մեծ ցաւ,*

¶¶ troub'le (թրը'պլ) *նեղութիւն, ձանձրոյթ* – to trouble, *նեղութիւն տալ*

*** com'pass (քը'մփէս) *շրջապատ, սահման. կողմնացոյց.* — to compass, *շրջապատել, պարփակել* — com'pass-es, *կարկին* (Տհ. քէրկէալ)

**** rest (րէսթ) *հանգիստ, դադար. մնացորդ* – to rest, *հանգստանալ*

14. Գրութեան մը մէջ տրուած ամբողջ օրինակի մը, որ ուրիշի մը խօսածէն կամ գրածէն առնուած է, կամ չակերտի մէջ առնուած վկայութեան մը առաջին բառը միշտ գլխագրով սկսելու է. այսպէս, "Remember† this maxim‡: 'Know thyself'." — "Jesus answered them, Is it not written in your law, I said, Ye are gods?" — *John*, x., 34։

15. Գրութեան մը մէջ մասնաւոր կարեւորութիւն ունեցող և նոյն գրութեան իսկական նիւթը ներկայացնող բառեր կարելի է գլխագրով սկսիլ. ինչպէս, "In its application§ to the Executive with reference¶ to the Legislative* branch‖ of the Government‡‡, the same rule†† of action should make the President ever anxious** to avoid‖‖ the exercise¶¶ of any discretionary*** authority††† which can be regulated§§ by Congress‡‡‡." — ANDREW JACKSON, 1835.

16. Գլխագրով սկսելու չէ որ և է բառ, որ վերոյգրեալ կանոններէն միոյն տակ չէ կարելի բերել։ Հետեւեալը երկու հարիւր տարիի չափ առաջ եղած գրութեանց մէջ գլխագիրներու անպատշաճ և անկանոն գործածութիւնը կը ցուցնէ,

---

† re-mem'ber (րիմէ'մպըր) յիշել

‡ max'im (մէ'քսիմ) առած

§ ap"pli-ca'tion (էփլիքէ'յշըն) դարման. դիմում ընելը խնդրագիր. գործածութեան դնելը

¶ ref'er-ence (րէ'ֆըրընս) վերաբերութիւն, վկայութեան դիմելը. վկայագիր. առաջուընէ եղած բանի մը ակնարկելը

* leg'is-la-tive (լէ'ճիսլէթիվ) օրէնսդիր

‖ branch (պրէնչ – մէկ վանկ) ճիւղ

‡‡ gov'ern-ment (կը'վըռնմընթ) կառավարութիւն

†† rule (րուլ) կանոն – to rule, իշխել

** anx'ious (է'նքշըս) անձկալի, հոգ ընող

‖‖ a-void' (է'վօյտ) հեռու պահել

¶¶ ex'er-cise (է'քսըրսայզ) գործադրութեան դնելը. վարժութիւն. մարզանք. – to exercise, գործադրել, վարժեցնել. մարզանք ընել

*** dis-cre'tion-a-ry (տիսքրէ'շընըրի) ինք իր խելացի և շրջահայեաց դատողութիւնը գործածելով

††† au-thor'i-ty (օթհօ'րիթի) իշխանութիւն

§§ reg'u-late (րէ'կիուլէյթ) կանոնաւորել

‡‡‡ con'gress (քա'նկրէս) վեհաժողով

որմէ զգուշանալու է ներկայիս։ "Many a Noble *Genius** is lost for want of *Education*. And *Learning* was, in the *Dark Ages*, Preserv'd† almost only among the *Clergy*§." – CHARLES LESLIE, 1700.

Վերոյգրեալ կանոններէն ի զատ, կ'արժէ աստ յիշել. որ գլխագրով պէտք է սկսիլ նաեւ ամիսներու, օրերու, տօն օրերու, գիտութեանց եւ փողոցներու անուններն։

Նոյնպէս գլխագրով սկսելու է ամեն վերջակէտէ, հարցական եւ շարմացական նշաններէ ետքը եկող բառին առաջին գիրը։

131. Վարժութիւն

[Հետեւեալներն բարձրաձայն կարդալու է առ նուազն երեք անգամ, յետոյ ընդօրինակելու է տետրակին մէջ։]

They sang many hymns and psalms.
Xerxes was the king of Persia.
We will have some eel for our dinner.
We will pass through Long Island city.
Young man, you are ill advised.
That infant is imitating his father.
I had a beautiful lily on Easter day.
Singing will do you good.
He is acting like a mimic.
Please don't argue with me.
That will cost you one guinea.
It will be a great pleasure to us to satisfy you.
What is the whole question in this case?
Stephen became a martyr in the first century.
Would you like to have some rye bread?
The queen has pneumonia now.
All the myrr comes from India.

---

* gen'ius (ճի՛նիըս) արտաքոյ կարգի հանճարեղ, հնարագէտ

† pre-serve' (փրիզըր՛վ) քաղցրաւենի, բանդակ (Տե՛ս. Ռեհոլ) – to preserve, պահպանել

§ cler'gy (քլըր՛ճի) կղեր, կղերականութիւն

132· Վարժութիւն

[Հետեւեալ նախադասութիւններուն [illegible] լաւ մը [illegible]: վերջ. գրելու է [illegible] մէջ հարկ եղած [illegible] գլ–տառերը [illegible]]

"are they not written in the book of the chronicles* of the kings of israel?"

"but god has so made the bible that it interprets† itself."

this book is called "an english grammar."

"It may rain. he may go or stay· he would walk. they should learn." "Alas! i fear for life!"

"he went from london to new york."

"pray, what are they? does this *man* make new words§ when he pleases?

"shall not the judge of all the earth do right?"

"this is thy god that brought thee up out of egypt.

"and the holy one of israel is our king."

"which the lord, the righteous judge, shall give me at that day."

"thus said the lord the king of israel, ... i am the first, and i am the last; and besides me there is no god."

hagop melik was the given name of raffi.

mgrdich first was catholicos of all armenians.

lord william was in new york. whence he went to washington, where he called on the president in the white house.

the congress is not in session now. the legislature will meet in december.

"moon, moon, with thy sleepless eyes preserve the bones of armenians." — Bishop Carekin Serwasdiantz.

"o death! where is thy sting‡? o grave‖! where is thy victory** !"

"fall back, fall back, i have not room: — o! me thinks i see a couple whom i should know."

"nay, i live as i did, i think as i did, i love you as i did; but all these are to no purpose‖‖: the world will not live, think, or love, as i do." · *Swift, varied.*

---

* chron'i-cle (քրօ'նիքլ) օրը օրին գրուած պատմութիւն, ժամանակագրութիւն – Chronicles, Մնացորդաց

† in-ter'pret (ինթը'րփրէթ) մեկնել, թարգմանել

§ word (ուըրտ – մ.կ. ձայն) բառ

‡ sting (ս)թինկ - մ.կ. ձայն) խայթոց · to sting, խայթել

‖ grave (կրէյվ մ.կ. ձայն) ծանր, խոհեմ· գերեզման

** vic'to-ry (վի'քթօրի) յաղթութիւն

‖‖ pur'pose (փը'րփըս) նպատակ

ԴԱՍ ԿԲ. (LESSON LXII.)

II. OF SYL'LA-BLES. (ավ սի՛լէպլս) Բ. ՎԱՆԿԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Վանկը մէկ կամ աւելի գրերու մէկ անգամէն (բերանի մէկ անգամէն արտասանելովը) հնչուածն է. եւ որը կամ բառ մ'է, ինչպէս՝ *a, an, ant, book* եւ կամ բառի մը մէկ մասն է. ինչպէս, *hur-rah', un-der-stand', Is''a-bel'la, be-nev'o-lent-ly*։

Հայերէնի մէջ ամէն մէկ բառ այնքան վանկի կը բաժնուի որքան ձայնաւոր կայ այդ բառին մէջ. սակայն Անգլիերէնի մէջ աւելի բերանի հնչումին կը նայուի, եւ այդ օրէնքով բառի մը մէջ այնքան վանկ կայ որքան որոշ արտասանութիւններ կամ ձայնի իրարմէ զատ զարկեր կան բառին մէջ. ինչպէս. *just, plain* (Հայերէնի մէջ երկու վանկ կարելի է ընել. մինչ Անգլիերէնի մէջ մէկ վանկ է), *ex-press'* (երկու վանկ), *in''tro-duce'* (երեք վանկ) *as-so'ci-ate* (չորս վանկ)։

Անգլիերէնի մէջ մէկ վանկով եղած բառ մը կը կոչուի *mon'o-syl-la-ble* (մօ՛նօսիլլէպլ) միավանկ. երկու վանկերէ բաղկացած բառ մը՝ *dis-syl'la-ble* (տիսսի՛լլէպլ) երկավանկ, երեք վանկերէ բաղկացած բառ մը՝ *tris-syl'la-ble* (թրիսսի՛լլէպլ) եռավանկ. եւ չորս կամ չորսէ աւելի վանկերէ բաղկացածներն կը կոչուին *pol''y-syl'la-ble* (փօլիսի՛լլէպլ) բազմավանկ։

Բացի *w*էն ամէն մէկ ձայնաւոր ինքնին կրնայ վանկ մը կազմել, բայց բաղաձայններն միշտ ձայնաւորներուն կամ երկբարբառներուն կը պատկանին. և առանց ձայնաւորի վանկ չի կազմուիր։

Diph'thongs (տի՛ֆթօնկս) and Triph'thongs (թրի՛ֆթօնկս)

Երկբարբառներ եւ Եռբարբառներ

(Տեսնել Երես 65)

SYL-LAB''I-CA'TION (սիլլէպիքէ՛յշըն) ՎԱՆԿԱԲԱԺԱՆՈՒՄ

Ինչպէս Հայերէնի՝ նոյնպէս Անգլիերէնի մէջ բառ մը վանկերու բաժնելու համար պէտք է գլխաւորաբար ականջէն առաջնորդուիլ. մի եւ նոյն ատեն աւելի լաւ է հետեւեալ կանոններն ալ ի նկատի առնել։

1. Բաղաձայններն պէտք են միացուիլ ընդհանրապէս այն ձայնաւորին կամ երկբարբառին հետ, որուն աւելի կը միանան հնչուած ատենը. ինչպէս, *Je-ru'sa-lem, pres'i-dent*։

2. Եթէ երկու ձայնաւորներ իրարու քով գալով երկբարբառ մը չը կազմեն, պէտք է զանոնք իրարմէ զատել եւ զատ զատ վանկ ընել. ինչպէս, *a-e'ri-al* (էյի՛րիըլ) օդային։

[illegible] մասնիկները եւ գերադրական վերջաւո-րութիւնները [illegible] է զատել այն արմատական բառերէն, որոնց կցուած են. բաղդատէ harm-less, great-ly, reward-[illegible] [illegible] եւ [illegible]-ter [illegible]) արմա-տական [illegible] բառեր են։

4. Ցանկանալու մասնիկները կը կազմեն առանձին վանկեր. [illegible] Բայց եթէ իրենց նախ-նական նշանակութիւնը [illegible] այն ատեն անոր համեմատ վանկերու [illegible] է. [illegible] re'cre-ate, [illegible]) վերստեղծել [illegible] rec re-ate, [illegible]) կազդուրել [illegible] [illegible]) վերա-կազմութիւն [illegible] [illegible]) բա-րեկարգութիւն. բարեփոխութիւն տարբեր տարբեր առու-մով բառեր են։

5. Բաղադրեալ բառերը բաժնելու համար. զիրենք բա-ղադրող պարզ բառերուն բաժնելու է. բաղդատէ. foot-hold, [illegible]։

6. Տողի մը վերջը բառ մը իր վանկերուն կրնայ կիսուիլ. բայց վանկ մը ոչ մէկ ատեն կիսուելու է։

133. Վարժութիւն

[Հետեւեալ բառերը վանկերու բաժնելով ընդօրինակել և առոգանել պէտք է։]

Honey, ever, other, pleasant, punish, never, rather, ready, river, whether, honesty, several, dishonest, whatever, benevolently, education, polysyllable, Armen, Cora, Nora, Bertha, Armenian, American, Constantinople, Washington, Englishman, mother, brotherinlaw, Bible, pardon, narrow, bankinghouse, unless, backbone, twentysecond, struggle, hostess, friendship, freedom, manhood, darkness, succeed, tribute, barometer, evening, rumor, under, shallow, morning, afraid, dreary, reform, sprinkle, splendid, adorn, reward, punish, possible, comfort, suffer.

134. Վարժութիւն

[Հետեւեալ բառերն գրելու է առոգանելին մէջ անոնց սխալ բաժանումներն ուղղելով և նկատի առնելով թէ որ մէկ կանոնին համեմատ ուղղուելու են։]

Barb-er, ge-nius, con-ven-ient, as-so-ciate, sei-zure, han-dy, Eas-tern, full-y, nee-dy, En-gland, tow-ards, a-not-her, handed, rus ty, wri ting, ess-ay, arb-usc-le, ind-ict, musc-le, vic-tu-als, mart yr, arch-bi-shop, ar-chang-el, ma-je-sty, pre-sid-ent, excel lenc y, Eu-phrat-es, Ne-wport, mount-ain, Amer-ic-a, rep-

ubl-ic, isla-nd, Hu-dson, co-unty, e-ther-eal, pro-phes-ying, des-pise, imp-ose, wi-thout, cu-tting, cons-ent, a-bsent· o-ppress, bran-chy, far-ming, dus-ty, clou-dy, drea-ry, pas-sing, Wes-tern, East-er, bask-et, e-xclaim, hel-pless, trou-ble-some, frui-tless, a-nswer, ha-ply, pe-rad-ve-nture, ma-ybe.

III. OF WORDS. Գ. ԲԱՌԵՐՈՒ ՄԱՍԻՆ։

Մէկ կամ մէկէ աւելի վանկեր միացած՝ երբ խօսելու կամ գրելու պահուն գաղափար մը կամ մտածման մէկ կերպը կ'արտայայտէ կը կոչուի **Բառ**. ինչպէս, *art*, *book*, *man*, *church*, *going*, *he*, *spoke*, եւն։

Բառերը իրարմէ կը զանազանուին սովորաբար իրենց **տե-սակին** կամ կազմութեան (spe'ci-es – (ս)փի'շիզ) եւ **ձեւին** (fig'ure – ֆի'կիուր) համեմատ։

Բառերը իրենց տեսակին համեմատ կարելի է բաժնել եր-կուքի, prim'i-tive (փրի'միթիվ) նախնական եւ de-riv'a-tive (տը-րի'վըթիվ) ածանցական։ Նոյնպէս՝ իրենց ձեւին համեմատ կա-րելի է բաժնել դարձեալ երկուքի, sim'ple (սի'մփլ) պարզ եւ com'pound (քա'մփաունտ) բարդ կամ բաղադրեալ։

Նախնական են այն բառերն որոնք արմատ են և իրենցմէ ա-ւելի պարզ բառէ մը շինուած չեն. ինչպէս, *harm*, *farm*, *great*, *con-nect'* (քըննէ'քթ – կապել, կցել, միացնել)։

Ածանցական են այն բառերն որոնք աւելի պարզ բառերէ շին-ուած են. ինչպէս, *harmless*, *farmer*, *greatly*, *connected*, *uncon-nected*, եւն։

Պարզ կը կոչուին այն բառերը, որոնք ուրիշ բառերէ բա-ղադրուած կամ բաղկացած չեն. ինչպէս, *man*, *house*, *never*, *less*, *the*, *watch*, եւն։

Բարդ կամ **Բաղադրեալ** կը կոչուին այն բառերը, որոնք եր-կու կամ աւելի պարզ բառերէ կը բաղկանան. ինչպէս, *watch-man*, պահապան. *housewife*, տանտիկին. *watchhouse*, պահակա-տուն. *nevertheless*, սակայն եւ այնպէս։

Մշտական բարդ կամ բաղադրեալ բառերը միացած կը գրուին. ինչպէս, *bookseller*, գրավաճառ, *doorkeeper*, դռնապան. մինչ առժամանակեայ բարդերը միութեան գծով մը իրարու հետ կը կցուին. այսպէս, *far-seeing*, հեռատես, *forget'-me-not*, զիս մի մոռնար (ծաղկի մը անուն է)։

NOTES FOR THE FIGURE OF WORDS.

ԲԱՌԵՐՈՒ ՁԵՒԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԿԱՆՈՆՆԵՐ։

1. Այն բառերը՝ որոնք կանոնաւորապէս կամ նմանութեամբ իրարու հետ բարդուած են, պէտք չէ իրարմէ զատուին. օրինակի համար՝ աւելի լաւ է գրել *bookseller, watchman, gentleman* քան *book seller, watch man, gentle man*։ Նոյնպէս աւելի լաւ է գրել *toward*, քան չէ ձեւով *to us ward*։

2. Բառերը՝ իրենց գործածուած տեղին համեմատ տուած նշանակութիւններուն համաձայն պէտք ենք իրարմէ զատել կամ միացնել. ինչպէս՝ a *glass** *house* կը նշանակէ տուն մը որ ապակիէ շինուած է. մինչ a *glasshouse* կը նշանակէ տուն մը, ուր մէջը ապակի կը շինեն, ապակի շինելու գործարան։

3. Երկու կամ աւելի բարդ բառեր երբ կցուին իրարու միեւնոյն նախադասութեան մէջ, անոնցմէ ոչ մին կրճատելու է. օրինակ՝ պէտք չէ ըսել *six or seventeen*, այլ ըսելու է *sixteen or seventeen*. նոյնպէս ըսելու չէ *goat and sheepskins*†, այլ *goatskins and sheepskins*։

4. Երբ բարդ բառի մը մասերը իրարու հետ չեն կրնար ուղղակի միանալ, և կամ իւրաքանչիւրը կը պահէ իր սկզբնական շեշտը, այն ատեն միութեան գիծը պահելու է բառերուն մէջ. օրինակ՝ *to-day, to-night, to-morrow, first-born, laughter-loving* (ծաղրասէր)։

5. Երբ բարդ բառի մը մասերը իրարու հետ լաւ կը միանան գանգուած մը կազմելու պէս, և բառին մէջ միայն մէկ մասն կ'ըլլայ շեշտուած, այն ատեն միութեան գիծ դնելու չէ. օրինակ՝ *gentleman, firearm* (հրազէն)։

Շեշտերու մասին, վերոյգրեալներէն ի զատ, գիտնալու պէտքն է կարեւոր բան մ'ալ բառի մը շեշտն (ac'cent—է՛քսենթ) է։

Շեշտադրութիւնը կամ Առոգանութիւնը արդէն յիշուեցաւ որ Քերականութեան չորրորդ կամ վերջին մասը կը կազմէ (Տես. Երես 248) և որը հասկացողութեամբ ըմբռնելու համար, մենք գիտենք որ մեր ուսանողի ցայս վայր ունեցած ծանօթութիւններն ու հմտութիւնը, զարգացումն ու պաշարը բաւական չեն. Մանաւանդ ինկատի ունենալով որ՝ Անգլիերէն խօսքի մը [illegible] եթէ չիտակ հնչումին ու սխալ շեշտումին, խօսքը չի-

---

* glass (կլէս — Ս.կ վանկ) ապակի. հայելի. ջրի գաւաթ

† skin (սքին — Ս.կ վանկ) մորթ — to skin, մորթը քերթել.

‡ [illegible] խաղի մէջ չիտակ չընել — խաբել

հասկցուիր*, կ'ամփոփենք այս տեղ՝ քերականութեան չափերէն դուրս, համառօտ գաղափար մը տալ ուսանողին շեշտի ու անոր գործածութեանց մասին, իբր մաս բառերը ուղիղ արտասանելու և ոչ՝ խսկական առոգանութեան կամ տաղաչափութեան։]

ACCENT. ՇԵՇՏ։

Շեշտը ձայնի այն մասնաւոր զարկն է որ կը դրուի բառ մը կարդալու կամ հնչելու ատեն անոր մասնաւոր մէկ վանկին վրայ, որով ան կ'որոշուի միւս մնացած վանկերէն։

Ձայնի այդ որոշիչ զարկը գրաւոր կերպով ալ կ'արտայայտուի սոյն նշանը ('), որը շեշտ կը կոչուի, դնելով բառի այն վանկին վրայ որը շեշտել կ'ուզուի. ինչպէս, *Bi'ble*, *con-sent'*, *pres'-i-dent*, *Je-ru'sa-lem*, ևն։

(Շեշտը Հայերէնի մէջ առ հասարակ շեշտուած վանկի ձայնաւորին վրայ կը դրուի. սակայն Անգլիերէնի մէջ շեշտուած վանկի վերջը կը դրուի։)

Մէկէ աւելի վանկեր ունեցող որ և է բառ իր վանկերէն մէկին վրայ անպատճառ շեշտ մը պիտի ունենայ. ինչպէս, *moun'tain*, *maj'es-ty*, *e-the're-al*։ Բարդ բառեր երբեմն երկու իրարու գրեթէ հաւասար շեշտեր կ'ունենան. ինչպէս, *e'ven-hand'ed*, *pa'per-ru'ling*, ևն։ Բազմավանկ երկար բառեր ալ առ հասարակ գլխաւոր կամ նախնական շեշտէն ի զատ երկրորդական շեշտ մ'ալ կ'ունենան. ինչպէս, *per''ad-ven'ture*, *al''to-geth'er*։

Անգլիերէնի մէջ շեշտերը կը թուին կառավարուած ըլլալ աւելի բառական կազմութեան համեմատ. այսպէս, Սաքսոներէնէ առնուած բառերուն շեշտերը առ հասարակ բառերուն արմատին վրայ կ'ըլլան. աւելի ուսեալ լեզուներէ առնուած բառերուն շեշտերը իրենց վերջաւորութեանց վրայ կ'ըլլան, և տարբեր շեշտեր ալ կը գործածուին մասնաւորապէս այս ինչ բառը միւսներէն որոշելու կամ անոր ազդեցութիւնը չափցնելու համար. ասկից կը հետևի որ Անգլիերէնի մէջ երեք տեսակ շեշտեր կան արմատական (rad'i-cal – րէ՛տիքըլ), վերջաւորութենական (ter''mi-na'tion-al – Թըրմինէ՛յշընըլ) և որոշիչ (dis-tinc'tive – տիստի՛նքթիվ)։

---

* ԾԱՆ.— Ծիշդ այս պատճառաւ է որ մասնաւոր հոգ տարած ենք սոյն գրքին սկիզբէն մինչև վերջ տրուած բառերուն ամեն մէկը իր յատուկ շեշտովը սորվեցնել ուսանողին։

Անգլիերէնի մէջ բառ մը ուղիղ շեշտելու համար, հետեւեալ քանի մը կանոններուն տիրանալ պէտք է։

1. Միավանկ բառերը շեշտ չունին. ինչպէս, ***God, chief,*** *tax,* ***pray***։

2. Երկավանկ բառերուն ընդհանրապէս առաջին վանկը կը շեշտուի. ինչպէս, *cit'y, coun'ty, e'ther, es'say*։

3. Սկիզբը կամ վերջը մասնիկ ունեցող բառերուն արմատը կը շեշտուի. ինչպէս, *a-cross', un-cer'tain,* ***king'dom, just'ly***։

4. Թէ անուն եւ թէ բայ եղող երկվանկ բառերուն (որոնցմէ մեծ թիւ մը կայ Անգլիերէն լեզուին մէջ) եթէ առաջին վանկը շեշտուի, բառը կը հասկցուի որ անուն է, եթէ վերջինը շեշտուի՝ բառը բայ կը լլնի. ինչպէս, *ac'cent,* շեշտ. ***ac-cent',*** շեշտել. *per'mit,* արտօնագիր, *per-mit',* արտօնել։

5. Երբ երկու ձայնաւորներ երկբարբառ մը չը կազմեն եւ զատ զատ վանկի հետ հնչուին, առաջին վանկը կը շեշտուի. ինչպէս, *Zi'on, li'on*։

6. Եռավանկ բառերէն շատերուն առաջին վանկը կը շեշտուի. ինչպէս, *maj'es-ty, pres'i-dent, pos'si-bly*։

7. Սակայն եռավանկ բառերէն անոնց՝ որոնց առաջին եւ վերջին վանկերը մասնիկներ են, բուն արմատը կը շեշտուի. ինչպէս, *un-clean'ness, dis-grace'ful*։

8. Գաղղիերէնէ առնուած բառերէն շատերուն վերջին վանկը կը շեշտուի. ինչպէս, *a-dieu', bi-jou'*։

9. Բազմավանկ բառերն կը շեշտուին իրենց արմատներուն պէս. ինչպէս, *ex-ceed'ing-ly* (ex-ceed' բառէն) ***e''ver-last'ing-ly*** (last բառէն)։

135. Վարժութիւն

[Ընդօրինակելու է տետրակին մէջ հետեւեալ բառերը դասակարգելով զիրենք իրենց տեսակին եւ ձեւին համեմատ. նախնական, ածանցական, պարզ եւ բարդ բառերէն առանձին առանձին օրինակներ ձեւացնելով։]

Ant, tent Eastern, noon, to-morrow, yester-day, Asia, hat-store, shoemaker, sinful, honesty, nonsense, national, attention, intention, whosoever, dusty, famous, dining-room, dressmaker, handful, hostess, hen, dime, necktie, farming, tearful, foothold, Southern, newspaper, new, whomever, door, there, hay, dawn, bathing, joyful, funny, having, like, crown, home, bone, good, much, yearly, high, deep, dull, able, dark, late, fraud, light, Frenchmen, dry-goods, dateless, healthy, Indian, wealth, nearer, gentlest, dearer, tongue, arc, hungry, **wrong, lawful,** pay-day,

sometimes, peach-tree, banking-house Dutchman, handless, bill-head, little, greatly, queer, narrow, bell, crowded, likewise, mail-box, sum, raw, least, early, cloud, pigeon-house, feather, **enjoy, chalk, shaken, sea-sick, alright, friendship, freedom, likely.**

136. Վարժութիւն

[Հետեւեալ նախնական բառերը ածանցական շինելով գրելու է տետրակին մէջ։]

Law, like, bank, day, wrong, friend, warm, man, great, wort.

[Հետեւեալ ածանցականներու նախնական բառերը գտնելով գրելու է տետրակին մէջ։]

Helpless, weekly, undoubtedly, punishment, kindness, association, priesthood, misunderstanding, suggestion, unhappy.

[Հետեւեալ պարզ բառերը բարդ բառեր շինելով գրելու է տետրակին մէջ։]

With, under, out, in, well, some, who, hat, book, look.

[Հետեւեալ բարդ բառերը իրենց պարզ բառերուն վերածելով գրելու է տետրակին մէջ։]

Reading-room, bookseller, altogether, porridge-pot, household, forever, everlasting, cowhide, clergyman.

137. Վարժութիւն

[Հետեւեալ Վարժութիւնը ընդօրինակելու է տետրակին մէջ նոյնութեամբ և իւրաքանչիւր բառին առջև նոյնձայն վանկով և նոյնայանգ բառ մը գտնել ու գրելու է. Օրինակ. love, *dove.*, wool, *tool.* ևն։]

love	hill, ...	dress. ....
wool, ...	can, ...	saw, ...
sharp, ...	any, ...	father, ...
coral, ...	funny.	sister, ...
cent, ...	pink, ...	northern, ...
dry, ...	let, ...	did. ....
bread, ...	little, ...	some, ...
told, ...	tell, ...	fry, ...
polite, ...	peach.	dust. ....
sail, ...	best, ...	deep, ...

[Ց] [Հ]

"Know nothing, fear nothing."

"A wise man changes his mind, but a fool never."

ԴԱՍ ԿԳ· (LESSON LXIII.)

IV. OF SPELLING*. Դ· ՀԵԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ։

Հեգելը լեզուագիտութեան արհեստի այն ճիւղն է, որով կարելի կ՚ըլլայ ներկայացնել բառ մը զայն կազմող գրերովը։

Լեզուագիտութեան այս կարեւոր ճիւղը կարելի է ձեռք բերել աւելի հեգելու յատուկ Հեգարաններով, Բառարաններով եւ կամ ընթերցանութեան պահուն՝ բառերուն ինչ գրերով հեգուած ըլլալը ուշի ուշով նկատողութեան առնելով, քան թէ հեգել սորվելու համար գրուած կանոններ գործածելով. որովհետեւ մենք արդէն տեսանք որ բառի մը հեգելը ն ունի գլխաւորաբար նոյն բառի գործածութենէն։

Անգլիերէն լեզուի ուղղագրութիւնը անորոշ եւ շփոթիչ ըլլալով, կարելի է յաճախ հանդիպիլ բառերու, զորս ամենալաւ հեղինակներն անգամ զանազան կերպերով կը հեգեն. մինչ ուրիշներ ալ կը հեգեն շատ մը բառեր հակառակ նոյնանման բառերու կազմութեանց, որք չեն կրնար չնորհքով երեւալ։

Հոս կուտանք քանի մը կանոններ միայն, որոնք կրնան օգտակար ըլլալ ուղղագրութեան ճշդասէր ուսանողներուն եւ երբեմն ազատել զիրենք պատահական շփոթութիւններէ։

RULES FOR SPELLING. ՀԵԳԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ։

1. Այն միավանկ բառերը՝ որոնք *f*, *l* կամ *s* կը վերջանան, եւ այդ վերջաւորութիւններն ալ եթէ մէկ ձայնաւորով նախադասուին, կը կրկնեն իրենց վերջին *f*, *l* կամ *s* բաղաձայնը. ինչպէս. *off*, *hill*, *glass*։

Այս կանոնէն բացառութիւն կը կազմեն clef‡, if եւ of, որոնք կը գրուին մէկ *f* ով. եւ as, gas§, has, was, yes, his, is, this, us, pus† եւ thus կը գրուին մէկ *s* ով։ Նոյնպէս քանի մ՚ուրիշ Լատիներէնէ առնուած գիտական բառեր կը գրուին մէկ *l* ով։

2. Այն բառերը՝ որոնք կը վերջանան *f*, *l* կամ *s* էն ի զատ ուրիշ որ եւ է բաղաձայնով, չեն կրկներ իրենց վերջին գիրը. ինչպէս. *rub*‖, *sun*, *dog***, *sum*, *God*, *cup*‡‡, *far*, *cut*, *fix*§§, *whiz*††։

---

* spell (սփէլ — մէկ վանկ) հեգել
‡ clef (քլէֆ — մէկ վանկ) երաժշտական բանալի
§ gas (կէս) կազ
† pus (փըս) թարախ, շարաւ
‖ rub (ռըպ) շփել
** dog (տոկ) շուն
‡‡ cup (քըփ) գաւաթ (ֆինճան)
§§ fix (ֆիքս) կարգադրել, շինել
†† whiz (հուիզ) սուլոցք — to whiz վզալ

Բացառութիւն են՝ abb, ebb, add, odd, egg, jagg, ragg, inn, err, burr, purr, butt, buzz, fuzz, yarr, *և քանի մ'ուրիշ յատուկ անուններ։ Թէ և կան նոյնանման բայց տարբեր նշանակութիւնով բառեր ալ որոց վերջին բաղաձայնը սոյն կանոնին համաձայն չկրկնուիր. ինչպէս,* jag, rag, in, bur և but։

[Այս բացառութիւններուն սորվիլը ուսանողը կրնայ զանց ընել ներկայիս և ապագային եթէ ուզէ կրնայ սորվիլ Good Brown ի Անգլիերէն Քերականութեանց Քերականութենէն։]

3. *Միավանկներն և այն բառերը՝ որոց վերջին վանկը կըշեշտուի, երբ վերջանան մէկ բաղաձայնով, (բաց ի x էն) և այդ բաղաձայնն ալ նախադասուած ըլլայ մէկ ձայնաւորով կամ զա էն վերջը մէկ ձայնաւորով, կը կրկնեն իրենց վերջին բաղաձայնը՝ ձայնաւորով սկսուած վանկ մ'ալ իրենց վրայ աւելնալէ առաջ. ինչպէս, thin, thinner. thinnest; swim*, swimmer, swimming; commit†, committed, committing, committee; acquit§, acquittal*։ (Տեսնել Նախ. երես 57 կանոն։)

Բացառութիւններ.— 1. x վերջացող բառերուն վերջին բաղաձայնը չի կրկնուիր. ինչպէս, mix‡, mixed, mixing, mixer։ 2. Այն առանցական բառերն՝ որոց շեշտը բառի առմամէն ուրիշ վանկի վրայ փոխուած է, միշտ չեն կրկներ իրենց վերջին բաղաձայնը. ինչպէս, refer′, ref′erance ref′erable։ 3. Այն բառերը՝ որոց վերջին բաղաձայնը Լատիներէնի մէջ կը կրկնուի, Անգլիերէնի մէջ ալ կը կրկնուի. ինչպէս, Britain‖, Britannic։

4. *Բառի մը վերջին բաղաձայնը՝ որ նախադասուած չէ մէկ ձայնաւորով, և բառին շեշտն ալ երբ վերջին վանկին վրայ չէ, ձայնաւորով սկսուած վանկ մ'ալ իր վրան աւելնալէ առաջ չկրկնուիր. ինչպէս,* oil, oily; real, realize**։

Բացառութիւններ կան։

5. *Միավանկ բառեր և Անգլիերէն բայեր չեն վերջանար c ով, այլ կրկնակ c ի փոխարէն կ'առնեն ck. ինչպէս, back, neck, wreck§§, attack††. սակայն աւելի ուսեալ լեզուներէ առնուած բառերը վերջին* k *չեն առներ. ինչպէս, Italic, mimic*։

---

* swim (ըսուիմ – մէկ վանկ) լողալ

† com-mit′ (քըմմի՛թ) ընել (առհասարակ չար բան մը)

§ ac-quit′ (ըքքուի՛թ) զրպարտութենէ անմեղ հրատարակել

‡ mix (միքս) խառնել

‖ Brit′ain (պրի՛թըն) Բրիտանական

** re′al-ize (րի՛ըլայզ) իրագործումը զգալ

§§ wreck (րէք) քանդում. – to wreck, քանդել

†† at-tack′ (ըթթէ՛ք) յարձակում, հարուած – to attack, յարձակիլ, հարուածել։

Բացառութիւն են *arc*, կամար. *orc*; տեսակ մը ձուկ. *lac*, տեսակ մը խէժ։ Հետեւեալ բառերն ալ *c*ն փոխարէն աւելի լաւ է *k*ով գրել. *zink*, *mark*, *disk*, *talck*։

6. Կրկնուած գրերով վերջացող բառերը, իրենց վրայ տարբեր գրով մը սկսուած մասնիկ մ'առնելէ առաջ, կը պահեն իրենց կրկնակի տառերը. ինչպէս, *seeing*, *hilly*, *illness*։

Բացառութիւններ կան։

7. Կրկնուած գրերով վերջացող բառերը՝ յառաջադիր մասնիկներով ածանցուած պահուն, կը պահեն իրենց կրկնակ գրերը. ինչպէս, *see*, *foresee; spell*, *misspell*; *tell*, *foretell; sell*, *undersell*։

8. Կրկնուած 1 (*ll*) վերջաւորութիւնը միավանկներուն, իրենցմով բարդուածներուն և իրենց արմատներէն յառաջադիր մասնիկով կազմուած ածանցականներուն յատուկ է. միւս մնացած բոլոր 1 վերջաւորած բառերը մէկ *l*ով պէտք է գրուին. ինչպէս, *until*, *civil**։

9. Համր կամ աննչան *e*ով վերջաւորող բառերուն վերջը՝ եթէ ձայնաւորով սկսող մասնիկ մ'աւելնայ, ընդհանրապէս *e* գիրը դուրս կը ձգուի. ինչպէս, *remove*, *removal*։ (Տես երես 56, կանոն։)

Բացառութիւններ են — 1. *ce* և *ge* վերջաւորող բառերուն վրայ եթէ *able* և *ous* մասնիկներն աւելցուին, *c* և *g*ն կակուղ ձայնը պահելու համար *e* գիրը նոյնպէս կը պահուի. ինչպէս, *peace*, *peaceable; courage*, *courageous*։ 2. *oe* վերջաւորած բառերուն արմատական ձայնը պահելու համար *e* կը պահուի. ինչպէս, *shoe*, *shoeing*։ Նոյնպէս *dyeing* և *singeing*† համանման *dying* և *singing* բառերէն զանազանելու համար տառադարձներու *e* կը պահուի։

10. *E* վերջաւորող նախնական բառերու վերջը եթէ բաղաձայնով սկսող մասնիկ մը աւելնայ, *e* գիրը կը պահուի. ինչպէս, *large*, *largely; judge*, *judgeship*։

Բացառութիւններ են — 1. Եթէ վերջի *e* ձայնաւորով մը նախադասուի, *e* գիրը երբեմն կը ձգուի. ինչպէս, *true*, *truly*; *argue*, *argument*։ 2. *Wholly* իւրենին բացառութիւն մ'է։

11. Նախնական բառի մը վերջին *y*ը եթէ նախադասուած ըլլայ բաղաձայնով մը, վրան մասնիկ մ'աւելցնելէ առաջ,

---

* civ'il (սի՛վիլ) քաղաքական

† singe (սինճ) խանձել

՝ր պէտք է i ի փոխել · ինչպէս, *merry**, *merrier*, *merriest*. *pity*†, *pitiless*, *pitiable*: (Տեսնել Դաս երես 79-80, կանոն ։)

Բացառութիւններ են 1· Այս կանոնը [illegible] համար, և ոչ բարդ բառերու. այսպէս կը գրուին *merciful*§, և *mercy-seat*: 2. *ing* կամ *ish* վերջաւորութիւններէն առաջ *y* ը *i* ի չփոխուիր, երկու *i* իրարու քով չգալու համար. ինչպէս, *pity*, *pitying*. *baby*, *babyish*:

12· *Նախնական բառի մը վերջին y ը եթէ նախադասուած ըլլայ ձայնաւորով մը, վրան մասնիկ մ'աւելցնելու համար y ը պէտք չէ i ի փոխել. ինչպէս, day, days; boy, boyhood; annoy*‡, *annoyance; joy, joyful*:

Բացառութիւններ են.— 1· *Lay*, *pay*, *say* և *stay* ին կը շինուին *laid*, *paid*, *said* և *staid*. բայց իրենց կանոնաւորներն ալ երբեմն կը գործածուին: 2. *Daily* աւելի գործածական է քան *dayly*. բայց ալ հակառակ *gayly*, *gayety*, աւելի գործածական են քան *gaily* և *gaiety*:

13· *Այն բառերը՝ որոնք ize կամ ise կը վերջաւորին նոյնահնչիւն են. ինչպէս, wise և size. ընդհանրապէս z կ'առնեն այն բոլոր պարագաներուն տակ երբ կ'ապէս վերջաւորութեան միջոցաւ կազմուած են. մինչ s կ'առնեն առ հասարակ միավանկներն և բոլոր անոնք, որոնք կ'ապէս յառաջադիր մասնիկներու միջոցաւ կազմուած են. ինչպէս, sympathize*‖, *disorganise***; *rise, arise, advise, surprise*:

Այս կանոնէն կարգ մը բացառութիւններ կան, զորս [illegible] նախադասութիւններն [illegible] չեն կրնար որոշել թէ բացառութիւն պէտք է համարել թէ ոչ, [illegible] կ'ընենք [illegible] յիշել. ուսանողը [illegible] պիտի [illegible] փորձութեամբ:

14· *Բարդ բառերը ընդհանրապէս նոյնութեամբ կը պահեն գիրերը բաղադրող պարզ բառերու ամեն մէկի ուղղագրութիւնը. ինչպէս, here-after, wherein*:

Բացառութիւններ են.— 1. *Full* և *all* բառերը հիմնական բարդ բառերու և այնպիսի ածանցական բառերու մէջ, որոց արմատը իրենք չեն, իրենց երկու *l* երէն մէկը կը ձգեն. այսպէս, *handful*, *careful*, *fulfill*, *always*,

---

* mer'ry (մէ'րի) ուրախ, զուարթ

† pit'y (փի'թի) գթութիւն, արգահատանք – to pity, գթալ, խանդաղատիլ

§ mer'cy (մը'րսի) շնորհք, գթութիւն, ողորմութիւն

‡ an-noy' (ըննօ'յ) ձանձրացնել [զզալ

‖ sym'pa-thize (սի'մփէթհայզ) ցաւակցիլ. համակրիլ, նոյնը

** dis-or'gan-ize (տիսօ'րկէնայզ) կազմակերպութիւնը լուծել – to organize, կազմակերպել

although. Իսկ ու ձայնաւորով սկսող բառերուն մէջ երկու լն ալ կը պահեն. օրինակ, *full-eyed*, *all-wise*։ 2. Նոյնպէս ալ *miss* յարակցական մասնիկը մէկ *s* կը ձգէ բաղադրութեանց մէջ. օրինակ, ***misspell***։ 3. Օրուայ անուններուն մէջ ***mass*** բառը կը թողու երկու *s* երէն մէկը. այսպէս, *Christmas*։ 4. Սեռական հոլովը յաճախ կը ձգէ իր առաղադարձը. այսպէս, ***kitesfoot***։ 5. Եթէ երեք գիրք միևնոյն տառէն իրարու քով գան, կամ մէկ գիրը պէտք է ձգել և կամ միութեան գիծ գործածել. այսպէս, ***ill-looking***, ***Ross-shire***։ 6. ***Chilblain****, ***welcome*** և ***welfare*** նոյնպէս բաղադրութեանց մէջ մէյմէկ *l* դուրս կը ձգեն։ 7. *Pastime* կը ձգէ մէկ *s*։ 8. *Shepherd*†, ***wherever***, ***whosever*** բառերը մէյմէկ *e* կը թողուն դուրս. և ***wherefore*** ու ***therefore*** մէյմէկ *e* կ'առնեն։

15. *Անգլիերէնի մէջ որ և է բառ հեգելու համար եթէ մասնաւոր կանոն մը չկայ, հեգելու է զայն անուանի գրագէտներու սովորութեանց համեմատ. հակառակ պարագային սխալ կը ճանչցուի։*

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Անգլիերէնի մէջ չուրջ երեք հարիւր և քսան բառեր կան, որոնք or կամ our կը վերջանան, սակայն հազիւ քսանասունը ներկայիս our ով կը գրուի. միւս Միացածներն or ով կը գրուին. ինչպէս,* *honor, favor*։

2. *Բառեր կան՝ որոնք այլ և այլ կերպերով կը գրուին. ինչպէս,* *enclose*‡, *inclose*‡; *enquire*‖, *inquire*‖; *emigrate*§, *immigrate*§, *ևն. սակայն սովորաբար իրենց գործածութիւններէն կամ լաւագոյն բառարաններէն սորվելու է*։

3. *Բացի միավանկներէն՝ ck վերջաւորութիւնը գրելու է c ով միայն. ինչպէս,* *almanack*, *musick*, *հիմայ կը գրուին* *almanac*‡‡, *music*‖‖։

---

* chil'blain (չի՛լպլէյն) ձմռուկ, ձմռնակ (Ռմկ. խըլտ)

† shep'herd (շէ՛ֆըրտ) հովիւ. – to shepherd հովուել

‡ en-close' (էնքլօ՛զ) ներփակել (կը գրուի նաև inclose, i ıcloze)

‖ en-quire' (էն-քուա՛յր) աւոր աւելի գործածական ձևն է in-quire, տեղեկութիւն խնդրել, հարցնել

§ em'i-grate (է՛միկրէյթ) դուրս գաղթել, երկրէն մեկնիլ– im'mi grate (ի՛միկրէյթ) ներս գաղթել, նոր երկրին մէջ մտնել հաստատուելու համար (migrat^ արմատական բառէն)

‡‡ al'ma-nac (օ՛լմընէք) օրացոյց

‖‖ mu'sic (մի՛ուզիք) երաժշտութիւն. նուագ

4. Առաջուան *re* վերջաւորութիւնը ներկայիս առ հասարակ *er* ի փոխուած է. այսպէս, *centre, fibre* հիմայ կը գրուին *center*‡, *fiber*†։

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

cliff	(քլիֆ)*	խարակ, բարձրաբերձ ժայռ
steep	(ս)-տիյփ)*	սեպաձեւ
re-stor'a-tive	(րի-սթօ'-րէթիվ)	վերահաստատիչ, կազդուրիչ
wash	(ուօշ)*	լուացք – to wash, լուալ
a-shame'	(էշէ'յմ)	ամչնալ
an'gel	(է'յնճըլ)	հրեշտակ
sound	(սաաունտ)*	ձայն. նեղուց. խորունկ քուն. առողջ – to sound, հնչել. ջրի խորութիւնը փորձել
doc'trine	(տա'քթրին)	վարդապետութիւն

138. Վարժութիւն

[Հետեւեալներն 1 ին կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

"A clif is a steep bank."

"Then it may please the Lord, they shal find it to be a restorative."

"The clothes wil be ill washed, the food wil be badly cooked; and you wil be ashamed of your wife, if she is not ashamed of herself."

"The angels of God, which wil good and connot wil evil, have nevertheless perfect liberty of wil."

"The room waz ful."

"Don't you feel wel?"

"Iz he stil there?"

"That iz not for sel."

"It seems to me this iz the sound of bels."

"This doctrine cuts off the excuse of al sin?"

"Haz he any gaz in hiz room?"

"Yez, but he never used it til yesterday."

"When wil you be there?"

"I shal be there in an hour or so."

---

‡ cen'ter (սէ'նթըր) կեդրոն – to center, կեդրոնացնել

† fi'ber (ֆա'յպըր) թուսական նեարդ

* Հնչուի մէկ անգամէն (մէկ վանկ)։

[Է] [Թ] [Ժ] [Ի]

mob	(մա՛պ)	ամբոխ
brain	(պրէյն)*	ուղեղ [ցող
bru-nette†	(պրօ-նէ՛թ)	թխագոյն գեղեցկութիւն ունե-
com-plex'ion	(քըմփլէ՛քշըն)	դէմքի երեւոյթ
bor'row	(պա՛րօ)	փոխ առնել
throat	(թհրօթ)*	կոկորդ, որկոր [բաղդաւոր
for'tune	(ֆօ՛րչըն)	բաղդ. հարստութիւն – fortunate,
slip	(սլիփ)*	սահիլը. յարաթերթ – to slip, սա-
sleep	(սլիյփ)*	քուն – to sleep, քնանալ [հիլ
cup	(քըփ)	գաւաթ
lip	(լիփ)	շուրթ
dar'ling	(տա՛րլինկ)	շատ սիրելի
milk'sop"	(միլ՛քսափ)	կաթ է և ջրէ շինուած (ուէ՛նշ մօրր)
he'ro	(հի՛յրօ)	հերոս
wit'ness	(ուի՛թնէս)	վկայ – to witness, վկայել

139. Վարժութիւն

[Հետեւեալներն 2րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

"The mobb hath many heads, but no brains." – *Old Maxim.*
"We had some hot cross bunn on Good Friday."
"Brunett *means* a woman with a brown complexion."
"Begg, buy, or borrow; butt beware how you find."
"It is better to have a house to lett, than a house to gett."
"Let not your tongue cutt your throat." *Old Precept.*
"A little witt will save a fortunate man." – *Old Adage.*
"There is many a slipp 'twixt‡ the cup and the lipp." – *Id.*
"Mothers' darlings make but milksopp heroes." – *Id.*
"One eye witness is worth tenn hearsays." – *Id.*

[Է] [Թ] [Ժ] [Ի]

rob	(րա՛պ)	կողոպտել – robber, գող – robbery գողութիւն.
com-mit'tee	(քըմի՛թի)	յանձնաժողով, կօմիթէ
crime	(քրայմ)*	ոճիր
ac-quit'	(էքքուի՛թ)	անպարտ արձակել

---

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

† Գաղղիերէնէ առնուած է, բայց աւելի կանոնաւոր է գրել brunet

‡ Կրճատուածն է betwixt բառի

[Հետեւեալներն 3րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակեցէք տետրակին մէջ։]

He was robed.
This is looking thiner.
I am taking swiming lessons.
The commitee will hold a hearing.
I beged him to do it.
I met a rober on the way.
This is the thinest paper I have.
Has he commited any crime?
I read he was acquited.

[Ը] [Թ] [Ծ] [Ի]

e'qual (ի՛յքուըլ) հաւասար—to equal հաւասարցնել — equality, հաւասարութիւն
dif'fer (տի՛ֆըր) տարբերիլ· տարակարծիք ըլլալ
toil (թօյլ) չարաչար աշխատանք —to toil, աշխատութեամբ յոգնիլ
wor'ship (ուը՛րշիփ) երկրպագութիւն — to worship, երկրպագել
crit'ic կամ critique (քրի՛թիք) քննադատ — critical, քննադատական· տագնապալից
con-di'tion (քընտի՛շըն) (—ոդիշ—ն) վիճակ, կացութիւն· պայման· հանգամանք
re'al-ize (րի՛յըլայզ) իբր իրողութիւն ընդունիլ
vis'it (վի՛զիթ) այցելութիւն — to visit, այցելել
car'ry (քէ՛րի) կրել, տանիլ
gos'sip (կօ՛սիփ. կա՛սիփ) բարբանջանք· բամբասանք — to gossip, շաղակրատել· բամբասել

141. Վարժութիւն

[Հետեւեալներն 4րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակեցէք տետրակին մէջ։]

This looks quite oilly.
The women of to-day are fighting for equallity.
I am differring with you.
I know she is toilling hard.
They were worshipping an unknown God.
He is in a criticcal condition.

Do you reallize what a blessing you have?
He always visitted the poor.
"Gossipping and lying go hand in hand." – *Old Maxim.*
Realy it is so.

[Է] [Թ] [Ժ] [Ի]

ep''i-dem'ic	(էփիտէ՛միք)	համաճարակ (-էր)․ փոխանցիկ
top ic	(թա՛փիք)	նիւթ (խօսակցութեան) [բառէն)
mag-net ic	(մագնէ՛թիք)	մագնիսական (magnet, մագնէս
scho-las tic	(ըսքօլա՛սթիք)	ուսանողական, կրթական, դպրոց-
stiff	(ըսթիֆ)*	չճռող, պինդ [ցական
math''e-mat'ics	(մաթըմէթի՛քս)	չափագիտութիւն

142․ Վարժութիւն

[Չեաւեալներն 5րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

"He hopes. therefore, to be pardoned by the critick.
That sounds as poetick as any.
He is a publick speaker.
She is taking lessons in musick.
There is not any epidemick in here at present.
France is a republick.
What are the topicks of this month?
It has magnetick power.
Avoid all scholastick stiffness.
She teaches mathematicks.

[Է] [Թ] [Ժ] [Ի]

in-stall'	(ինսթօ՛լ)	մասնաւոր արարողութիւնով պաշտօնին վրայ հաստատել – instalment կամ installment, մաս առ մաս վճարում
na'ture	(նէ՛յչըր)	բնութիւն – nat'u-ral, բնական – nat'u-ral-ly, բնական կերպով
skill	(ըսքիլ)*	հմտութիւն

143․ Վարժութիւն

[Չեաւեալներն 6րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

There is chiliness in the air.
He was dressed carelesly.

* Չի շեշտուիր է մէկ անվանկէն (մէկ վանկ)։

Now days you can buy anything on instalment.
He ran out fearlesly.
Naturaly it is so.
Generaly speaking ....
"The earth is the Lord's and the fulness thereof."
"He guided them by the skilfulness of his hands. - *Ps. lxxviii 72.*
That is equaly good.
It seems quite hily around here.

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

call	(քօլ)	*կոչ* – to call, *կոչել* – to recall, *եա կոչել* – to miscall, *գէշ անուն տալ*
be-fall'	(պիֆօ՛լ)	*պատահիլ*
res''o-lu'tion	(րէզօլօ՛-շըն)	*որոշում, որոշմնագիր*
ful-fill'	(ֆուլֆի՛լ)	*կատարել*
roll	(րօլ)	*թաւալում. պլորուած գլան. ցուցակ, արձանագրութիւն* - to roll, *թաւալել, պլորել, գլորել* — to enroll, *արձանագրել*—to unroll. *գլորուածը կամ փաթթուածը բանալ, պարզել.*
cheap	(չիյփ)	*աժան*
sigh	(սայ)	*հառաչ* – to sigh, *հառաչել*
ar-range'ment	(էրրէ՛նճմընթ)	*կարգադրութիւն*
set	(սէթ)	*կարգ. ձեռք (հագուստի Տճկ. թագը)* – to set, *դնել*
i-de'a	(այտի՛յա)	*գաղափար*

144. *Վարժութիւն*

[Հետեւեալներն 7րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

He was recaled.
Let no evil befal on you.
This word is misspeled.
"He makes resolutions, and fulfils them by new ones."
Then they unroled a nice flag
"Unwel; *means* not well, not in good health."
"Undersel; *means* to sell cheaper than an other."
"My heart will sigh when I miscal it so." – *Shakspeare.*
"But if the arrangement recal one set of ideas more readily than another."
All the Republicans should be enroled here.

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

i'dol (ա՛յտըլ) կուռք

gift (կիֆթ) նուէր – to gift, օժտել

pa-trol' (փէթրօ՛լ) պահապան զինուոր, ոստիկան, պահակ – to patrol, պահնորդութիւն ընել

tem'po-ral (թէ՛մփօրէլ) մարմնաւոր, աշխարհային

spir'i-tu-al (սփի՛րիթիուէլ) հոգեւոր

ben'e-fit (պէ՛նէֆիթ) օգտակարութիւն, օգուտ – to benefit, օգտակար ըլլալ

mar'shal (մա՛րշէլ) կարգապահ – to marshal, կարգապահութիւն ընել, մարզել

ex-cel' (էքսէ՛լ) գերազանցել

es-sen'tial (էսսէ՛նշէլ) էական

tri'al (թրա՛յէլ) փորձ. դատավարութիւն

per-pet'u-al (փըրփէ՛չուէլ) մշտնջենական

youth (եութհ) պատանեկութիւն, երիտասար- [դութիւն

145. Վարժութիւն

[Հետեւեալներն Ցրդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

"The righteous is taken away from the evill to come."

"He makes an idoll cf them, by setting his heart on them."

"Giving to severall men several gifts, according to his good pleasure."

He is a patrollman.

"And this the Lord doth, either in temporall or spirituall benefits."

He is a marshall.

He can not excell her.

This is very essentiall.

The triall will take place to-morrow.

There is no such a thing as perpetuall youth.

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

move (մուվ) շարժում – to move, շարժել, տեղափոխել, փոխադրել – re-move, տեղափոխութիւն – to remove, տեղափոխել

re-port' (րիփօ՛րթ) տեղեկագիր – to report, տեղեկա- [գրել

im-prove′	(իմփրու′-վ)	բարւոքել
at-ten′tion	(էթթէ′նշըն)	ուշադրութիւն
ob-scure′	(օպ-սքիու′-ր)	մթին – to obscure, մթնցնել [կել
ob-ject′	(էպճէ′քթ)	առարկայ, նիւթ – to object, առար-

146. Վարժութիւն

[Հետեւեալները 9րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

Removeal Sale!
The weather report says unchangeable to-day.
That is most likely improveable.
These are moveable.
They are not saleable.
It is most adviseable to pay him some little attention.
Judgeing from the facts. ....
That is obscureing the room.
Those are not loseable objects.
Proveable; *means* that may be proved.

[Ա] [Փ] [Ժ] [Դ]

whole	(հօլ)	ամբողջ, բոլոր
whole′some	(հօ′լ-սըմ)	առողջարար, օգտակար
pale	(փէյլ)	տժգոյն, գունատ
char′ac-ter	(քէ′րէքթըր)	նկարագիր
di′vers	(տա′յվըրզ)	քանի մը
en-large′	(էնլա′-րճ)	մեծցնել
man′age	(մէ′նէյճ)	կառավարել, տնօրինել

147. Վարժութիւն

[Հետեւեալները 10րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

"The child that we have just seen is wholesomly fed."
The arrangment was not perfect.
You better use your own judgment.
His palness is gone.
The judgship was tendered to him.
Don't speak falsly.
Falshood sinks the character of any good man.
Diversly *means* in different ways.
That is an enlargment of his little book.
The managment is without criticism.

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

de-ny'	(տինա՛յ)	*մերժել. ուրանալ*
bat'tle	(պէ՛թըլ)	*մարտ, պատերազմ, կռիւ* — to battle, *պատերազմիլ*

148· *Վարժութիւն*

[*Հետեւեալներն 11րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։*]

This was the merryest Christmas for me.
There was no merryment to enjoy.
I pityed him.
He was pennyless.
His condition is pityable.
He was denyed.
She is happyer than ever before.
That was the funnyest thing I ever saw.
It is very beautyful indeed.
This is going to be the bloodyest battle ever fought.

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

tur'key	(թը՛րքի)	*թրքահաւ, հնդկահաւ*
gay	(կէյ)	*զուարթ, պայծառ (գոյներով)*
meas'ure	(մէ՛ժըր)	*չափ* — to measure, *չափել*
mon'ey	(մը՛նի)	*դրամ*
val'ley	(վէ՛լի)	*ձոր*
in-ter'val	(ինթը՛րվըլ)	*միջոց*
moun'tain	(մա՛ունթին)	*լեռ*
wil'der-ness	(ուի՛լտըրնէս)	*ամայի տեղ, անապատ*
mon'key	(մը՛նքի)	*կապիկ*

149· *Վարժութիւն*

[*Հետեւեալներն 12րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։*]

Thou maiest go to her help.
Many dais have passed since we met.
These keis can not be used.
Turkies are sold very cheap.
He always buies from here.
"The gaiety of youth."

"He that buieth, must sell."
"With these measures fell in all monied men." – SWIFT.
"Vallies are the intervals betwixt mountains." – WOODWARD.
"I would not have given it for a wilderness of monkies."

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

a-rise′	(էրա՛յզ)	ելնել
sur-prise′	(սըրփրա՛յզ)	զարմանք – to surprise, զարմացնել, յանկարծակիի բերել
pat′ron-ize	(փէ՛թրընայզ)	պաշտպանել, (խանութը) յաճախել
au′thor-ize	(օ՛թհըրայզ)	արտօնել, իշխանութիւն տալ
bap-tize′	(պէփթա՛յզ)	մկրտել
sym′pa-thize	(սի՛մփէթհայզ)	ցաւակցիլ
or′gan-ize	(օ՛րկէնայզ)	կազմակերպել
un′ion	(եո՛ւնիըն)	միութիւն

150. Վարժութիւն

[Հետեւեալներն 13րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

He always arizes early in the morning.
They are worshipping the rizing sun.
He was surprized.
That store is well patronised.
He was advized to return at once.
Have you been authorised to do it?
He was baptised in the church.
We all heartily sympathise with you.
Are you willing to organise a brotherhood?
That union was disorganised long ago.

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

skylight	ձեղնալոյս
foretell	կանխաձայնել, գուշակել
downfall	անկում, կործանում

151. Վարժութիւն

[Հետեւեալներն 14րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

To-day is holiday.
They will give a farewel dinner in his honor.
Do ye also likewize.

There is skilight in that room.
You can easily fortell her downfal.
We passed the night in a farmhous.
Don't catch that buterfly.
This is a balot-box.
Don't seem to me that you have bacbone, young man.
Whose bancbook is this?

.152. Վարժութիւն

[Հետեւեալները 15րդ կանոնին համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

He is a good Kristian.
Neether he nor his brother was there.
I heerd him say so.
You must have some reezon for doing it.
Iz that your bouk?
He is a real genteelman.
I am very much pleezed to see you.
Hav you ben in Paris?
I so him yesterday.
He will be here tonite.
Will she go hom?
Hoo is there?
Cum here boys.
Let me cee you doing well.
He is an assoshiate justice.
Did you anser that letter?
They were playing basqet-ball.
It is a bioutifool day.
Is he your frend?
We all like to have some fen.
Can you spell condishen?
"I must make this speetch or die." – THEO ROOSEVELT.
Mount Ararat is the hiest mountain in Armenia.
This battle is fot for fredom and justice.
His magesty the king of England visited India last year.
He consented to rite an essay on the profets of Bibel.
New York sity is in the caunty of New York.
The Pope lives in Rom, Italy.

[Ի նկատի ունենալով Անգլիերէն լեզուի հեգելու բազմազան դժուարութիւններն՝ կէս դարէ աւելի է որ թէ Անգլիոյ և թէ Ամերիկայի Բանասիրաց Ընկերութիւններն կը ջանան Հէֆէլ-- Բօրէֆօրօ--Ֆնէր յառաջ բերել։ Սոյնցմէ մինչև ցարդ Ամերիկայի Բանասիրաց Ընկերութիւններէն ընդունուած, վաւերացուած և գործածութեան յանձնարարուածներն հետևեալ տասը պատուէրներուն մէջ կ՚ամփոփուին, զորս Նախկին Նախագահ Թէոդոր Ռուզվէլդ ևս, իւր նախագահութեան վերջին շրջանին մէջ, մասնաւոր նամակով մը վաւերացնելով, հրապարակեց. և այժմ բաւական շրջանակներու մէջ կը գործածուին։ Մենք ևս կը յանձնարարենք մեր ուսանողներուն որ հեգելու հին դրութեան հետ միասին այս նոր մէթոտին ալ ինքզինքնին լաւ ընտելացնեն, որմէ տարակոյս չունինք որ մեծապէս պիտի օգտուին։]

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԱՐԴԻ ԲԱՆԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾԱԾ

ՀԵԳԵԼՈՒ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ

1. e. — *Համր e երը ուր որ ձայն չեն հաներ ձգելու է. և re ի փոխարէն er գրելու է (բառի մը վերջաւորութեան մէջ). ինչպէս, live* (liv), *single* (singl), *eaten* (eatn), *rained* (raind), *theatre* (theater*), *ևն։*

2. ea. — *Ձգելու է a ը ea էն, երբ երկուքը միասին միայն e ի ձայն կը հանեն. ինչպէս, feather* (fether), *leather* (lether†) *ևն։*

3. o. — *Փոխան այն o երուն, որոնք u (ը but) ի ձայն կը հանեն, ճիշդ u գրելու է. ինչպէս, above* (abuv), *tongue* (tung), *ևն։*

4. ou. — *Ձգելու է o երը ou երէն երբ ou միայն u (ը) ի ձայն կը հանէ. ինչպէս, trouble* (trubl), *rough* (ruf), *ևլն։*

5. u, ue. — *Ձգելու է g էն վերջը եկած համր u ընիկ Անգլիերէն բառերու մէջ եւ a էն առաջ, նոյնպէս ձգելու է բառի մը վերջին ue. ինչպէս, guard* (gard , *league*** (leag), *ևլն։*

---

* the'a-ter (թի՛յէթըր) *թատրոն*

† leath'er (լէ՛թհըր) *կաշի, խաշախորդուած մորթ*

** league (լիկ) *միութիւն*

6. Կրկնակ բաղաձայններէն մէկը ձգելու է, ուր որ հնչական տարբերութիւն մը չըներ․ այսպէս, *written* (writn), եւն։

7. d. — Փոխելու է *d* կամ *ed* վերջաւորութիւններն *t*ի ուր որ այնպէս կը հնչուի․ ինչպէս, *looked* (lookt)․ բացի այն պահուն, երբ *e*էն առաջ եղած գրին ձայնը աղդուի․ ինչպէս, *chàfed**, եւն․, որ առեն նոյնը պահելու է։

8․ gh, ph. — Փոխելու է *gh* եւ *ph* երը *f*ի ամեն ուր որ այդպէս կը հնչուին․ ինչպէս, *enough* (enuf), *laughter* (lafter), *phonograph*† (fonograf), եւն։

9. s. — Փոխելու է *s* երը *z*ի ուր որ այդպէս կը հնչուի, մասնաւորապէս որոշիչ բառերու եւ *ise*ի մէջ․ ինչպէս, *abuse*§ (բայ, abuze), *advertise*‖ (advertize), եւն։

10. t. — Ջգելու է *t* երը *tch* երուն մէջ․ ինչպէս, *catch* (cach), եւն։

153․ Վարժութիւն

[Հետեւեալներն նոր կերպով հեգելու վերոյգրեալ տասն կանոններուն համեմատ ուղղագրելով ընդօրինակելու է տետրակին մէջ։]

1ին կանոնին համար․— Active, bargained, begone, bloomed, changeable, cleaned, examine, feared, give, given — centre, fibre.

2րդ․— Ahead, already, bread, dead, forehead, wealth, weather.

3րդ․— Among, come, does, done, dove, money, monkey, ton.

4րդ․— Couple, cousin, double, enough, touch, tough, young, zealous.

5րդ․— Guarantee‡, guardian¶, catalogue**, dialogue††, tongue.

6րդ․— Agrippa, ballot, beggar, bell, better, chilly, dress, happy, null.

7րդ․— Blessed, dressed, kneeled, learned, marked, matched, passed.

8րդ․— Laugh, tough, laughter, diphtong, nephew, orthography, phlegm, phrase, prophesy, Stephen.

9րդ․— Advise, arose, choose, desire, does, disguise, excise, please, present, president.

10րդ․— Hatch, hatchet, kitchen, match, notch, patch, watch.

---

* chaff (չէֆ) յարդ – to chaff, ծաղրել․ յարդի պէս մանրել

† pho'no-graph (ֆօ՛նօկրաֆ) ձայնագիր

§ a-buse', abuze (էպիւզ) չարաչար գործածել․ նախատել

‖ ad'ver-tise, advertize (է՛տվըրթայզ) ծանուցանել, գրաւոր հրապարակել [երաշխաւորել

‡ guar'an-tee (կէրընթի՛) երաշխաւորութիւն – to guarantee,

¶ guard'i-an (կա՛րտիըն) խնամակալ, պահապան, պաշտպան

** cat'a-logue (քէ՛թըլօկ) ցուցակ to catalogue, ցուցակագրել

†† di'a-logue (տա՛յըլօկ) երկխօսութիւն, խօսակցութիւն

ԴԱՍ ԿԴ· (LESSON LXIV.)

ՄԱՍՆ Բ·

ETYMOLOGY. ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ·

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆը կը սորվեցնէ խօսքի զանազան մասերը, անոնց դասաւորութիւնը և կրած փոփոխութիւնները։

Քերականութիւն հեղինակողները բաժնած են խօսքերը զանազան մասերու, կամ գլխաւոր դասակարգերու, որոց Մասունք Բանի (*The Parts of Speech**) անունը տուած են։

Մասունք բանիներն ալ կ'ստորաբաժնուին զանազան կարգերու, որոնք կը կոչուին դասակարգեր (classes, քլէսէս)։

Բառի մը կրած փոփոխութիւնները ըսելով պէտք է հասկնալ այն բառի վերջաւորութեան, ձեւի կամ նշանակութեան փոփոխութիւնը, որ յառաջ կուգայ անոր հոլովումէն, խոնարհումէն կամ ածանցուելէն։

PARTS OF SPEECH. ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ։

Մասունք բանի (խօսքի մասերը) կամ բառերուն այլեւայլ տեսակները Անգլիերէնի մէջ տասն են, սոնք են the Article‡ – Յօդ, the Noun – Անուն, the Adjective† – Ածական, the Pronoun – Դերանուն, the Verb – Բայ, the Participle – Ընդունելութիւն, the Adverb – Մակբայ, the Conjunction – Շաղկապ, the Preposition – Նախադրութիւն, և the Interjection – Միջարկութիւն։

1. THE ARTICLE. ՅՕԴԸ։

A կամ *an*, մը և *the*, ...ը, ...ն բառերը կը կոչուին Յօդ. ասոնցմէ ամէն մէկը բառի մը հետ կը գործածուի նոյն բառին նշանակութեան անորոշ կամ որոշեալ ըլլալը ցուցնելու համար. այսպէս, *a* hat, գլխարկ մը. *an* island, կղզի մը. *the* hat, գլխարկը, *the* island, կղզին։ (Տեսնել նաև երես 7։)

2. THE NOUN. (Գոյական) ԱՆՈՒՆԸ։

Ո և է անձի, տեղի, կամ բանի մը անունը, որ կրնայ գիտցուիլ, յիշուիլ կամ ըմբռնուիլ, կը կոչուի Գոյական Անուն. ինչպէս, *George*, Գէորգ. *Aram*, Արամ. *New York*, Նիւ Եօրք. *Van*, Վան. *man*, մարդ. *rose*, վարդ. *God*, Աստուած. *truth*, ճշմարտութիւն՝ Անուններ են։ (Տեսնել նաև երես 11։)

---

* speech (սփիչ – մէկ վանկ) բան, խօսք, զրուցուածք, ատենախօսութիւն

‡ ar'ti-cle (ա'րթիքըլ) իր, առարկայ, նիւթ. յօդուած. յօդ

† ad'jec-tive (է'ճէքթիվ) ածական

3. The Adjective. ԱԾԱԿԱՆԸ։

Ածականը բառ մ՚է, որ անունի մը վրայ դրուելով, կը ցուցնէ անոր ինչպէս ըլլալը. ինչպէս, A *wise* man, **իմաստուն** *մարդ մը.* a *new* book, **նոր** *գիրք մը.* You *two* are diligent*, **Դուք երկուքդ** *աշխատասէր էք։* (Տես Դաս երես 34։)

4. The Pronoun. ԴԵՐԱՆՈՒՆԸ։

Դերանունը բառ մ՚է, որ գոյական անունի մը տեղը կը դրուի. ինչպէս, The boy loves *his* books; *he* has long lessons, and *he* learns *them* well. *Տղան կը սիրէ* **իր** *գրքերն.* **Ինքն** *երկար դասեր ունի (իր դասերը երկար են) և* **ինքն** *աղէկ կը սորվի* **զանոնք**։ (Տես Դաս երես 97։)

5. The Verb. ԲԱՅԸ։

Բայը բառ մ՚է, որ կը ցուցնէ ըլլալ, ընել կամ ըլլուիլ. ինչպէս, I *am*, **Ես եմ.** I *love*, **կը սիրեմ.** I *am loved*, **կը սիրուիմ։** (Տես Դաս երես 108։)

6. The Participle. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ։

Ընդունելութիւնը բառ մ՚է. որ բայէ մը ծագում առած է. և գոյական անունի, ածականի ու բայի յատկութիւններն միանգամայն ունի. և ընդհանրապէս բայի պարզագոյն ձևին վրայ ing, d կամ ed աւելցնելով կը շինուի. ինչպէս, learn *բայէն կը շինուին երեք ընդունելութիւններ, երկու պարզ և մէկ բաղադրեալ. այսպէս,* 1. *learning*, **սորվելով.** 2. *learned*, **սորված.** 3. ***having** learned*, **սորված ըլլալով։** (Տես Դաս երես 108. ԾԱՆ.։)

7. The Adverb. ՄԱԿԲԱՅԸ։

Մակբայը բառ մ՚է, որ բայի մը, ընդունելութեան մը, ածականի մը կամ ուրիշ մակբայի մը վրայ կը դրուի. և կը ցուցնէ ընդհանրապէս ժամանակ, տեղ, պատճառ կամ կերպ. ինչպէս. *Now* boys come *here*. run *clear*, and return *slowly*. **Հիմա** *տղաքներ* **հոս** *եկէք, (այդ որոշուած տեղի)* **մինչև վերջը** *վազեցէք, և* **կամաց կամաց** *վերադարձէք։* (Տես Դաս երես 210։)

8. The Conjunction. ՇԱՂԿԱՊԸ։

Շաղկապը բառ մ՚է, որ կը գործածուի բառեր կամ խօսքեր իրարու հետ կապելու և այսպէս կապուածներուն ալ իրարմէ ինչ կախումն ունենալը ցուցնելու. ինչպէս, Aram *and* I must go to the mountains, *because* we need recreation. *Արամն* **ու** *ես լեռները պէտք ենք երթալ,* **որովհետև** *մենք կազդուրման կը կարօտինք։* (Տես Դաս երես 229։)

---

* dil'i-gent (տիլ'իճընթ) *ջանասէր*

9. The Preposition. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ:

Նախադրութիւնը բառ մ'է, որ կը գործածուի տարբեր իրերու կամ մտածումներու իրարու հետ ունեցած յարաբերութիւնը արտայայտելու. և կը դրուի ընդհանրապէս անունէ մը կամ դերանունէ մ'առաջ. ինչպէս, "The love *of* money is the root (*ռութ – արմատ*) *of* all evil." *«Դրամի սէրն ամեն չարիքներու արմատն է»:* The paper lies *before* me *on* the desk – (*տէսք – գրասեղան*). *Թերթը առջևս ձգուած է գրասեղանին վրայ:* (Տեսնել Դաս. երես 233:)

10. The Interjection. ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ:

Միջարկութիւնը բառ մ'է, որ յանկարծ կը բացագանչուի, մտքի զօրաւոր և յանկարծական մի յուզում մը արտայայտելու համար. ինչպէս, Oh! *Ո՜հ,* Alas! *Աւաղ:* (Տեսնել Դաս. երես 239):

[Վերոյգրեալներէն ուսանողն ինքնին նկատեց որ ինքն Մասունք Բանիններն կամ խօսքի մասը կտորներն արդէն սովրած է համառօտակի կերպով նախորդ Ա. – Կ. դասերուն մէջ թէև առանց գիտնալու որ իւր ուսածը քերականութիւն էր. այժմ կը մնայ միայն իւր արդէն գիտցածներէն մաս մը քիչ մ'աւելի ճոխացնել, որոց պէտք պիտի ունենայ հետզհետէ]:

Articles. ՅՕԴԻՐ:

Յօդը a, an կամ the բառն է, որ կը դրուի անունի մ'առջևը անոր որոշեալ կամ անորոշ ըլլալը ցուցնելու համար: (Տեսնել երես 7: Նոյնպ. երես 11 կանոն:)

Յօդի վերաբերեալ ուրիշ կանոններ և գիտելիքներ

ԿԱՆՈՆՆԵՐ

1. *U գիրը, եթէ բառերու սկիզբը եու հնչուի a յօդը կ'առնէ. ինչպէս, a* union *միութիւն մը. եթէ տարբեր հնչուի an յօդը կ'առնէ. ինչպէս an* uncle, *հօր կամ մօրեղբայր մը:*

2. *Քանի մը բառեր կան, որոնք եու ձայնով կ'սկսին, և a յօդը կ'առնեն. ինչպէս, a* eu'lo-gy (*եօ՛–լօճի*) *գովաբանութիւն մը:*

3. *Քանի մը բառերու սկզբի o գիրը ուօ կամ ուը խառն ձայն մը հանելուն համար, a յօդը կ'առնէ. ինչպէս, a* oneness, *միութիւն մը:*

4. *W կամ y ով սկսող բառերն a յօդը կ'առնեն. ինչպէս, a* woman, *կնիկ մը. a* week, *շաբաթ մը. a* youth, *երիտասարդ մը. a* year, *տարի մը:*

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1․ *Անորոշ յօդը միայն եզակի անուններու հետ կը գործածուի․ ինչպէս,* a man, *մարդ մը,* an eye, *աչք մը։*

2․ *Որոշեալ յօդը թէ եզակի և թէ յոգնակի անուններու հետ կը գործածուի․ ինչպէս,* the woman, *կինը,* the women, *կիները։*

Իբր բացառութիւն՝ անորոշ յօդն երբեմն յոգնակի գոյական ունեցող ածականներու հետ կը գործածուի․ ինչպէս, a few men, *քանի մը մարդիկ․* a great many of them, *անոնցմէ շատ շատեր․* a hundred men, *հարիւր (մը) մարդիկ։*

3․ *Յատուկ անուններն յօդ չեն առներ․ ինչպէս,* God, *Աստուած․* Christ, *Քրիստոս․* Armenia, *Հայաստան․* America, *Ամերիկա․* New York, *Նիւ Եորք։*

Սակայն յօդը դնելու է յատուկ անուններուն հետ

(ա) *Երբ մասնաւոր ընտանիք մը որոշել կ'ուզուի․ ինչպէս,* He was of the family of *the* Washingtons, *Ուաշինկթըններու ընտանիքէն էր (կը սերէր)։*

(բ) *Երբ յատկութիւն մը ցուցնել կ'ուզուի․ ինչպէս,* He is *a* Cicero, *Կիկերոն մըն է․ այսինքն լաւ ճարտասան մ'է։*

(գ) *Երբ ածականին նշանակութենէն գոյականը լռելեայն կը հասկցուի․ ինչպէս,* the Euphrates (*river*), *Եփրատը, այսինքն Եփրատ գետը։*

4․ *Վերացեալ անուններն ու մետաղներու անուններն յօդ չեն առներ, երբ ընդհանուր կամ անորոշ կերպով մը կը գործածուին․ ինչպէս,* virtue is happiness, *առաքինութիւն(ը) երջանկութիւն է․* gold* is valuable†։ *Բայց երբ մասնաւոր կամ որոշեալ կերպով մը կը գործածուին, յօդը դնելու է․ ինչպէս,* *The* happiness of a man, *մարդու մը երջանկութիւնը․* *the* gold of America, *Ամերիկայի ոսկին։*

Յօդի ուրիշ գործածութիւններն հատընտիր գրքեր կանոնաւորապէս և յաճախ կարդալով կը սովրուին։

THE NOUN. ԱՆՈՒՆԸ։

Ո և է անձի, տեղի, կամ բանի մը անունը, որ կրնայ գիտցուիլ, յիշուիլ կամ ըմբռնուիլ, կը կոչուի գոյական անուն․ ինչպէս, Armen, *Արմէն․* boy, *տղայ․* city, *քաղաք։* (Տեսնել նաև երես 11 և 293)։

Անուններն երկու գլխաւոր դասակարգերու կը բաժնուին․ Proper, *Յատուկ* և Common, *Հասարակ։* (Տեսնել երես 11)։

---

* gold (կօլտ) *ոսկի*

† val'u-a-ble (վէ'լիւ-էպլ) *արժէքաւոր*

Հասարակ անուններն ալ հինգ տեսակներու կ'ստորաբաժանուին. ասոնք են,

1. *A col-lect'ive* (քըլէ'քթիվ) noun, or *noun of mul'ti-tude* (մը'լթիթիուտ) Հաւաքական անուն (մը) կամ բազմութեան անուն. որ կը ցուցնէ շատ մը միասին առնուած անհատներու անուն մը. ինչպէս, committee, յանձնաժողով. meeting, ժողով. nation, ազգ:

2. *An ab'stract"* (է'պսթրէքթ) *noun*, Վերացական անուն (մը), որ կը տրուի տեսակի մը որ իր էութենէն զատ մասնաւոր յատկութիւն մը կը ցուցնէ. ինչպէս, Goodness, լաւութիւն. wisdom, իմաստութիւն. beauty, գեղեցկութիւն:

3. *A verbal* or *participial noun*, Բայանուն կամ դերբայ, որը ընդունելութեան պէս բայէ մը կը շինուի. և իբր անուն կը գործածուի. ինչպէս, Reading is in-struct'ive (ինսթրը'քթիվ) կարդալը սովրեցնող է (ընթերցանութիւնը հրահանգիչ է):

4. A thing *of its own kind* (sui generis), Բան մը իւր իր տեսակին. որը փոխանակ տեսակի մը մէկ անհատը ցուցնելու, կը ցուցնէ ինք իր տեսակին բան մը՝ առանց կամ անունին կամ իրի տեսակին շատութիւնը ցուցնելու. ինչպէս, music, նուագ. Cristianity, Քրիստոնէութիւն:

5. *A di-min'u-tive* (տիմի'նիութիվ) *noun*, Նուազական անուն (մը) կը ցուցնէ իր նշանակած իրի փոքրը. ինչպէս, hill, բլուր – hill'ock (հի'լըք) բլրակ. duck (տըք) բադ – duckling (տը'քլինկ) բադի ձագ, բադիկ:

Անգլիերէնի մէջ անուններն չորս տեսակ փոփոխութիւններ ունին. Թիւ, Դէմք, Սեռ և Հոլով: (Տեսնել երես 24:)

Թիւ

Թիւը անունի մը նշանակած բանի քանի հատ ըլլալը կը ցուցնէ. ուստի և երկու ք է, Sin'gu-lar (սի'նկիուլըր) Եզակի, որ մէկ հատ միայն կը ցուցնէ. ինչպէս, a boy, տղայ մը և Plu'ral (փլը'րըլ) Յոգնակի, որ մէկէ աւելի հատեր կը ցուցնէ. ինչպէս, the boys, տղաքներ:

Ընդհանուր կանոն.— Անգլիերէնի մէջ եզակի անուններն յոքնակի կ'ըլլան իրենց վերջն s գիր առնելով. ինչպէս, hat, գլխարկ. hats, գլխարկներ: (Տեսնել երես 24 կանոն:)

Այս կանոնէն շատ մը բացառութիւններ կան, որոցմէ մէկ քանին միայն կը յիշենք:

1. *Այն անունները՝ որոնք կը վերջանան ce, ge, ch* (չ). *che* (չ) *sh, s, ss, se, x, z և ze ով. մինչ cs առնելով յոքնակի կ'ըլլան և բառն ալ վանկ մը կ'աւելնայ. ինչպէս,* face, երես –

7․ *Իբրեւ անուն գործածուած ուրիշ որ եւ է մասունք բանի յոքնակի կ'ըլլայ ըստ ընդհանուր կանոնի․ ինչպէս,* the e-lec'tion (*էլէ՛կշըն*) returns, *ընտրական վերադարձները (արդիւնքն)։*

8․ *Կարգ մը բառերու յոքնակիները տարբեր նշանակութիւններ կ'ուտան․ ինչպէս,* arm, *բազուկ* – arms, *զէնքեր․* auxiliary, *օժանդակ* – auxiliaries, *վարձկան զօրք․* color, *գոյն* – colors, *դրօշ։*

9․ *Օտար լեզուներէ առնուած բառեր՝ ինչ լեզուէ որ առնուած են, այն լեզուի յոքնակի շինելու օրէնքին կը հետեւին։*

10․ *Անոնք որ կը կշռուին կամ կը չափուին եզակի կը գործածուին․ ինչպէս,* wheat (*հուիյթ – մէկ վանկ*) *ցորեն․* flour (*ֆլաուըր – մէկ վանկ*) *ալիւր․* wine, *գինի,* tea, *թէյ։ Բայց զանազան տեսակներ ցուցնելու համար յոքնակի կ'ըլլան․ ինչպէս,* wines, *տեսակ տեսակ գինիներ․* teas, *տեսակ տեսակ թէյեր։*

PERSONS. ԴԷՄՔԵՐ։

Դէմք կը կոչուի բառի մը այն յատկութիւնը, որով կ'որոշուի խօսողը լսողէն, եւ լսողն ալ վրան խօսուածէն։ Ասկից կը տեսնուի երեք դէմքեր կան․ first person, *առաջին դէմք․* second person, *երկրորդ դէմք․* third person, *երրորդ դէմք։*
(Տեսնել երես 30։)

GEN'DERS. (ճէ՛նտըրզ) ՍԵՌԵՐ։

(Տեսնել երես 30։)

Անգլիերէնի մէջ սեռը երեք է, the mas'cu-line (*մէ՛սքիուլին*) *արական,* the fem'i-nine (*ֆէ՛մինին*) *իգական, եւ* the neu'ter (*նիւ՛թըր*) *չէզոք։*

ՍԵՌԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1․ *Անգլիերէնի մէջ սեռը առ հասարակ բնական օրէնքով կը զանազանուի եւ Գաղղիերէնի կամ Արաբերէնի պէս չէ որ ամեն բառ սեռ ունենայ։ Դերանուններն ալ միշտ իրենց յարաբերած անունի սեռը կը ցուցնեն։*

2․ *Շատ մը անուններ թէ արական են եւ թէ իգական․ ինչպէս,* friend, *բարեկամ․* parents, *ծնողք․* neighbour, *դրացի․* person, *անձ․ եւն։ Այս տեսակ բառերուն, Քերականութեանց հեղինակներէն ոմանք* common gender, *հասարակ սեռ անունը տուած են։ Այս տեսակ բառերը, երբ խօսքի մը մէջ ուրիշ կերպով մը չեն որոշուիր արակա՞ն են թէ իգական, արական համարելու է․ եւ այն պարագային տակ որ չէ կարելի որոշել թէ բառ մը իգակա՞ն է թէ չէզոք, իգական համարե-*

Արական		Իգական	
heir,	ժառանգորդ	heiress,	ժառանգորդուհի
host,	հիւրընկալ	hostess,	հիւրընկալուհի
lion,	առիւծ	lioness,	մատակ առիւծ
negro,	սեւամորթ	negress,	սեւամորթուհի
poet,	բանաստեղծ	poetess,	բանաստեղծուհի
prophet,	մարգարէ	prophetess,	մարգարէուհի

2. *Քանի մը արական բառերուն* or *վերջաւորութիւնը Լատիներէնի պէս* rix *ի փոխելով, բառը իգական նշանակութիւն կ'առնայ. ինչպէս,*

Արական		Իգական	
administrator*,	կտակակատար	administratrix,	կտակակատարուհի
executor,	գործադրող	executrix,	գործադրողուհի

3. *Քանի մը արական բառերուն վրայ* a, na, *կամ* ina *աւելցնելով իգական կը լինին. ինչպէս,*

Արական			Իգական	
Augustus,	Օգոստոս	(Լատիներէն)	Augusta,	Օգոստուհի
Julius,	Յուլիոս	(Լատիներէն)	Julia,	Յուլիա
Sultan,	Սուլթան	(Տաճկերէն)	Sultana,	Սուլթանուհի
Don, (տօն)	Պարոն	(Սպաներէն)	Donna,	Պարոնուհի
Czar,	Զար	(Ռուսերէն)	Czarina,	Զարուհի

(Բ) Տարբեր բառերու գործածութեամբ. որոց շատ գործածուածներն հետեւեալներն են.

Արական		Իգական	
bach'e-lor (պէ՛չըլըր)	ամուրի	maid կամ maiden,	կոյս աղջիկ
beau,	պչրասէր երիտասարդ	belle,	պչրասէր երիտա-
boy,	մանչ տղայ	girl,	աղջիկ [սարդուհի
brother,	եղբայր	sister,	քոյր
bull,	ցուլ	cow,	կով
cock (քօք)	աքաղաղ	hen,	հաւ
father,	հայր	mother,	մայր
hero,	հերոս	heroine,	հերոսուհի
horse (հօրս)	ձի	mare (մէյր)	մատակ ձի
husband,	այր	wife,	կին
king,	թագաւոր	queen,	թագուհի
lad (լատ)	պատանի	lass (լաս)	դեռատի աղջիկ

* ad-min'is-ter (էտմի՛նիսթըր) *հանրային գործեր վարել. մատակարարել.*

lord,	*տէր*	lady,	*տիրուհի, տիկին*
nephew,	*եղբօր կամ քեռորդի*	niece,	*եղբօր կամ քեռ դուստր*
papa,	*հայր*	mama,	*մայր*
sir,	*տիար*	madam,	*տիկին* [*դուստր*
son,	*մանչ զաւակ, ուստր*	daughter,	*աղջիկ զաւակ,*
uncle,	*հօր կամ մօրեղբայր*	aunt,	*հօր կամ մօրաքոյր*

Գ. Բարդելով կամ բաղադրութեամբ. ինչպէս,

Արական		Իգական	
bride*groom*,	*փեսայ*	bride,	*հարս*
gentle*man*,	*ազնիւ այր*	gentle*woman*,	*ազնիւ կին*
land*lord*,	*տանտէր*	land*lady*,	*տանտիրուհի*
male,	*արու*	*fe*male,	*էգ*
man,	*այր*	*wo*man,	*կին* [*աղջիկ*
school*boy*,	*դպրոցական տղայ*	school*girl*,	*դպրոցական*

Դ. Դերանուններով. ինչպէս,

Արական		Իգական	
he,	*ինքն*	she,	*ինքն*
his,	*իր*	her,	*իր, զինքը*
him,	*զինքը*	hers,	*իրենը*

5. *Անձերու յատուկ անունները ինքնին իրենց սեռը կը յայտնեն. ինչպէս,* Paul, *Պօղոս.* Anna, *Աննա։*

6. *Մասնաւոր երկրի մը ժողովուրդը իրենց երկրի անունէն առնուած բառի մը հետ* man *եւ* woman *բարդելով կ'որոշուին. ինչպէս,* Englishman, *Անգլիացի (այր).* Englishwoman, *Անգլուհի.* Frenchman, *Գաղղիացի (այր).* Frenchwoman, *Գաղղիուհի։*

7. *Անշունչ կամ անկենդան առարկաները չէզոք են. բայց ասոնցմէ քանիները երբեմն իբր սեռ ունեցող կը ներկայացուին. ինչպէս,* sun, *արեւ.* time, *ժամանակ.* death, *մահ.* sleep, *քուն.* fear, *վախ.* anger, *բարկութիւն.* winter, *ձմեռ.* war, *պատերազմ. եւն. արական են։ Մինչ՝ գեղեցիկ, սիրուն կամ բեղմնաւոր իրերը իգական կը համարուին. ինչպէս,* ship, *նաւ.* moon, *լուսին.* earth, *երկիր.* nature, *բնութիւն.* fortune, *բաղդ.* knowledge, *գիտութիւն.* hope, *յոյս.* spring, *գարուն.* peace, *խաղաղութիւն, եւն. իգական են։*

8. *Երբ տղու մը կամ կենդանիի մը սեռը չենք գիտեր. երբեմն կարելի է չէզոք համարել. ինչպէս,* "The child was well, when I saw it." *Մանկիկը լաւ էր, երբ (ես) տեսայ զինք։ (Տեսնել Ծ[illegible]ներ։)*

9. Կան անուններ՝ որոնք միայն իգական են. ինչպէս, brunette, թուխ գեղեցիկ կին։

10. Երբեմն արական անունով էգերն ալ կը հասկցուին. ինչպէս, man is mor'tal (մօ՛րթըլ), մարդ մահկանացու է։

Cases. ՀՈԼՈՎՆԵՐ։

Հոլովը անունի մը կամ դերանունի մը ձեւին կրած այն փոփոխութիւնն է, որով կը յայտնուի այն անուան կամ դերանուան՝ խօսքին մէջ գտնուած միւս բառերուն հետ ունեցած յարաբերութիւնը։

Անգլիերէնի մէջ միայն երեք հոլովներ կան. the *nom'i-na-tive* (նօ՛մինէյթիվ) ուղղական (ը). the *pos-sess'ive* (փըզզէ՛սիվ) կամ the *gen'i-tive* (ճէ՛նիթիվ) սեռական (ը) եւ the *ob-jec'tive* (ըպճէ՛քթիվ) կամ the *ac-cu'sa-tive* (էքքիու՛զէյթիվ) հայցական(ը)։ (Տեսնել երես 31։)

Եզակի ուղղական հոլովը բառի մը պարզ եւ անփոփոխ ձեւն է։

Խօսքի մը մէջ գտնուած ուղղական հոլովն առ հասարակ գործողութիւնը կատարողն է. և կը կոչուի sub-ject' (սըպճէ՛քթ) տէր բայի։ (Տեսնել երես 108, բացատրութիւններ։)

Սեռական հոլովը կը ցուցնէ ստացողը. (Տեսնել երես 31). եւ երկու կերպ է. առաջին եւ ընդհանուր կերպն է 's ով շինուածը (Տեսնել երես 31, կանոն). երկրորդ կերպն է հայցականին *of* նախադրութիւնը նախադասելով. այսպէս, The churches *of* New York, Նիւ Եորքի եկեղեցիները. the election *of* the president, նախագահին ընտրութիւնը։ Այսպէս նախադրութեան մը հետ գործածուած բառը նախադրութեան առարկան կամ խնդիրը (ob-ject' – ըպճէ՛քթ) կը կոչուի։

Հայցական հոլովը ճիշդ ուղղականին պէս է, եւ բայի գործողութեան ուղղակի առարկան կամ խնդիրն է. ու կը կոչուի նոյնպէս *object*, ուղղ. խնդիր։ Հայցական հոլովը երբ նախադրութեան մը հետ գործածուի, նախադրութեան խնդիրը կ'ըլլայ եւ կը կոչուի անուղղակի խնդիր. ինչպէս, "Take this book. and put it on my desk". «Առէք այս գիրքը եւ դրէք զայն գրասեղանիս վրայ». խօսքին մէջ *book*, գիրք բառը ուղղ. խնդիր է առէք բային. մինչ *desk*, գրասեղան բառը անուղղակի խնդիր է on, վրայ նախադրութեանը։ (Տեսնել նաեւ երես 31-32։)

Անուններու հոլովումը (Տեսնել երես 53-54։)

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հին քերականութեանց հեղինակներէն ոմանք հոլովներուն թիւը չորսի, ոմանք հինգի, ոմանք Լատիններէնի հետեւելով վեցի եւ ոմանք մինչեւ եօթնի կը բարձրացնեն. այսպէս,

Nominative, *Ուղղական* (*Nom.* Ուղ.)

Possessive *կամ* Genitive, *Սեռական* (*Poss.* or *Gen.* Սեռ.)

Da'tive (տէ՛յթիվ) *Տրական* (*Dat.* Տր.), *որը կը չինուի հայցական հոլովին to նախադրութիւնը նախադասելով.*

Objective *կամ* Accusative, *Հայցական* (*Obj.* or *Acc.* Հայց.)

Ab'la-tive (է՛պլէթիվ) *Բացառական* (*Abl.* Բաց.) *որը կը չինուի հայցական հոլովին from նախադրութիւնը նախադասելով.*

In"stru-men'tal (ինսթրումէ՛նթըլ) *Գործիական* (*Instr.* Գործ.), *որը կը չինուի հայցական հոլովին by կամ with նախադրութիւնը նախադասելով. եւ*

Voc'a-tive (վա՛քէթիվ) *Կոչական* (*Voc.* Կոչ.) *որը ուղղականին հետ նոյն է եւ երբեմն զարմացական նշանով կը գործածուի։ Այն հոլովներով բառ մը կը հոլովուի այսպէս.*

Singular.		Եզակի։
Nom.	the lady	Ուղ. *տիկինը* (լէյտի)
Poss.	the lady's *or* of the lady	Սեռ. *տիկնոջը* (լէյտիզ)
Dat.	to the lady	Տր. *տիկնոջը* (թու)
Obj.	the lady	Հայց. *տիկինը* (դը)
Abl.	from the lady	Բաց. *տիկնոջմէն* (ֆրոմ)
Inst.	by *or* with the lady	Գործ. *տիկնոջմովը* (բայ օր ուիդ)
Voc.	(O) lady!	Կոչ. *ո՛վ տիկին* (օ)
Plural.		Յոգնակի։
Nom.	the ladies	Ուղ. *տիկինները* (լէյտիզ)
Poss.	the ladies' *or* of the ladies	Սեռ. *տիկիններու* (լէյտիզ)
Dat.	to the ladies	Տր. *տիկիններուն* (թու)
Obj.	the ladies	Հայց. *տիկինները* (դը)
Abl.	from the ladies	Բաց. *տիկիններէն* (ֆրոմ)
Inst.	by *or* with the ladies	Գործ. *տիկիններովը* (բայ օր ուիդ)
Voc.	(O) ladies!	Կոչ. *ո՛վ տիկիններ,* (օ)

2. *Սեռական հոլովի երկու ձեւերը միշտ միեւնոյն գաղափարը չեն տար. օրինակի համար,* The Lord's day, *Տիրոջ օրը* (Լորտզ տէյ ըսել է) – the day of the Lord, *Տիրոջ օրը* (Դը տէյ օֆ դը Լորտ ըսել է). the king's pic'ture (փի՛քչըր) *Թագաւորի* (քինկզ) *պատկերը* – the picture of the king, *Թագաւորի պատկերը* (դէմ+ը ըսել է)։

3. *Նախադրութիւնով չինուած սեռականը առ հասարակ անասուններու եւ անկենդան բաներու կը գործածուի. եւ երբեմն ալ, երբ* 's *ով չինուածը, ականջի ախորժելի չիգար, եւ կամ բառը երկար կ'ըլլայ, նախադրութիւնով չինուածը տեղը կը բռնէ. ինչպէս,*

The skin *of the fox,* — աղուէսին մորթը.
the end *of. the road,* — ճամբուն ծայրը.
the land *of Phi'lis-tines* (ֆիլ'իս-թայնս) — Փղշտացւոց երկիրը։

4. *Սեռական հոլովի մէկ ձեւը կարելի է միւս ձեւին վերածել. այսպէս,*

Washington's army (ա'րմի) The army of Washington	Ուաշինկթընի բանակը
A mother's heart The heart of a mother	մօր մը սիրտը
A man's duty The duty of a man	մարդու մը պարտականութիւնը
In our Saviour's* time In the time of our Saviour	մեր Փրկչին ժամանակը (օրերը)

Դիտելու է սակայն որ այս փոփոխութիւնը միշտ չըլլար. օրինակի համար, կարելի է A crown of gold, *ոսկիէ թագ մը ըսել, որ կը նշանակէ ոսկիէ չինուած. բայց չէ կարելի փոխելով ըսել* a gold's crown. *նոյնպէս կ'ըսուի* a cup of tea, *գաւաթ մը թէյ. բայց չըսուիր* a tea's cup։

5. *Երբ բան մը մէկէ աւելի անձերու կը պատկանի, սեռականի նշանը վերջինոյն վրայ միայն կը դրուի. այսպէս,* Paul, Aram and Armen'*s* store, *Պօղոսի, Արամի եւ Արմէնի խանութը։ Բայց եթէ նոյնը զատ զատ անձերու կը պատկանի, սեպհականատէրերու ամենքն ալ սեռականի նշանն առնելու են. ինչպէս,* Web'ster'*s* (ուէ'պսթըր'զ), Worcester'*s* and John'son'*s* (ճա'նսըն'զ) Dic'tion-a-ry (տի'քշընէրի), *Ուէպսդրի, 'Ուսդրի եւ Ճանսընի բառարանը։*

6. *Եթէ երկու կամ աւելի բառեր մի եւ նոյն անձը ցուցնելու ըլլան, սեռականի նշանը վերջինին վրայ դրուելու է. այսպէս,* George Washington'*s* administration, *Ջէորջ Ուաշինկթընի կառավարութիւնը։*

---

*Sa'vior *կամ* Sa'viour (սէ'յվիըր) *Փրկիչ* – to save (սէյվ) *փրկել բառէն*

7 Բաղադրեալ բառերու մէջ վերջի մասը կ'առնէ սեռականի նշանը. այսպէս, son-in-law's, փեսայի։

Բաղադրեալ անուններու քանի մը տեսակներն են,

Անուն և անուն.	God-father,	կնքահայր.
Ածական և անուն.	grand-mother,	մեծ մայր.
Անուն և բայ.	God-send,	Աստուծմէ ղրկուած.
Անուն և բայանուն.	cock-crowing*,	հաւախօս.
Բայանուն և անուն.	raining-weather,	անձրեւային եղանակ.
Դերանուն և անուն.	he-goat,	նոխազ.
Բայ և Մակբայ.	cast-away,	լքեալ.
Մակբայ և Բայ.	off-set,	բողբոջ.
Մակբայ և անուն.	out'line" (աութ'լայն)	յատակագիծ, նախագիծ, սահմանագիծ.
Նախադրութիւն և բայ.	out-set,	սկիզբ.
Բայ և անուն.	break'fast, (պրէք'ֆէսթ)	նախաճաշ.
Անուն նախադրութիւն և անուն.	son-in-law,	փեսայ։

Adjectives. ԱԾԱԿԱՆՆԵՐ։

Ածական կը կոչուին այն բառերը, որոնք գոյականի մը կամ դերանունի մը վրայ դրուելով անոր որպիսութիւնը, յատկութիւնը կամ մէկ պարագան կը ցուցնեն. ինչպէս, a *new* hat, նոր գլխարկ մը. a *good* boy, լաւ տղայ մը. you *two* are *excellent*, դուք երկուք(դ) գերազանց էք։ (Տեսնել նաև երես 34 և 294-3։)

Անգլիերէնի մէջ ածականներն կարելի է վեց կարգի բաժնել հետեւեալ կերպով.

Ա. *Cammon adjective*, հասարակ ածական, որ հասարակ անունէ մը եկած է. ինչպէս, Good, լաւ. bad, գէշ. eastern, արեւելեան. inner, ներքին. ևն։ (Այս ածականներն մօտաւորապէս 6000 բառերու կը հասնին։)

Բ. *Proper adjective*, յատուկ ածական, որ յատուկ անունէ մ'եկած է. ինչպէս, American, (America բառէն) Ամերիկացի. Roman (Rome բառէն) Հռովմայեցի. English, Անգլիերէն. ևն։ (Այս կարգի ածականներն կրնան հոլովուիլ անուններ դառնալ։)

Գ. *Nu'mer-al* (նիւ'մըրըլ) *adjective*, Թուական ածական, որ որոշ թիւ կը ցուցնէ. ինչպէս, five, հինգ. six, վեց. ten, տասն. ևն։

---

* crow (քրօ — մէկ վանկ) ագռաւ. հաւախօս – to crow, աքաղաղի կուկլու կուկու կանչել

Դ· *Pro-nom'i-nal* (փրօնա՛մինըլ) *adjective*, դերանուանական ածական, որ երբեմն ածականի և երբեմն ալ դերանունի պէս կը գործածուի· ինչպէս, all, բոլոր· each, ամեն մէկ։

Ե· *Participial adjective*, դերբայական ածական, որ ընդունելութեան ձև ու ածականի նշանակութիւն ունի· ինչպէս, An amusing* story†, զուարճալի պատմութիւն մը։ Այս կարգի ածականներէն մեծ մասը *un* յառաջադիր մասնիկովը կ'սկսի· ինչպէս, *un*divided, անբաժան։

Զ· *Compound adjective*, բաղադրեալ կամ բարդ ածական, որ երկու կամ աւելի բառերէ կը բաղկանայ· ինչպէս, sunburnt, արևակէզ։ (Այս կարգի ածականներն ըստ հաճոյս անթիւ կերպով կրնայ չինուիլ)։ (Տեսնել դաս. երես 54։)

Թուական ածականներն ալ կ'ստորաբաժնուին երեքի,

1· *Car'di-nal* (քա՛րտինըլ) *number*, բացարձակ թուական ածական· որ բանի մը քանի հատ ըլլալը կը ցուցնէ· ինչպէս, one, մէկ, two, երկու, three, երեք· four, չորս· ևն։

2· *Or'di-'nal* (օ՛րտինըլ) *number*, դասական թուական ածական, որ թուի մը վերջինը կամ շարքի մ'առաջինը կը ցուցնէ· ինչպէս, first, առաջին· second, երկրորդ· ևն։

3· *Mul'ti-pli-ca"tive* (մըլ՛թիփլիքէյթիվ) *adjective*, բազմապատիկ թուական ածական· որ թուի մը քանի պատիկը կը ցուցնէ· ինչպէս, double կամ twofold, կրկին, երկպատիկ· tenfold, տասնապատիկ· ևն։ (Տեսնել դաս. երես 88-93։)

Թուական ածականներն յաճախ կը գործածուին իբր անուն· ինչպէս, "The *seventy*'s trans-la'tion" (սէվընթիզ թրանսլէ՛յշըն) «Եօթանասունից թարգմանութիւնը»· "there are *millions* of truth, that a man is not concerned‡ to know" «Միլիոնաւոր ճշմարտութիւններ կան, զորս մարդ մը չի հետաքրքրուիր գիտնալ»։

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1· Անգլիերէնի մէջ ներկայիս ածականը՝ թիւի, սեռի և հոլովի կողմանէ որ և է կերպով չի փոխուիր· ինչպէս, A *good* man, աղէկ մարդ մը· ten *good* men, տասն աղէկ մարդիկ· a *good*

---

* a-muse' (էմիւ՛զ) զբօսցնել, զուարճացնել

† sto'ry (ստօ՛րի) պատմութիւն, վէպ – յարկ· դստիկոն

‡ con-cern' (քընսը՛րն) վերաբերութիւն· պարտաճանաչութիւն· փոյթ – to concern, վերաբերիլ, պատկանիլ, հետաքրքրուիլ, փոյթ տանիլ

man's, ողջէ մարդու մը. a *good* girl, ողջէ աղջիկ մը։ Նոյնպէս *he* և *she*, երբ իբր ածական գործածուին սեռ ցուցնելու համար, անփոփոխ կը մնան. ինչպէս, *he*-goat, նոխազ. *she*-goats, այծեր։

2. Բայերն առ հասարակ-ածական կը դառնան իրենց վերջը մասնիկ մ'առնելով. ինչպէս, teach, սորվեցնել – teach*able*, ուսուցանելի. move, շարժել – mov-*able*, շարժական։ Սակայն քառասուն բառի չափ *ate* վերջաւորող բառեր կան, որոնք ձևի տարբերութիւն մը չունենալով, թէ բայ և թէ ածական են. ինչպէս, associate, ընկերակցիլ, գործակցիլ – ընկերակից, գործակից. mod'er-ate (մա՛տըրէյթ) չափաւորել – չափաւոր. re-it'er-ate (րիի՛թըրէյթ) կրկնել – կրկնած։ Այս դասակարգի բառերն հետզհետէ նուազելու վրայ են, իրենց տեղը կը գրաւեն *ed* վերջաւորող ընդունելութիւններն. ինչպէս, փոխան reiterateի կը գործածուի այժմ reiterat*ed*, կրկնած։

3. Միավանկ չեղող ածականներէն շատերը առ հասարակ հետևեալ մասնիկներէն մէկովը կը վերջանան. *en*, *ly*, *ful*, *ty*, *some*, *ish*, *ic*, *ous*, *al*, *ar*, *ine*, *ive*, *ary*, *ory*, *able*, *ible*, *ent*, *eous*, *less*. (Տեսնել նաև երես 55, կանոն)։ Բայց որովհետև այս վերջաւորութիւններով մակբայներ ալ կան, ուսանողին կը մնայ բառի դիրքէն եւ խօսքի իմաստէն ճանչնալ թէ բառը ածակա՞ն է թէ մակբայ. եւ այս մասին հետեւեալ օրինակներն կրնան որոշ գաղափար մը տալ. "Is your father *well?*" – *Gen.*, xliii., 27. «Ձեր հայրը ...... ողջ՞ն է» – Ծնն. խ., 27։ "Thou hast *well* said." – *John*, iv., 17. «Աղէկ ըսիր» – Յովհ. դ., 17։ "It had not *much* earth." – *Marx*, iv., 5. «Ուր որ շատ հող չկար» – Մար. գ., 5։ "For she loved *much*." – *Luke*, vii., 47. «Ինչու որ շատ սիրեց» – Ղուկ. է., 47։

4. Գոյական անուն մը երբեմն քանի մը ածականներ կ'ունենայ. ինչպէս, The *old good* man was always at his desk, ծեր բարի մարդը միշտ իր գրասեղանին առջեւ էր։

5. Ածականներ կան որ իրարու շատ յար եւ նման են. ինչպէս, womanly, կանացի եւ feminine, իգական. – որոց առաջինը Սաքսոններէնէ առնուած է, մինչ երկրորդը Լատիններէնէ. բայց նշանակութեամբ կը տարբերին եւ լաւ չէ մէկը միւսին տեղ գործածել։ Այսպիսի բառերու ճիշդ գործածութիւնը ուսանողը պիտի կրնայ սորվիլ Անգլիերէն լեզուին մէջ աւելի յառաջդիմելով։

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆԸ (COM-PAR'I-SON, քօմփէ՛րիսըն)

(Տեսնել երես 78-80։)

Ածականներն՝ բաղդատութեան համար երեք աստիճաններ (de-gree' – տիկրի՛յ) *ունին. Փոզիթիվը կը ցուցնէ ածականը իր պարզ վիճակին մէջ եւ ուրիշներու հետ կապակցութիւն չունի. Քոմփէրէթիվը երկու անձեր կամ իրեր իրարու հետ կը բաղդատէ. եւ Սիւփըրլէթիվը երկուքէ աւելի անձերու կամ իրերու ամենէն լաւը կը ցուցնէ։*

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Կան ածականներ, որոց նշանակութիւնը ընդհանուր առամամբ բաղդատութիւն չվերցներ. եւ ասոնք կարելի է երկու դասակարգի բաժնել.

1. *Բացարձակ թուականներն.* one, *մէկ.* ten, *տասն.* several, *քանի մի։*

2. *Նիւթի, ժամանակի, տեղւոյ եւ անձի վերաբերութիւն ցուցնող ածականներն. ինչպէս,* earthly, *երկրային.* heavenly, *երկնային.* golden, *ոսկեղէն.* wooden, *փայտեղէն.* natural, *բնական.* – daily, *օրական.* everlasting, *յաւիտենական.* perpetual, *մշտնջենական.* infinite, *անսահման.* continual, *շարունակական* – American, *Ամերիկեան.* Armenian, *Հայկական.* British, *Բրիտանական.* Turkish, *Թրքական.* Russian, *Ռուսական.* Almighty, *Ամենակարող.* chief, *գլխաւոր.* dead, *մեռած.* human, *մարդկային.* living, *կենդանի։*

PRONOUNS. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ։

(Տեսնել երես 97-101։)

Դերանունը բառ մ'է, որ անունի մը տեղը կը դրուի, զայն չկրկնելու համար. ինչպէս, The boy loves *his* book; *he* has long lessons, and *he* learns *them* well, *տղան կը սիրէ իր գիրքը. իր դասերը երկար են, և ինք լաւ կը սորվի զանոնք. խօսքին մէջ he, ինք. և them, զանոնք դերանուններ են։*

Այն բառը՝ որուն համար դերանունը գործածուած է, կը կոչուի an'te-ce'dent (էնթիսի՛յտընթ) *նախընթացը կամ յարաբերեալը. ինչպէս վերի օրինակին մէջ the boy, տղան նախընթացն է he, ինք դերանուան և lessons, դասեր նախընթացն է them, զանոնք դերանուան։*

ԿԱՆՈՆ.— Ամեն մէկ դերանուն պէտք է իր նախընթացին համաձայնի թուով, դէմքով և սեռով (բացառութիւնը հազուագիւտ է). ինչպէս վերի օրինակին մէջ he, ինք եզակի, երրորդ դէմք և արական է, համաձայնած ըլլալով the boy, տղայ

նախընթացին, որը նոյնպէս եզակի, երրորդ դէմք և արական է. նոյնպէս ***them***, *ձէմ, յոգնակի, երրորդ դէմք և չէզոք է, համաձայնած ըլլալով* *lessons*, *լէսընզ նախընթացին, որը նոյնպէս յոգնակի, երրորդ դէմք և չէզոք է։*

Դերանունները առ հասարակ կը բաժնուին երեք դասակարգի՝ Էական կամ անձնական, յարաբերական և հարցական։ (Տեսնել երես 97։) Կարգ մը քերականութիւններու հեղինակներն ասոնց վրայ երկու դասակարգ ալ կ'աւելցնեն, *adjective*, *ածական և* *de-mon'-stra-tive* *(տիմա'նսթրէթիվ) ցուցական։*

Ածական դերանուններն երբեմն ածականի պէս յատկութիւն կը ցուցնեն, երբեմն դերանունի պէս անուններու տեղ կը գործուին. ինչպէս, I will take *either* road, *ճամբաներէն որ մէկն ալ ըլլայ պիտի բռնեմ (երթամ). այս խօսքին մէջ* *either* *ածական է. սակայն* *either* of the roads is good, *ճամբաներէն որ մէկն ալ ըլլայ լաւ է (երկուքն ալ լաւ են) խօսքին մէջ* *either* *դերանուն է։*

Ածական դերանուններ կը սեպուին հետեւեալներն, որոց շատերը աւելի ճիշդ լոկ ածական են։ Ասոնք են, Each, *ամեն մէկը, իւրաքանչիւր (կը վերաբերի երկու անձերու կամ իրերու, ամեն մէկը զատ զատ առնելով)·* every, *ամեն մէկը (շատ մը անձեր կամ բաներ զատ զատ առնուած)·* either, *մէկը կամ միւսը (երկուքին մէկը, բայց ոչ երկուքը մէկտեղ)·* neither, *ոչ մէկը եւ ոչ միւսը· այս չորսը* Dis-trib'u-tive (տիսթրի'պիւթիվ) *Տրամաբաշխական կը կոչուին, որովհետեւ զատ զատ կը ցուցնեն։*

Հետեւեալներն ալ In-def'i-nite (ինտէ'ֆինիթ) Pronouns, *Անորոշ Դերանուններ կը կոչուին, որովհետեւ անորոշ եւ ընդհանուր կերպով կը ցուցնեն։ Ասոնք են,* other, *ուրիշ, միւս·* **another**, *ուրիշ մը·* one, *մէկը, ո եւ իցէ մէկը·* none, *ոչ մէկը·* **any**, *ո եւ է մէկը·* some, *ոմանք· (*some *թիւերու հետ կը նշանակէ շուրջ, գրեթէ· ինչպէս,* *some* five years ago, *հինգ տարիի շուրջ առաջ — երբ քանակութիւն ցուցնէ կը նշանակէ քիչ մը· ինչպէս,* ***some***, bread, *քիչ մը հաց)·* such, *այսպիսի, այնպիսի·* aught, *բան մը, ինչ ինչ·* nought, *ոչինչ·* all, *բոլորն, ամենն ալ·* both, *երկուքն ալ·* several, *քանի մը, այլ եւ այլ, զանազան·* many, *շատերն· եւ* few, *քիչեր* (many *եւ* few *թիւ կը ցուցնեն*)։

Each other, *իրար, զիրար· եւ* one another, *մէկզմէկ· կը կոչուին* *Re-cip'ro-cal* (րէսի'փրօքըլ) *Pronouns*, Փոխադարձ Դերանուններ։ They love *each other*, զիրար *կը սիրեն։* They are friendly with ***one another***, իրարու *հետ բարեկամ են։*

Ցուցական դերանունները իրենց նշանակած անձը կամ իրը որոշ եւ ուղղակի կը ցուցնեն. ինչպէս, ***this*** book, *այս գիրքը.* ***that*** hat, *այն գլխարկը։*

Ցուցական դերանուններն են this, *այս, ասիկայ.* these, *ասոնք.* that, *այն, անիկայ. եւ* those, *անոնք։* This *եւ անոր յոգնակին* these *կը ցուցնեն աւելի մօտ եղածը. մինչ* that *եւ անոր յոգնակին* those, *կը ցուցնեն աւելի հեռուն եղածը։*

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

(*Տեսնել երես* 98-101։)

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Բառ մը երբ իբր ածական գործածուի չի հոլովուիր. բայց եթէ իբր դերանուն գործածուի կը հոլովուի։ Բացառութիւններն շատ քիչ են։*

2. *Դերանունի մը նախընթացը առ հասարակ դերանունէն առաջ կը գտնուի. սակայն կան պարագաներ որ ատեն ետքը կը դրուի։ Այս պարագաներէն մէկն է հարցական դերանունի մը գործածութիւնը։ Հարցական դերանուն մը յայտնի է որ անծանօթ կամ չգիտցուած անունի մը տեղը կը դրուի. որ ատեն նախընթացը բնականօրէն հարցումէն վերջը պիտի գտնուի. ինչպէս,* "In the grave ([illegible]), *who* shall give thee thanks?" – *Ps.*, vi., 5. *«Գերեզմանին մէջ, ո՞վ քեզի շնորհակալութիւն պիտի տայ (յայտնէ)։»* – *Սաղմ. զ., 5։*

3. *Անձնական եւ հարցական դերանուններն յաճախ ուրիշ դերանուններու նախընթացը կը դառնան. ինչպէս,* *He who* saw him, *Նա որ տեսաւ զայն.* "*Who that* has any moral sense, dares tell lies?" *«Ո՞վ որ ունի է բարոյական զգացում ունի, կը յանդգնի սուտեր խօսիլ»։*

4. *Անձնական դերանուններու սեռական հոլովն ալ երբեմն յարաբերական դերանունի մը նախընթացը կամ յարաբերեալը կ'ըլլայ։*

5. *Անձնական դերանուններու սեռական հոլովի առաջին ձեւը,* my, *իմ.* thy, *քու.* his, *իւր.* her, *իւր.* our, *մեր.* your, *ձեր եւ* their, *իրենց կը գործածուին, երբ անունը դերանունէն ետքը դրուած է. ինչպէս,* This is *my* book, *ասիկայ իմ գիրքս է.* that is *your* hat, *անիկայ ձեր գլխարկն է. երկրորդ ձեւը* mine, *իմս.* thine, *քուկդ.* hers, *իրենը.* ours, *մերն.* *yours,* *ձերն եւ* theirs, *իրենցը կը գործածուին, երբ անունը*

դերանունէն առաջ կը դրուի, կամ անունը բնաւ չը դրուի. ինչպէս, This book is *mine, այս գիրքը իմս է.* that hat is *yours, այդ գլխարկը ձերն է:* This is *mine, ասիկայ իմս է.* that is *yours, անիկայ ձերն է:*

6. *I, եսի տեղ* me, *զիս, ours, yours, theirs ի տեղ,* our'n, your'n, ther'n. *you ի տեղ* yous *կամ* yer *գործածելը խորթ ռամկերէն է եւ գործածելու չէ:*

7. *Յարաբերական դերանուններէն* who, *որ, որը կը գործածուի մինակ անձերու համար.* which, *որ, որը՝ կենդանիներու եւ անկենդան բաներու համար.* that, *որ, որը՝* who *եւ* which *դերանուններուն տեղը եւ* what, *ինչ որ՝ երբ յարաբերեալը դրուած չէ. ինչպէս,* This is the *man, who* will go with you, *ասիկա է (այն) մարդը, որ պիտի երթայ ձեզ հետ.* this is the *horse, which* I bought yesterday, *ասիկայ է (այն) ձին, զոր գնեցի երէկ.* the *man, that* was here while ago, *մարդը՝ որ հոս էր քիչ առաջ.* the *horse, that* you bought. *ձին՝ զոր գնեցիք.* this is *what* I wanted. *ասիկա է ինչ որ կ'ուզէի (ուզածս ասիկայ էր).* he is ashamed of *what* he has done, *ըրածէն (ինչ որ ըրած էր) ամչցաւ:*

8. *As երբեմն կը գործածուի իբր յարաբերական դերանուն եւ կրնայ* that*ին տեղ բռնել. ինչպէս,* "Buy, such things *as* we have need of." *«Գնեցէք այնպիսի բաներ, որոց պէտք ունինք»:*

[Մնացած մասունք բանիներն (Բայ, Ընդունելութիւն, Մակբայ, Շաղկապ, Նախադրութիւն եւ Միջարկութիւն) ԻՋ.–Կ. դասերուն մէջ (Երես 108-244) *արդէն պէտք եղածին չափ ճոխ տրուած ըլլալով, այս տեղ զանց կ'ընենք աւելի ճոխացնելը և կ'անցնինք մեր սովորական ընթացքին.]*

Ուրիշ օրինակ մը,

"If you deny me, fie upon your law." – SHAKESPEARE.

"Եթէ ինձ մերժէք, վա՜յ ձեր օրէնքին:" – Շէյքսփիր:

If [illegible] 1. [illegible] 2. [illegible]

You [illegible] *deny* [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Deny [illegible] *deny* [illegible] *deny*, *denied*, *denying*, *denied*, [illegible] 1. [illegible] 2. [illegible] *d* [illegible] *ed* [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible] 7. [illegible]

Me [illegible] *deny* [illegible]

1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Fie [illegible] 1. [illegible]

Upon [illegible] 1. [illegible]

Your [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Law [illegible] *upon* [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

[Վերոյգրեալ օրինակներն Հայերէն վերլուծելու եւ վերլուծութիւնն ալ լիովին ըմբռնելու համար Հայերէն ներկայացուցինք։ Բայց Անգլիերէն սորվող մը կ'ակնկալուի նոյնը Անգլիերէն վերլուծել եւ ոչ Հայերէն. եւ որպէս զի սոյն գրքով սորվողը Անգլիերէն վերլուծութեան վրայ ալ ճշգրիտ գաղափար մը ունենայ, կը ներկայացնենք վերոյգրեալ վերլուծութեան Անգլիերէնն ալ, որուն հետ ուսանողն ինքզինք շատ լաւ ընտելացնելու է. զի իրմէն պիտի պահանջուի վերլուծութեան վարժութիւններէն մաս մ'ալ Անգլիերէն ընել։]

ԴԱՍ ԿԵ· (LESSON LXV.)

PARS'ING* (փա՛ռսինկ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Քերականութեան մէջ վերլուծու-թիւն ըսելով կը հասկցուի խօսքի մը կամ նախադասութեան մը ամեն մէկ բառը ուրոյն ուրոյն որոշել, գտնել թէ ի՛նչ մասունք բանի է, բացատրել այդ մասունք բանին, յետոյ նկարագրել այն բառի քերականական կազմութիւնը կամ կրած փոփոխութիւնը. եւ ապացուցնել այն խօսքին կամ նախադա-սութեան մէջ գտնուած բառերու իրարու հետ ունեցած յա-րաբերութիւնը†. ինչպէս. "A good child heartily loves his parents." *«Լաւ զաւակ մը բոլոր սրտովը (սրտանց) կը սիրէ իր ծնողքը։»*

A անորոշ յօդ է։ 1. Յօդ կը կոչուին *a*, *an* եւ *the* բառերը, որոնք անունի մը վրայ կը դրուին, անոր նշանակութեան անորոշ կամ որոշեալ ըլլալը ցուցնելու համար։ 2. Անորոշ յօդ կը կոչուին *a* եւ *an*, որոնք կը ցուցնեն մէկ տեսակէն հատ մը. բայց ոչ մասնաւորապէս այս ինչ հատը։

Good հասարակ ածական մ'է, դրական աստիճան, կը բաղդատուի անկանոն կերպով *good*, *better*, *best*։ 1. Ածականը բառ մ'է որ կ'աւելցուի անունի մը կամ դե-րանունի մը վրայ, ընդհանրապէս անոր մէկ յատկութիւնը ցուցնելու համար։ 2. Հասարակ ածական կը կոչուի ածական մը՝ որ հասարակ անունէ մ'եկած է եւ կը ցուցնէ յատկութիւն կամ որակութիւն։ 3. Դրական աստիճանը այն է զոր ածականը կը-ցուցնէ իր պարզ ձեւին մէջ։

Child հասարակ անուն մ'է, եզակի, երրորդ դէմք, արական, ուղղական հոլով, եւ տէր բայի *loves* բային։ 1. Ոեւէ անձի, տեղի կամ իրի անուն՝ որ կրնայ ճանչ-ցուիլ, յիշուիլ կամ ըմբռնուիլ կը կոչուի անուն։ 2. Հասարակ անուն կը կոչուին այն անունները, որոնք անհատներու կամ իրերու ամբողջ տեսակի կամ դասա-կարգի անունն են։ 3. Եզակի թիւ այն է՝ որ կը ցուցնէ մէկ հատ։ 4. Երրոր-դ դէմք այն է՝ որ կը ցուցնէ այն անձը կամ իրը, որուն վրայ կը խօսուի։ 5. Արա-կան սեռ այն է որ կը ցուցնէ անձերու եւ կենդանիներու արու տեսակը։ 6. Ուղղական հոլովը անունի մը կամ դերանունի մը պարզ եւ անկախ ձեւն է, որ առհասարակ կը ցուցնէ դիմաւոր բայի մը ենթակայութիւն ըլլալը եւ կը կոչուի տէր բայի։

---

* parse (փարս) *վերլուծել, կրկին քակել, լուծել*

† *ԾԱՆ.— Վերլուծութեան այս վերջին պահանջքի մասին՝ պէտք եղած համաձայնութեան դասերը դեռ եւս տրուած չըլ-լալով ուսանողին, իրմէ չ'ակնկալուիր առ այժմ խօսքի մը մէջ գտնուած բոլոր բառերու (բացի աէր բայէն եւ սեռի խնդի-րէն) իրարու հետ ունեցած յարաբերութիւնները ցուցնել. ուստի այդ մասը ներկայիս զանց ընելու է։*

Heartily [illegible] *heartily, more heartily, most heartily*: 1. [illegible] 2. [illegible] *how much* or *how little* [illegible] 3. [illegible]

Loves [illegible] *love* [illegible] *love, loved, loving, loved.* [illegible] 1. [illegible] 2. [illegible] *d* [illegible] *ed* [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible] 7. [illegible]

His [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Parents [illegible] *loves* [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Ուրիշ օրինակ մը,

"If you deny me, fie upon your law." – SHAKESPEARE.

"Եթէ ինձ մերժէք, վա՜յ ձեր օրէնքին:" – Շէյքսփիր:

If [illegible] 1. [illegible] 2. [illegible]

You [illegible] *deny* [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Deny [illegible] *deny* [illegible] *deny*, *denied*, *denying*, *denied*, [illegible] 1. [illegible] 2. [illegible] *d* [illegible] *ed* [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible] 7. [illegible]

Me [illegible] *deny* [illegible]

1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Fie [illegible] 1. [illegible]

Upon [illegible] 1. [illegible] 2. [illegible]

Your [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

Law [illegible] *upon* [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

[Վերոյգրեալ օրինակներն Հայերէն վերլուծելու եւ վերլուծութիւնն ալ լիովին ըմբռնելու համար Հայերէն ներկայացուցինք։ Բայց Անգլիերէն սորվողէ մը կ'ակնկալուի նոյնը Անգլիերէն վերլուծել և ոչ Հայերէն. և որպէս զի սոյն գրքով սորվողը Անգլիերէն վերլուծութեան վրայ ալ ճգրիտ գաղափար մը ունենայ, կը ներկայացնենք վերոյգրեալ վերլուծութեան Անգլիերէնն ալ, որուն հետ ուսանողն ինքզինք շատ լաւ ընտելացնելու է. զի իրմէն պիտի պահանջուի վերլուծութեան վարժութիւններէն մաս մ'ալ Անգլիերէն ընել։]

EXAMPLE* PARSED.

"A good child heartily loves his parents."

A is the indefinite article. 1. An article is the word ***the***, ***an*** or ***a***, which we put before nouns to limit† their signification§. 2. The indefinite article is ***an*** or ***a***, which denotes‡ one thing of a kind, but not any particular¶ one.

Good is a common adjective, of the positive degree; compared‖ irregularly, ***good***, *better*, *best*. 1. An adjective is a word added to a noun or pronoun, and generally expresses quality**. 2. A common adjective is any ordinary†† adjective denoting quality or situation§§. 3. The positive degree is that which is expressed by the adjective in its simple form.

Child is a common noun, of the third person, singular number, masculine gender, and nominative case; and is the subject of the verb *loves*. 1. A noun is the name of any person, place, or thing, that can be known or mentioned¶¶. 2. A common noun is the name of a sort‖‖, kind, or class, of beings or things. 3. The third person is that which denotes the person or thing merely spoken of. 4. The singular number is that which denotes but one. 5. The masculine gender is that which denotes persons or animals*** of the male kind. 6. The nominative case is that form or state of a noun or pronoun, which usually denotes the subject of finite verb.

Heartily is an adverb of degree. 1. An adverb is a word added to a verb, a participle, an adjective or an other adverb; and generally expresses time, place, degree, or manner†††.

Loves is a regular active-transitive verb, from *love*, *loved*, *loving*, *loved*, found in the indicative mood, present tense, singular number, and third person. 1. A verb is a word that signifies *to be*, *to act*, or *to be acted* upon. 2. A regular verb is a verb that forms the preterit and the perfect participle by assuming‡‡

---

* ex-am'ple (էկզա'մփըլ) *օրինակ*

† lim'it (լի'միթ) *սահման* – to limit, *սահմանել*

§ sig'ni-fy (սի'կնիֆայ) *նշանակել* – signification, *նշանակութիւն*

‡ de-note' (տինօ'թ) *ցուցնել*

¶ par-tic'u-lar (փէրթի'քիուլըր) *մասնաւոր*

‖ com-pare' (քըմփէ'յր) *բաղդատել*

** qual'i-ty (քուա'լիթի) *որակ, տեսակ, յատկութիւն*

†† or'di-na-ry (օ'րտինըրի) *սովորական, հասարակ*

§§ sit'u-ate (սի'չուէյթ) *հաստատել, զետեղել, կարգել – հաստատուած, զետեղուած, կարգուած* – situation, *դիրք, կացութիւն, վիճակ*

¶¶ men'tion (մէ'նշըն) *յիշատակութիւն* – to mention, *յիշել*

‖‖ sort (սօրթ) *տեսակ. կերպ* – to sort, *զատել, դասաւորել*

*** an'i-mal (ա'նիմըլ) *անասուն, կենդանի*

††† man'ner (մա'նըր) *կերպ*

‡‡ as-sume' (ըսիու'մ) *առնել, ստանձնել, յանձն առնել. [ենթադրել*

d or *ed*. 3. An active-transitive verb is a verb that expresses an action which has some person or thing for its object. 4. The indicative mood is that form of the verb, which simply indicates or declares¶ a thing, or asks a question. 5. The present tense is that which expresses what now exists**, or is taking place. 6. The singular number is that which denotes but one. 7. The third person is that which denotes the person or thing merely spoken of.

His is a personal pronoun, of the third person, singular number, masculine gender, and possessive case. 1. A pronoun is a word used in stead of a noun. 2. A personal pronoun is a pronoun that shows, by its form, of what person it is. 3. The third person is that which denotes the person or thing merely spoken of. 4. The singular number is that which denotes but one. 5. The masculine gender is that which denotes persons or animals of the male kind. 6. The possessive case is that form or state of a noun or pronoun, which usually denotes the relation†† of property‡‡.

Parents is a common noun, of the third person, plural number, masculine gender, and objective case. 1. A noun is the name of any person, place, or thing, that can be known or mentioned. 2. A common noun is the name of a sort, kind, or class, of beings or things. 3. The third person is that which denotes the person or thing merely spoken of. 4. The plural number is that which denotes more than one. 5. The masculine gender is that which denotes persons or animals of the male kind. 6. The objective case is that form or state of a noun or pronoun which usually denotes the object of a verb, participle, or preposition.

ANOTHER EXAMPLE PARSED.

"If you deny me, fie upon your law." – SHAKESPEARE.

If is a copulative conjunction. 1. A conjunction is a word used to connect words or sentences† in construction*, and to show the dependence of the terms so connected. 2. A copulative conjunction is a conjunction that denotes an addition, a cause, a consequence‡, or a supposition.

You is a personal pronoun, of the second person, plural number, masculine gender, and nominative case: and is the subject of the verb *deny*. 1. A pronoun is a

---

¶ de-clare' (տիքլէ'յր) յայտնել, յայտարարել

** ex-ist' (էկզի'սթ) գոյութիւն ունենալ. ապրիլ

†† re-late'(րիլէ'յթ) պատմել, ազգակցիլ. յարաբերիլ – relation, յարաբերութիւն. ազգականութիւն. առնչութիւն

‡‡ prop'er-ty (փրօ'փըրթի) ստացուածք, կալուածք. սեպ-հականութիւն

† sen'tence (սէ'նթընս) նախադասութիւն. խօսք մը կամ պարբերութիւն մը որ իր մէջ ունի առնուազն բայ մը եւ տէր բայի մը եւ որ խօսքի մը ամբողջ իմաստը կ'արտայայտէ. դա-տավճիռ. վճիռ. տուած

* con'struct (քօ'նսթրըքթ) շինել, կազմել – construction, շինելը. կազմուածք. դասաւորութիւն

‡ con'se-quence (քօ'նսիքուէնս) հետեւանք

word used in stead of a noun. 2. A personal pronoun is a pronoun that shows, by its form, of what person it is. 3. The second person is that which denotes the hearer, or the person addressed. 4. The plural number is that which denotes more than one. 5. The masculine gender is that which denotes persons or animals of the male kind. 6. The nominative case is that form or state of a noun or pronoun, which usually denotes the subject of a finite verb.

Deny is a regular active-transitive verb, from *deny*, *denied*, *denying*, *denied*; found in the subjunctive mood, present tense, second person, plural number. 1. A verb is a word that signifies *to be*, *to act*, or *to be acted* upon. 2. A regular verb is a verb that forms the preterit and the perfect participle by assuming *d* or *ed*. 3. An active-transitive verb is a verb that expresses an action which has some person or thing for its object. 4. The subjunctive mood is that form of the verb, which represents§ the being, action, or passion‖ as conditional**, doubtful††, or contingent‡‡. 5. The subjunctive present tense is generally used to express some condition on which a future action or event§§ is affirmed‖‖. 6. The second person is that which denotes the hearer, or the person addressed. 7. The plural number is that which denotes more than one.

Երբ Բայ մը ունի երկու կամ աւելի ուղղական հոլովներ (տէր բայի համար) եւով իրարու հետ կցուած, Բայը պէտք է համաձայնի անոնց միացած բոլորին հետ յոգնակի թուով. որովհետեւ անոնք միասին են առնուած։

RULE XVII. — FINITE VERBS.

When a Verb has two or more nominatives connected by *or* or *nor*, it must agree with them singly, and not as if taken together.

ԿԱՆՈՆ ԺԷ. — ԴԻՄԱԻՈՐ ԲԱՑԵՐ։

*Երբ Բայ մը ունի երկու կամ աւելի ուղղական հոլովներ (տէր բայիի համար) *or*ով, կամ *nor*ով իրարու հետ կցուած, Բայը պէտք է համաձայնի անոնց հետ առանձնակի (եզակի Թըւով), և ոչ իբր միասին առնուած։*

RULE XVIII. — INFINITIVES.

The Infinitive Mood is governed in general by the preposition TO, which commonly connects it to a finite verb.

ԿԱՆՈՆ ԺԸ. — ԱՆԵՐԵՒՈՅԹՆԵՐ։

Աներևոյթ Եղանակը ընդհանրապէս կը կառավարուի TO *նախադրութիւնովը, որը առհասարակ կը կապէ զայն դիմաւոր բայի մը։*

RULE XIX. — INFINITIVES.

The active verbs *bid**, *dare*, *feel*, *hear*, *let*, *make*, *need*, *see*, and their participles, usually take the Infinitive after them without the preposition TO.

ԿԱՆՈՆ ԺԹ. — ԱՆԵՐԵՒՈՅԹՆԵՐ։

Bid, *գին տալ. dare, յանդգնիլ. feel, զգալ. hear, լսել. let, Թողուլ. make, ընել. need, կարօտիլ. see, տեսնել — ներգործական բայերն և իրենց ընդունելութիւններն, սովորաբար իրենցմէ վերջը եկող Աներևոյթը կ'առնեն առանց* TO *նախադրութեանը։*

RULE XX. — PARTICIPLES.

Participles relate to nouns or pronouns, or else are governed by prepositions.

ԿԱՆՈՆ Ի. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ընդունելութիւններ կը վերաբերին անուններու կամ դերանուններու, և կամ կըկառավարուին նախադրութիւններով։

RULE XXI. — ADVERBS.

Adverbs relate to verbs, participles, adjectives, or other adverbs.

ԿԱՆՈՆ ԻԱ. — ՄԱԿԲԱՑՆԵՐ։

Մակբայներ կը վերաբերին բայերու, ընդունելութիւններու, ածականներու, կամ ուրիշ մակբայներու։

---

* bid (պիտ) *գին տալը, աճուրդի մէջ ֆօր ըսելը* — to bid, *գին տալ. հրամայել, ընծայել. Թախանձել*

Rule XXII. — Conjunctions.

Conjunctions connect words, sentences, or parts of sentences.

ԿԱՆՈՆ ԻԲ. — ՇԱՂԿԱՊՆԵՐ։

Շաղկապներ կը կապեն բառեր, նախադասութիւններ, կամ նախադասութեան մասեր։

Rule XXIII. — Prepositions.

Prepositions show the relations of words, and of the things or thoughts expressed by them.

ԿԱՆՈՆ ԻԳ. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Նախադրութիւններ կը ցուցնեն բառերու և իրերու կամ անոնց արտայայտած գաղափարներու յարաբերութիւններն։

Rule XXIV. — Interjections.

Interjections have no dependent construction; they are put absolute, either alone, or with other words.

ԿԱՆՈՆ ԻԴ. ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Միջարկութիւններ կախումըն ունեցող կազմութիւն մը չունին (անկախ են). և անկախ կը գործածուին կամ առանձինն, և կամ ուրիշ բառերու հետ։

[Վերոյգրեալ կանոններուն վրայ օրինակներով բացատրուած աւելի ընդարձակ ծանօթութիւններ պիտի տրուին հետզհետէ]։

Ti'tles (Թա՛յթըլզ) ՏԻՏՂՈՍՆԵՐ

Խօսակցութեանց և թղթակցութեանց մէջ քաղաքավարութեան անհրաժեշտ մէկ պահանջքն է խօսքը կամ թղթակցութիւնը ուղղուած անձին ինչ անուն կամ տիտղոս տալը գիտնալ։ Այս պահանջքը լեցնելու համար Ամերիկայի մէջ ընդունուած սովորութիւն մ'է՝ որու հետ որ տեսնուիլ կամ թղթակցիլ կ'ուզուի, կանխաւ անոր կամ քարտը ձեռք ձգել կամ դէթ անոր մականունն ու իրեն ուղղուած տիտղոսը ստուգել և այդպէս զինք իր ուղիղ անունովը կոչել. եթէ պատահի որ մէկը այդքանին ալ չկրնայ յաջողիլ. այդպիսի նեղ պարագաներու տակ Mis'ter (*Մի՛սթըր*) *Տիար,* Madam *կամ* Lady, *Տիկին, և* Miss (*Միս*) *օրիորդ, ըստ պատշաճի գործածելով խօսակցութիւնը կամ թղթակցութիւնը կարելի է սկսիլ. սակայն շատ աւելի նախամեծար, քաղաքավարի եւ կիրթ զարգացման նշան պիտի ըլլայ եթէ նախապէս կերպով մը ստուգած ըլլանք մեր խօսակցի կամ թղթակցի մականունն ու տիտղոսը։ Այս*

պատճառաւ եւ մեր ուսանողին ալ անհրաժեշտ պէտք մ'է գիտնալ Անգլիերէն լեզուին մէջ առ հասարակ գործածուած տիտղոսներն, զայնս դիւրին ըմբռնելու եւ ըստ պահանջման կամ ըստ պատշաճի կարենալ գործածելու համար։

Ամերիկացւոց եւ Անգլիացւոց մէջ առ հասարակ գործածուած տիտղոսներն կարելի է երեք դասակարգի բաժնել, (ա) Հանրային կամ Ժողովրդական, (բ) Արժանիքի կամ Գիտական եւ (գ) Պատուոյ կամ Պաշտօնական տիտղոսներ։

(ա) Հանրային կամ Ժողովրդական տիտղոսներն հասարակ ժողովրդային տիտղոսներն են, որոց ամենէն շատ գործածուածներն հետեւեալներն են.

Առ հասարակ ամեն էրիկ Մարդու և Երիտասարդի

Mis'ter	(մի՛սթըր)	[*Mr.*]	Տիար, Պարոն (Հայկական գործածութեամբ)
Mes-sieurs'	(մէսէօր՛, մէ՛շէրզ)	[*Messrs.*]	Տիարք, Պարոնայք
Sir	(սըր)		Տիար, Տէր
Gen'tle-man	(ճէ՛նթըլմըն)		Ազնիւ Տիար
Gentlemen	(ճէ՛նթըլմէն)		Ազնիւ Տիարք

Մանչ Տղայոց

Mas'ter	(մա՛սթըր)	[*M.*]	Պարոնիկ

Կիներու

Mis'tress	(մի՛սթրէս)	[*Mrs.*]	Տիկին, Տիրուհի
Mis'sis*	(մի՛սիզ)	[*Mrs*]	Տիկին
Mad'am	(մա՛տըմ)	[*Ma'am*]	Տիկին, Տիրուհիս
Mes''dames'	(մէյտա՛մ)		Տիկիններ
La'dy†	(լէ՛յտի)		Տիրուհի, Տիկին (Ամերիկեան հասարակութեամբ մաքուր եւ ճաշակաւոր հագուած կին)
La'dies†	(լէ՛յտիզ)		Տիրուհիք, Տիկիններ

* Այս բառը Mistress բառի ուրիշ կերպ մը կրճատուած եւ խօսակցութեանց մէջ աւելի շատ գործածուած ձեւն է։

† Սոյն բառերը ամուսնացած կիներու միայն յատուկ չեն, այլ քան տարեկանէն վեր օրիորդներուն ալ կարելի է ուղղե-

Օրիորդներու

Miss‡	(Մը)	*Օրիորդ*
Miss'es	(Մ'ըզըզ)	*Օրիորդներ*

ԾԱՆ.— Վերոյդրեալ տիտղոսներու առջեւ փակագիծերու մէջ զետեղուած կրճատուած ձեւերն սովորաբար կը գործածուին դրութեանց մէջ։

[Ուսանողը պէտք է գիտնայ որ Վերոյիշեալ հանրային կամ ծագումնային տիտղոսները Անգլիերէնի մէջ ամենէն շատ գործածուած տիտղոսներն են, անոր համար ալ պէտք է [illegible] ամէն մէկ տիտղոս առ նուազն հինգ անգամ գրելով իր տետրակին մէջ։]

(բ.) *Արժանիքի կամ Գիտական տիտղոսներն կ'ստացուին լոկ աշխատութեամբ. ինչպէս Ուսումնարաններէն ստացուածներն, որոնցմէ Ամերիկայի մէջ ընդհանրապէս գործածուածներէն մէկ քանիններն հետեւեալներն են*

(*Ամերիկեան Ուսումնարաններու* (Col'lege – Քօ'լէճ) *Վարժապետանոցներու* (Nor'mal School – Նօ'րմըլ (ը)սքուլ – մ:կ վ:ոկ) *եւ Համալսարաններու* (U''ni-ver'si-ty – Եունիվը'րսիթի) *տուած բազմազան աստիճաններու ամբողջ ցուցակը կարելի է գտնել* Funk and Wagnalls Company*ի* STANDARD DICTIONARY *բառարանին մէջ* degree *բառին տակ, որոնք չուրջ երկու հարիւր կը հաշուին։*)

B. A. *կամ* A. B. — Bach'e-lor of Arts (Պէ'չըլըր ըվ Արց)
Պսակաւոր Գեղարուեստից

B. Sc. — Bachelor of Sci'ence (Պէչըլըր ըվ Սա'յընս)
Պսակաւոր Գիտութեան

B. C. E. — Bachelor of Civ'il En''gi-neer'ing (Պէ'չըլըր ըվ Սի'վիլ էնճինի'յրինկ) *Պսակաւոր Քաղաքային Ճինութեանց*

M. A. *կամ* A. M. — Mas'ter of Arts (Մէ'սթըր ըվ Արց)
Պետ Գեղարուեստից

Ph. D. — Doc'tor of Phi-los'o-phy (Տա'քթըր ըվ Ֆիլա'սօֆի)
Վարդապետ Փիլիսոփայութեան

‡ *ԾԱՆ.— Երբ մի եւ նոյն ընտանիքի մէջ մէկէ աւելի օրիորդներ կան սովորութիւն է երիցագոյնին ուղղել Miss եւ իր* Մականունը. *մինչ միւսներուն* Miss *եւ* իրենց *անձնական* անունը. *այսպէս, երիցագոյն օրիորդին* Miss Tennyson, Միս Թէնիսըն, *անկէց փոքր եղողներուն*, Miss Nora Tennyson, Միս Նօրա Թէնիսըն, Miss Grace Tennyson, Միս Կրէյս Թէնիսըն. *եւն։*

Pe. B. — Bachelor of Ped''a-gog'ics (Պէչէլըր ավ Փէտակօ'ճիքս)
Պսակաւոր Մանկավարժութեան

Pe. P. — Prin'ci-pal of Pedagogics (Փրին'սիփըլ ավ Փէտակօճիքս)
Գլխապետ Մանկավարժութեան

Pd. D. — Doctor of Ped'a-go''gy (Տաքթըր ավ Փէ'տակօճի)
Վարդապետ Մանկավարժութեան.

G. P. — Grad'u-ate in Phar'ma-cy (Կրէ'ճուէյթ ին Ֆա'րմասի)
Ընթացաւարտ կամ Աստիճանաւոր Դեղագործութեան

Phar. D. — Doctor of Pharmacy (Տաքթըր ավ Ֆարմասի)
Վարդապետ Դեղագործութեան ([illegible])

D. D. S — Doctor of Den'tal Sur'ger-y (Տաքթըր ավ Տէ'նթըլ Սը'րճըրի)
Բժշկապետ Ատամնաբուժութեան կամ Ատամնաբոյժ Բժիշկ

B. M. — Bachelor of Med'i-cine (Պէչէլըր ավ Մէ'տիսըն, Մէ'տիսին)
Պսակաւոր Բժշկութեան

D. M. — Doctor of Medicine, (Տաքթըր ավ Մէտիսին)
Վարդապետ Բժշկութեան կամ Բժշկապետ

LL. B. — Bachelor of Laws, (Պէչէլըր ավ Լօզ)
Պսակաւոր Օրինաց (Ճուրիսփրուտընս), *Փաստաբան*

LL. M. — Master of Laws (Մէսթըր ավ Լօզ)
Պետ Օրինաց (Ճուրիսփրուտընս)

LL. D. — Doctor of Laws (Տաքթըր ավ Լօզ)
Վարդապետ Օրինաց (Ճուրիսփրուտընս) *Օրէնսգէտ*

B. D. — Bachelor of Di-vin'i-ty (Պէչէլըր ավ Տիվի'նիթի)
Պսակաւոր Աստուածաբանութեան

D. D. — Doctor of Divinity (Տաքթըր ավ Տիվինիթի)
Վարդապետ Աստուածաբանութեան

(գ.) Պատուոյ կամ Պաշտօնական տիտղոսներն կ'ըլլան կամ ժառանգական կամ ստացական. ինչպէս ազնուականներու եւ կառավարական պաշտօնեաններու տիտղոսներն։

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ ազնուական դասակարգ (aris''toc'ra-cy – արիսթա'քրըսի) *չկայ, բայց Ազգային կամ Դաշնակցական կառավարութեան եւ անոր բարձրագոյն պաշտօնէից տիտղոսներն հետեւեալներն են.*

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Ազգային (Na'tion-al – նէ՛շընըլ) *կամ Դաշնակցական* (Fed'er-al – ֆէ՛տըրըլ) *կառավարութեան պաշտօնական անունն է*

The United States of America
(դհը եունայթըտ սթէյթս օվ ամէրիքա)
Ամերիկայի Միացեալ Նահանգներն

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Ազգային կառավարութիւնը կը բաղկանայ երեք ճիւղերէ* (branch *կամ* de-part'ment պրանչ – [illegible] – տիփա՛րթմընթ)

The Legislative	(դհը լէճիսլէթիվ)	*Օրէնսդիր* (խորհուրդ)
The Executive	(դհի էկզէքիութիվ)	*Գործադիր* (իշխանութիւն)
The Judicial	(դհը ճուտիշըլ)	*Դատական* (իշխանութիւն)

Ազգային կառավարութեան Օրէնսդիր ճիւղը
կը կազմէ Օրէնսդիր ժողովը, որ կը կոչուի

The Con'gress	(դհը քա՛նկրէս)	*Վեհաժողով*

Վեհաժողովն ալ կը բաժնուի երկու Խորհրդարանի

The Sen'ate	(դհը սէ՛նէյթ)	*Ծերակոյտ*
The House of Rep"re-sent'a-tives	(դհը հաուզ օվ րէփրէզէ՛նթէթիվզ)	*Երեսփոխանաց Ժողով*

Ծերակոյտի անդամները կը կոչուին

Sen'a-tor	(սէ՛նէթըր)	*Ծերակուտական*

Երեսփոխանաց Ժողովի անդամները կը կոչուին

Con'gress-man	(քա՛նկրէսմըն)	*Վեհաժողովի անդամ կամ*
Represent'ative	(րէփրէզէ՛նթէթիվ)	*Երեսփոխան*

Ծերակոյտին կը նախագահէ
Ամերիկայի Միացեալ Նահանգաց Փոխ-Նախագահը

Երեսփոխանաց Ժողովին կը նախագահէ
իրենցմէ ընտրուած մէկը, որը կը կոչուի

Speak'er	(սփի՛յքըր)	*Խօսող* (Ատենապետ)

---

* *Ամերիկայի Ազգային եւ Նահանգային կառավարութեանց կազմութեան, իրաւասութեանց եւն. վրայ ճոխ տեղեկութիւններ կարելի է տեսնել մեր* «ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ»

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Գործադիր իշխանութիւնը կը կազմեն Նախագահն ու իր Խորհրդատու ժողովը, որոյ անդամները Նախագահը կ'անուանէ Ծերակոյտի հաւանութեամբը։

Գործադիր իշխանութեան անդամներն են

The President (տհը փրէ՛զիտընտ) *Նախագահը*
The Vice-President (տհը վայս-փրէզիտընտ) *Դեր-Նախագահը*

Նախագահի Խորհրդատու ժողովի (The Cab'i-net – տհը գա-պինէտ — *որ կը համապատասխանէ ուրիշ երկիրներու Նախարարաց Խորհուրդին*) *անդամոց տիտղոսներն հետեւեալներն են* ([illegible] – (Տեսնել Ամերիկեան քաղաքացի երես 102)։

The Sec're-tar''y of State (տհը սէ՛քրէտէրի օվ (ը)սթէյթ)
Նահանգային Գործոց Քարտուղարը (կը համապատասխանէ օտար երկիրներու Նախարարութեան և Արտաքին Գործոց Նախարարին,

The Secretary of Treas'ur-y (տհը սէքրէտէրի օվ թրէ՛ժուրի)
Գանձային Գործոց Քարտուղարը (Գանձային Նախարար)

The Secretary of War (տհը սէքրէտէրի օվ ուօռ)
Պատերազմական Գործոց Քարտուղարը (Պատերազմական Նախարար)

The At-tor'ney-Gen''er-al (տհի էթթը՛րնէյ-ճէ՛նըրէլ)
Ընդհանուր Փաստաբանը (Ընդհանուր Դատախազ)

The Post'mas''ter-Gen''er-al (տհը փօ՛սթմասթըր-ճէ՛նըրէլ)
Ընդհանուր Թղթատարապետը (Թղթատարութեան Նախարար)

The Secretary of Na'vy (տհը սէքրէտէրի օվ նէ՛յվի)
Ծովային Գործոց Քարտուղարը (Ծովային Նախարար)

The Secretary of In-te'ri-or (տհը սէքրէտէրի օվ ինթի՛րիըր)
Ներքին Գործոց Քարտուղարը (Ներքին Գործոց Նախարար)

The Secretary of Ag'ri-cul''ture (տհը սէքրէտէրի օվ ա՛կրիքըլչըր)
Երկրագործութեան Քարտուղարը (Երկրագործութեան Նախարար)

The Secretary of Com'merce and La'bor (տհը սէքրէտէրի օվ քա՛մըրս էնտ լէ՛յպըր) *Վաճառականութեան եւ Աշխատութեան Քարտուղարը* (Առեւտրական և Գործաւորական Նախարար)

Դատական ճիւղը կը բաղկանայ Միացեալ Նահանգաց Գերագոյն Դատարանէն The United States Su-preme' Court (տհը եունայթըտ սթէյթս սիու-փրի՛մ քօրթ) *եւ անոր Ստորադաս Դատարաններէն* The In-fe'ri-or Courts (տհը ինֆի՛րիըր քօրթս)։

Գերագոյն Դատարանի Դատաւորներուն Գլխաւորը կը կոչուի
The Chief-Justice (թհը չիֆ-ճըսթիս) Գլխաւոր Դատաւոր

Մնացած Դատաւորներէն ամէն մէկը կը կոչուի
The Associate Justice (թհի էսօշիէյթ ճըսթիս) Ընկերակից Դատաւոր

Նահանգային Կառավարութիւն

Ամերիկայի Միացեալ Նահանգները կը բաղկանան ներկայիս 48 նահանգներէ, որոց ամէն մէկի կառավարութիւնն իսկ եւ իսկ յար եւ նման է Ազգային կամ Դաշնակցական կառավարութեան, այս տարբերութեամբ միայն որ Նահանգներու Օրէնսդիր Վարչութիւնը փոխանակ Վեհաժողովի կը կոչուի
The Leg'is-la-ture (թհը լէճիսլէյչըր) Օրէնսդիր Մարմինը
եւ անոր երկու ճիւղերը կը կոչուին
The State Senate Նահանգային Ծերակոյտ եւ The As-sem'bly (թհի էսէմ'պլի) Նահանգային Երեսփոխանական Ժողով

Նահանգային Ծերակոյտի անդամներէն ամէն մէկը կը կոչուի
The State Senator, Նահանգային Ծերակուտականը
Նահանգային Երեսփոխանական Ժողովոյ անդամներէն ամէն մէկը կը կոչուի
The Assemblyman, Նահանգային Երեսփոխանը

Նոյնպէս Նահանգային Իշխանութեան գլուխը՝ փոխանակ Նախագահի կը կոչուի
The Gov'ern-or (թհի կըվ'ըրնըր) Կառավարիչը
Կառավարչի Փոխանորդը՝
որ Նահանգային Ծերակոյտին կը նախագահէ, կը կոչուի
The Lieu-ten'ant-Governor (թհը լիութէն'նէնթ կըվըրնըր)
Տեղակալ-Կառավարիչը

Գիտնալու է նաեւ որ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ինչպէս ամէն մէկ Նահանգ իր առանձին ինքնօրէն կառավարութիւնն ունի նոյնպէս ամէն մէկ քաղաք, աւան, գիւղ եւ մինչեւ իսկ թաղ իր առանձին կառավարութիւնն ունի, առանցմէ իւրաքանչիւրն իրենց տեղին, մեծութեան եւ բազմամարդութեան համեմատ տարբեր տարբեր տիտղոսներ ունին, որոց ամէնէն շատ գործածականներն են

The May'or (թհը մէ'յըր) Քաղաքապետը
The Board of Al'der-men (թհը պօրտ ավ օ'լտըրմէն) Քաղաքային Խորհուրդը
A'derman Քաղաքային Խորհրդի Անդամ

The Town Coun'cil (թհը թաուն քաու'նսիլ) *Գիւղաքաղաքի Խորհուրդը*

The Village Council (թհը վիլլէյճ քաունսիլ) *Գիւղային Խորհուրդ*

The Coumcilman, *Գիւղաքաղաքային կամ Գիւղային Խորհրդի Անդամ*

The Councilman at-large (թհը քաունսիլմըն էթ-լա՛րճ) *Գիւղաքաղաքապետ կամ Գիւղապետ*

MIL'I'TA-RY (մի՛լիթըրի) TITLES.

Զինուորական Տիտղոսներ (Ամերիկայի Միացեալ Նահանգաց)

ARM'Y (ա՛րմի) *Ցամաքային Բանակ*

Gen'er-al (ճէ՛նըրըլ) *Գլխաւոր կամ Ընդհանուր Հրամանատար*

ԾԱՆ.— Այս տիտղոսը Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ կը տրուի միայն Վեհաժողովի անցուցած մասնաւոր օրէնքովը և ան ալ հազուագիւտ պարագաներու տակ։ Մինչեւ հիմայ չորս անձերու միայն տրուած է։

Lieu-ten'ant-General (լիուտէ՛նընթ ճէնըրըլ)
Տեղակալ-Հրամանատար (Այս տիտղոսը ներկայիս անգործածելի է)

Ma'jor-General (մէ՛յճըր-ճէնըրըլ)
Զօրաբանակի-Հրամանատար, Սպարապետ

Ad'ju-tant-General (ա՛ճութընթ-ճէնըրըլ)
Օգնական-Հրամանատար

Brig"a-dier'-General (պրիկըտի՛յր-ճէնըրըլ)
Զօրաբաժնի-Հրամանատար, Վաշտապետ (Տճ. Միրլիվա)

Colo'nel	(քը՛ռնըլ)	*Գնդապետ* (Տճ. Միրալայ)
Lieutenant-Colonel		*Տեղակալ-Գնդապետ*
Ma'jor	(մէ՛յճըր)	*Հազարապետ*
Cap'tain	(քա՛փթըն)	*Զօրավար*
Lieutenant-Captain		*Տեղակալ Զօրավար*
Ser'geant	(սա՛րճընթ)	*Յիսնապետ* (Տճ. Չավուշ)
Cor'po-ral	(քօ՛րփօրըլ)	*Տասնապետ*
Ca-det'	(քադէ՛թ)	*Զինուորական ուսանող*

Վերոյգրեալներէն ի զատ շարք մը ուրիշ տիտղոսներ կան Ցամաքային բանակին մէջ, որոնք կը տրուին իւրաքանչիւրի կատարած մէկ մասնաւոր գործին համար. ինչպէս, Paymaster-General, *Ընդհանուր Վարձահատոյց, կամ Վարձահատոյց-Հրամանատար.* Surgeon-General, *Ընդհանուր Վիրաբոյժ կամ Վիրաբոյժ-Հրամանատար, ևն։*

NA'VY (նէ'յվի) Ծովային Զօրք

Ad'mi-ral	(է'տմիրըլ)	Ծովակալ
Vice-Admiral	(վայս-էտմիրըլ)	Դեր-Ծովակալ

Այս երկու տիտղոսներն ալ Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ կը տրուին միայն վեհաժողովի անցուցած մասնաւոր օրէնքովը և ան ալ հազուագիւտ պարագաներու տակ։ Մինչեւ հիմայ ամեն մէկը երեք անձերու միայն տրուած է։

Rear-Admiral	(րիյր-էտմիրըլ)	Գլխաւոր-Ծովակալ
Com'mo-dore	(քա'մօտօռ)	Երկրորդ-Ծովակալ
Cap'tain	(քա'փթըն)	Մարտանաւի-Հրամանատար. Գնդապետ
Com-mand'er	(քըմէ'նտըր)	Հրամանատար (Տե՛ս. Գօմանտըր)
Lieutenant-Commander		Տեղակալ-Հրամանատար
En'sign	(է'նսայն)	Պաշտօնակիր
Mid'ship''man	(մի'տշիփմըն)	Ծովային ուսանող

Անգլիայի կառավարական բարձրագոյն պաշտօնէից տիտղոսներն են.

King	(քինկ)	Թագաւոր
Queen	(քուին*)	Թագուհի
President	(փրէզիտընթ)	Նախագահ
Gov'ern-or	(կըվըռնըր)	Կառավարիչ
Prime Min'is-ter	(փրայմ* մի'նիսթըր)	Նախարարապետ
Minister	(մինիսթըր)	Նախարար
Am-bas'sa-dor	(էմպէ'սատըր)	Դեսպան
Con'sul	(քա'նսըլ)	Հիւպատոս

Անգլիայի Ազնուականաց պատուոյ հինգ տիտղոսներն են,

Duke	(տիուք*)	Դուքս
Duch'ess	(տը'չէս)	Դքսուհի
Mar'quis	(մա'րքուիս)	Մարքիզ
Mar'chion-ess	(մա'րշընէս)	Մարքիզուհի
Earl (ըրլ) Count	(քաունթ*)	Կոմս
Count'ess	(քա'ունթէս)	Կոմսուհի
Vis'count''	(վա'յքաունթ)	Դերկոմս
Vis'count-ess	(վա'յքաունթէս)	Դերկոմսուհի
Bar'on	(պա'րըն)	Բարոն
Bar'on-ess	(պա'րընէս)	Բարոնուհի

[Ուսանողն ազատ է վերոյգրեալ Բ. և Գ. Դասակարգի տիտղոսներն պէտքը զգացած ատենը ուսանիլ։]

---

* Հնչելու է մէկ անգամէն (մէկ վանկ)։

Հետեւեալ տիտղոսներն կը գործածուին առ հասարակ գրու-թեանց մէջ, զորս պէտք է շատ լաւ ուսանիլ և առնուազն հինգ անգամ գրել տետրակին մէջ։

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահին յատուկ
(ըստ Սահմանադրութեան Օրինաց)

His ex'cel-len-cy (հիզ էք'սէլընսի) *Նորին Բարձրութիւնը*

ԾԱՆ.— 1912ին *Ամերիկայի Միացեալ Նահանգաց համար Նախագահ ընտրուած Նիւ Ճըրզի Նահանգին Կառավարիչ* Woodrow Wilson, *իւր Նախագահ ընտրուելուն առթիւ, իրեն ուղղուած զանազան տիտղոսներուն համար, զորս ձեռք բե-րած էր իւր գիտական աշխատութիւններովը, հանրային ըստ-րութիւնովն և Սահմանադրութեան իշխանութիւնովը, հրա-պարակաւ բաղձանք յայտնեց որ հանրութիւնը իւր անունը գործածած պահուն իր բոլոր տիտղոսները մէկդի թողլով, զինք կոչէ պարզ* Mr. Wilson. *և այսով բարձրագոյն տիպարը դարձաւ Ամերիկեան պարզասիրութեան և մարմնացումը Ամե-րիկեան ժողովրդապետական ոգիին։ Իւր բաղձանքը յար-գուեցաւ։*

Իւր օրինակին հետեւեցաւ նաեւ իրեն հետ միասին Նիւ-Եօրք Նահանգին կառավարիչ ընտրուած Նիւ Եօրքի Ազգային Երեսփոխան Congressman William Sulzer։

Այս օրինակները որքան որ կ'ապացուցանեն թէ Ամերի-կայի Միացեալ Նահանգաց մէջ պարզասիրութիւնը նախամե-ծարելի է, մի եւ նոյն ատեն գիտնալու է որ պաշտօնական հանգամանքներու տակ ամեն օրէնք իր տեղին կէտ առ կէտ կը գործադրուի։

Նախագահի Խորհրդական ժողովի, եւ Վեհաժողովի բոլոր անդամներուն, Նահանգաց կառավարիչներուն, Նահանգային Օրէնսդիր ժողովի անդամներուն, Գերագոյն եւ Բարձրագոյն Դատարաններու դատաւորներուն, Դեսպաններուն եւ ամեն անոնց՝ որոնք Ազգային կամ Նահանգային Կառավարութեան մէջ բարձր պաշտօն մը վարած են կամ կը վարեն, կ'ուղղուի
Hon'or-a-ble (ա'նըրէպլ) [*Hon*]. *Մեծաշուք, Վսեմափայլ*

Առ հասարակ Բոլոր Կղերականներու

Սարկաւագ, Քահանայ, Աբեղայ, Ծայրագոյն Վարդապետ, Պատուելի (չձեռնադրուած քարոզիչ երէց), *Վերապատուելի* (ձեռնադրուած երէց)

Rev'er-end (րէ'վըրէնտ) [*Rev.*] *Արժանապատիւ*

Եպիսկոպոսի

Right Reverend (րայթ րէվըրէնտ) *Գերապատիւ*

Արք Եպիսկոպոսի եւ Հայոց Պատրիարքներուն

Most Reverend (մօսթ րէվըրէնտ) *Ամենապատիւ*

Առ հասարակ Բոլոր Թագաւորներու և Հայոց Կաթուղիկոսին
His maj'es-ty (հիզ մա'ճէսթի) Իւր. Նորին Վեհափառութիւնը

Թագուհիներու

Most Ex'cel-lent կամ Most Gra'cious Majesty
(մօսթ էքսէլընթ կամ մօսթ կրէ'յշըս մաճէսթի)
Ամենավսեմ կամ ամենաողորմած Վեհափառութիւն

Բոլոր Օրէնսգէտ-Փաստաբաններու,
Հաշտարար Դատաւորներու եւ ամեն անոնց,
որոնց կ'ուզուի սովորականէն աւելի պատիւ մ'ընել, կ'ուղղուի
Es-quire' (էսքուա'յր) [*Esq.*] Մեծապատիւ

157. Վարժութիւն

[Չնաանաւորներն կարելի է գործածել Թ։ Եթէ Նամակներու վերնագիրներ և Թ։ Եթէ պահարանի վրայ գրուելիք հասցէներ]

[Ա] [Բ] [Գ]

To His Excellency
The President
of the United States of America
Washington, D. C.

Honorable
SENATOR C. DEPEW *of New York,*
Washington, D. C.

AFTER 5 DAYS PLEASE RETURN TO
B. R. TOROSSIAN
114-16 East 28th Street
NEW YORK

այս տեղ
փակցնելու է
նամակադրոշմը

Honorable
Congressman Arthur Williams,
Washington, D. C.

To the Honorable
GOVERNOR *of the State of New York,*
Albany, N. Y.

William D. Barbour Esq.,
New York, N. Y.

THE REVEREND
FRANCIS BROWN, D. D., Ph. D., D. Litt.* L. L. D.
New York, N. Y.

His Majesty, MGRDICH I.,
Catholicos‖ of all Armenians,
Echmiadzin, Russia.

THE MOST REVEREND
MATTHEWS† ARCH BISHOP IZMIRLIAN,
Patriarch§ of Armenians in Turkey,
Constantinople, Turkey.

THE MOST REV.
HOVSEP ARCH BISHOP SARADJIAN,
Primate‡ of all Armenians in America,
Worcester, Mass.

THE RIGHT REVEREND
BISHOP GREER,
New York, N. Y.

THE RIGHT REVEREND
BISHOP HAGOP PAPAZIAN,
Prelate of Armenians,
Tigranakert, Turkey.

THE REVEREND
THEODOROS ARZOONIAN,
Chenkoosh, Turkey.

GABRIEL EFENDI NATANIAN ESQ.,
Van, Turkey.

---

* D. Litt.— Doctor of Lit'er-a-ture, ([illegible]) *Վարդապետ Գրագիտութեան*

‖ Ca-thol'i-cos ([illegible]) *Կաթողիկոս*
† Matth'ews ([illegible]) *Մատթէոս*
§ Pa'tri-arch ([illegible]) *Պատրիարք, Նահապետ*
‡ Pri'mate ([illegible]) *Կղերական առաջնորդ*

Dr. M. A. Attarian
K. Aslanian, M. D.
K. Toprahanian, D. D. S.
Mr. S. Sarafian, A. M., LL. B.
Karekin Manoukian, Ph. D
Eghishe Kondakjian, A. B.
Anoushavan Kouyoumdjian
Mrs. Boghos Hammalian
" Makoor Gabriel
Miss Riggs, Pe. P.
" Alma J. Durant, Pe. B.
" Virginia Nersessian
Messrs. Gulbenkian Bros.
Master Hovsep Abahouny

General George Washington was named the father of his country.

Lieutenant-General Ulysses S. Grant after the war became the President of the United States.

Mr. President, permit† me to introduce* to you the Adjutant-General Butte.

Gentlemen: – I have the pleasure of introducing to you Admiral George Dewey.

Mrs. Nersessian, allow me to present to you my friend Brigadier-General Loris Melikov.

Rear-Admiral Magarov was either a Russian or an Armenian.

Major-General William McKinley took an active part in the war of 1860-4.

Commodore Garabedian will arrive here next week.

Ladies and Gentlemen: -- It gives me a great pleasure to introduce to you the speaker of the evening, Col. Theodore Roosevelt.

Miss Moorad, my friend Captain Agnoonie.

158. *Վարժութիւն*

[Ա]

Տիար Պետրոսեանը տեսնել պիտի երթայիք, գացիք տեսա՞ք զինքը։ — Այո, գնացի, տեսայ զինք իր տան մէջ։ — 2. Օրիորդ Պետրոսեանը Տիկին Ներսէսեանին հետ հոս պիտի գային, բայց դեռ չեկան. չեմ գիտեր ի՞նչ պատահեցաւ։ — 3. Այսօր կ'ակնկալենք հանդիպիլ Հրամանատար Ուաշինկթընին, Տեղակալ-Կառավարիչ Պօյաճեանին, Զօրավար Մանուկեանին, և Գնդապետ Տուրանդին։ — 4. Նախագահը պիտի գար, եկա՞ւ։ — Նախագահ Ուիլսըն պիտի ժամանէ Նիւ Եորք վաղն առտու իր Օգնական-Հրամանատարին, Ծովակալ Տիուիին, Գլխաւոր Ծովակալ Ուիլիըմին, Մարտանաւի Հրամանատար Նիւէ հետ։ — 5. Որ և է մէկը պիտի դիմաւորէ՞ զինք ((հանդիպի՞ իրեն))։ — Այո, շատ մը Ազգային և Նահանգային Ծերակուտա-

---

† per-mit′ (փըրմի՛թ) *թոյլտուութիւն* – to permit, *թոյլ տալ*
* in″tro-duce′ (ինթրօտիու՛ս) *ներկայացնել, ծանօթացնել*

կաններ, Ազգային և Նահանգային Երեսփոխաններ, Նիւ Եորք Նահանգի կառավարիչը և ուրիշ շատ մ'անձինքներ։ — 6. Առջի օրը զինուորական ուսանողներն տեսա՞ք, ի՜նչ գեղեցիկ կ'երեւէին։ — Այո՛, շատ գեղեցիկ հագուած էին. վաղն ալ ծովային ուսանողներն պիտի տեսնենք։ — 7. Երէկ Երկրորդ-Ծովակալ մ'եկաւ մեր տունը հայրս տեսնելու։ — 8. Մեր տունն ալ երէկ Կոմս մը եկած էր Լոնտոնէն քոյրս տեսնելու։ — Մի գուցէ քոյրդ կոմսուհի ըլլալ կը բաղձայ։ — Թող Դքսուհի մ'ըլլայ, եթէ ինք կը սիրէ։ — 9. Վաղը ժողով մը պիտի ըլլայ, ուր պիտի խօսի Անգլիացի Մարքիզուհի մը և ժողովին ալ պիտի Նախագահէ Մանչէստըրի (Manchester) Դուքսը։— 10. Արդի Նահանգային Գործոց Քարտուղարը և Նիւ Եորք Նահանգի Կառավարիչը իսկապէս ազնիւ մարդեր են։ — 11. Ընդհանուր Հրամանատար Գէորգ Ուաշինկթըն անուանուեցաւ Հայրենեաց Հայր։ — 12. Անգլիոյ Թագաւորն ու Թագուհին անցեալ տարի գնացին Հնդկաստան։ — 13. Արկայլի (Ar-gyll') Դուքսը Արեւելեան խնդրի բարեկամներէն մէկն էր։ — 14. Այս տարի (Ձկ) հարիւր ծովային զինուորութեան ուսանողներ պիտի աւելցուին Ամերիկայի Միացեալ Նահանգաց Ծովային ոյժին։ — 15. Ամերիկայի Միացեալ Նահանգներուն ցամաքային զինուորութեան ուսանողներէն հինգ հարիւր (Հոփ) երէկ Նիւ Եորք հասան, Ամերիկայի Միացեալ Նահանգներուն Գլխաւոր Հրամանատարին (Commander-in-Chief) ընկերակցելու։ — 16. Ամենապատիւ Ներսէս Արք Եպիսկոպոս Վարժապետեան (Varjabedian) Թուրքիոյ Հայոց ամենասիրելի Պատրիարքն էր, որ եթէ քիչ մը աւելի երկար ապրէր ամենայն Հայոց Կաթողիկոս պիտի ըլլար։ — 17. Տիկին Աննա Յակոբեան (Hagopian) և Օրիորդ Զարման Ջանգալեան (Zarman Chankalian) այսօր Պոսթօնէն հոս պիտի հասնին։ — 18. Տիկին Կատարինէ Թորոսեան շատ բարեսիրտ կին մ'է և Հայոցմէ շատ մեծ թուի մը օգտակար եղած է, որոնք չեն կրնար մոռնալ անոր իրենց ցոյց տուած բարեսրտութիւններն իրենց առաջին օրերուն մէջ։— 19. Օրիորդ Ներսէսեան շատ մեղմ և քաղցր կ'երգէ՛, մանաւանդ Հայկական եկեղեցիին մէջ. թէպէտև ոչ շատ բարձր. բայց Օրիորդ Լուսիկ (Lucyk) Գաբրիէլեան շատ գեղեցիկ կ'երդէ հարսանիքներու* մէջ. և Տիկին Բըռլան† շատ ախորժելի կ'երդէ ազգային երգեր։ — 20. Բարեսիրաց‡ Ընկերութեան§ Նախագահն է Տիկին Մաքուր Գաբրիէլեան որ աղքատներու և որբերու (orphan-օ'րֆըն) սքանչելի (splendid) հոգ կը տանի։

---

* wed'ding (ուէ'տինկ) հարսանիք — to wed, ամուսնանալ բայէն

† bril'liant (պրիլ'եընթ) շողշողուն, գեղափայլ, պայծառ. շաղակն, ադամանդի ընտիր տեսակը (Տե՛ս. Բըռլընթին)

‡ be-nev'o-lent (պընէ'վօլընթ) բարեսէր, բարեացակամ

§ as-so''ci-a'tion (էսօօշիէ'յշըն) ընկերութիւն, ընկերակցութիւն

ԴԱՍ ՁԲ. (LESSON LXXXII.)

Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ ամենալաւ սովորութիւններէն մէկն է որ առանց վարանման կարելի է խօսակցութիւն մը սկսիլ որ և է անձի հետ, առանց զինք կանխաւ ճանչցած ըլլալու, անոր բարև մը տալով և օրուան օդին վրայ դիտողութիւն մ'ընելով. անկից վերջ կը մնայ միայն խօսքը խօսքին ետեւէն չը կտրել, այլ շարունակել։ Այս պատճառաւ և խօսակցութեան առաջին դասերնիս կը լինի

Ողջունելու կամ Բարեւելու Ձեւեր

[Ընդունելու է որ խօսակցութեանց այս ոճերն, որոցմէ մեծ մասը մեր ուսանողներն արդէն լաւ գիտեն, այնպէս յարմարցուած են այստեղ, որ Անգլիերէն հեչ չգիտցողներն անգամ կարենան օգտուիլ ասոնցմէ. թէև ոչ հիմնապէս։]

*Բարի լոյս**	կուտ մօռնինկ	Good morning
Բարի լոյս, Տիար։	կուտ մօռնինկ սըր	Good morning, Sir.
Բարի լոյս, Տիկին։	կուտ մօռնինկ մատամ	Good morning, madam
Բարի օր Տիար Ա.	կուտ տէյ միսթըր Ա.	Good day, Mr. A.
Բարի կէսօրէ վերջ։	կուտ էֆթըրնուն	Good afternoon.
Բարի իրիկուն, Տիկին Թ.	կուտ իվնինկ միսիզ Թի	Good evening, Mrs. T.
Գիշեր բարի / Լոյս բարի } մայրիկ	կուտ նայթ մամա	Good night mama.
Մնաք բարով / Երթաք բարով } Օր. Ն.	կուտ պայ միս Ն.	Good bye Miss. N.

---

* *ԾԱՆ. — Անգլիերէնի մէջ բարեւողը ինչ որ ըսէ, բարեւառացողն ալ առ հասարակ նոյնը կը կրկնէ. այսպէս, Good morning, Բարի լոյս — Good morning, Բարի լոյս։ Բայց այնպիսի պարագայի մէջ որ զիրար ողջունողները տարբեր սեռէ կամ հասակի, եւ կամ տարբեր աստիճանի անձինքներ են, այն ատեն մարդ մը իր խելքովը որոշելու է թէ ի՛նչպէս պէտք է բարեւել կամ բարեւն ընդունիլ. օրինակի համար, եթէ Տիկին մը* Good morning Mr. T. *ըսէ երիտասարդի մը, ան ալ* Good morning Mr. T. *կրկնելու չէ Տիկնոջը, այլ ըսելու է* Good morning Mrs. S. *կամ* Good morning Madam R.*։ Նոյնպէս փոքրիկ տղայ մը երբ մեծ մարդու մը կ'ըսէ* Good morning, Sir, *անոր պէտք չկայ նոյնը պատասխանել* Good morning, Sir. *հապա աւելի անուշ պիտի ըլլայ ըսել* Good morning little boy, *ևն։*

Մնաք բարով } Երթաք բարով } սիրունիկ	պայ պայ տարլինկ	Bye bye*, darling.
Մնաք բարով } Երթաք բարով }	ֆէյրուէլ	Farewell.
Աստուած հետդ ըլլայ։	կոտ պի ուիտհ եու	God be with you.

Հետեւեալներն ալ երբեմն կը գործածուին

Ողջոյն։	հէյլ	Hail.
Ողջոյն, բարեւ։	սալիու՛տ	Sa-lute′.

Ողջունելու հետեւեալ ձեւերն ալ, որոնք Գաղղիերենէ առնուած են, յաճախ կը գործածուին։

Մնաք բարով } Երթաք բարով }	ատիէօ՛	A-dieu′.
Ի կրկին տեսութիւն, ցտեսութիւն }	օրըվուա՛ր	Au″re-voir′.
Բարի ճանապարհ։	պօն վուայաժ	Bon voyage.

Խօսակցութիւն մը սկսելու եւ շարունակելու ուրիշ ձեւեր

Ի՞նչպէս էք։	հաու ար եու	How are you?
Բաւական լաւ, շնորհակալ եմ։	փրէթթի ուէլ թհէնք եու	Pretty well, thank you.
Ի՞նչ կ'ընէք։	հաու տու եու տու	How do you do?
Շատ լաւ, շնորհակալ եմ։	(տուինկ) վէրի ուէլ, թհէնք եու	(*Doing*) very well, thank you.
Շատ լաւ կ'երեւաք։	եու ար լուքինկ վէրի ուէլ	You are looking very well.
Իրաւ որ շատ աղէկ եմ	այ էմ վէրի ուէլ ինտիյտ	I am very well indeed
Կը յուսամ առողջութիւննիդ լաւ է։	այ հօփ եու ար ին կուտ հէլթհ	I hope you are in good health.
Լաւ կ'զգամ։	այ ֆիյլ ուէլ	I feel well.
Հայրերնիդ ի՞նչպէս է։	հաու իզ եուր ֆաթհըր	How is your father?
Լաւ չէ այս օրեր։	հի իզ նաթ ուէլ նաուտէյզ	He is not well nowdays.
Մայրերնիդ ի՞նչպէս է։	հաու իզ եուր մըթհըր	How is your mother?

* Առ հասարակ փոքրիկներու համար կը գործածուի։

Շատ [illegible] շնորհակալ եմ։	[illegible]	[illegible]
Հիւանդ եղբայրդ ի՞նչպէս է։	[illegible]	How is your sick brother getting [illegible]
Աղէկ չէ։	[illegible]	Rather poorly.
Ցաւն ի՞նչ է։	[illegible]	What ails him?
Պաղ առած է։	[illegible]	He has caught cold.
Ջերմ ունի՞։	[illegible]	Has he any fever?
Ո՛չ Տիար, ջերմ չունի։	[illegible]	No Sir, he has no fever.
Բժիշկ կուգա՞յ։ (Որ [illegible])	[illegible]	Does any one attend* him?
Այո՛ Տիար, Տք. Ներսէս՝ մեր ընտանեկան բժիշկը կը նայի։	[illegible]	Yes Sir, our family physician†, Dr. Nerses, attends him.
Ի՞նչ է եղած ձեր քրոջը, շատոնց է զինք տեսած չեմ։	[illegible]	What is the matter with your sister? It is long time I haven't seen her.
Բոլորովին աղէկ է, շնորհակալ եմ։	[illegible]	She is quite well, thank you.
Ինք քիչ մը անհանգիստ էր ժամանակ մը առաջ, բայց հիմայ կատարեալ առողջութիւն մը կը վայելէ։	[illegible]	She was a little indis[illegible]
Շատ ուրախ եմ այդ լսելուս։	[illegible]	[illegible]
Հաճեցէք շատ բարեկամութեամբ յիշել զիս իրեն։	[illegible]	[illegible]
Հանդիպելով պիտի [illegible]	[illegible]	[illegible]

* [illegible]

† [illegible]

Կը հաճի՞ք (կ'ուզէ՞ք բաւական բարեհաճ ըլ-լալ) իմ բարեւներս տալ ձեր քրոջդստեր	'ուտ եու պի քայնտ ի-նըֆ թու կիվ մայ քամփլի-մընթս թու եուր նիյս	Would you be kind enough to give my compliments‡ to your niece?
Գիտի հրճուիմ այն-պէս ընելու (տալու)։	'ուտ պի տիլայթէտ թու տու սօ	Would be delighted to do so.
Բարեւներս մատու-ցէք ձեր մօրն ալ։	փրէզէնթ մայ քամփլի-մընթս թու եուր մըտհըր թու	Present my compliments to your mother too.
Չեմ մոռնար ([illegible])։	այ շէլ նաթ ֆէյլ	I shall not fail.
Գալ շաբթու անեն մը պիտի այցելեմ ձեզ յարգանքներս մատուցանելու ձեր մեծ մայրիկին։	այ շէլ քօլ ան եու սըմ-թայմզ նէքսթ ուիյք թու փրիզէնթ մայ րիսփէքթս թու եուր կրէնտ մըտհըր	I shall call on you sometimes next week to present my respects to your grard-mother.
Կ'ապահովցնեմ զձեզ ինքը շատ ուրախ պիտի ըլլայ ձեզ տեսնելու։	այ աշօր եու շի ուիլ պի վէրի կլէտ թու սիյ եու	I assure‖ you she will be very glad to see you
Մի մոռնաք բարեւներս տալ ձեր հօրը։	տօն'թ ֆօրկէթ թու կիվ մայ րիկարտզ թու եուր ֆատհըր	Don't forget to give my regards* to your father.
Ոչ, չեմ մոռնար։	նօ, այ ուօնթ (ուիլ նաթ)	No, I won't (will not).

Օդի վերաբերեալ խօսակցութիւններ

Գեղեցի՜կ օր մ'է։	իթ իզ ը նայս տէյ	It is a nice day!
Իրաւ որ գեղեցիկ է։	իթ իզ պիւթիֆուլ ին-տիյտ	It is beautiful indeed.
Գարնան կը նմանի։	իթ տըզ լուք լայք սփրինկ	It does look like Spring.
Պայծառ օր մ'է։	իթ իզ էյ սփլէնտիտ տէյ	It is a splendid day.
Մարդ (մէկը) կ'ուզէ դուրս ըլլալ։	ուըն լայքս թու պի ին աութտօրս	One likes to be in out-doors.

‡ com'pli-ment (քամ'փլիմընթ) ուրիշի մը վրայ սքանչացմամբ եւ գովեստով խօսուածք, բարեւ ([illegible]) — to compliment, ուրիշի մասին սքանչացումով եւ գովեստով խօսիլ

‖ as-sure' (աշօ'ւր) ապահովցնել, վստահացնել

* re-gard' (րիկա'րտ) ուշադրութեամբ նայուածք. բարեւ, մեծարանք — to regard, ուշադրութեամբ նայիլ. մեծարել — in regard to, ... մասին, ... նկատմամբ, ըստ ......

Օդերը շատ հաճելի կ'երթան այս օրեր։	ուի ար հէվինկ վէրի փլէզընթ ուէտհըր նաու-տէյզ	We are having very pleasant weather now days.
Այո, բայց կարելի է շուտով փոփոխութիւն մ'ունենանք։	եէս, պըթ ուի մէյ սուն հէվ ը չէնճ	Yes, but we may soon have a change.
Թերթերը կ'ըսեն վաղը տաք պիտի ըլլայ։ Կ'ակնկալենք, արդէն ամառ է։	տհը նիւզփէյփըրզ սէյ թու-մօռօ ուիլ պի ուօրմ. ուի էքսփէքթ, իթ իզ սըմըր օլրէտի	The newspapers say to-morrow will be warm. We expect, it is summer already.
Շատ տաք է այսօր։	իթ իզ վէրի ուօրմ թու-տէյ	It is very warm to-day.
Տաքութիւնը անտանելի է։	տհը հիյթ իզ ընպէրըպըլ	The heat is unbearable.
Կ'երեւի փոթորիկ մը պիտի ըլլայ այս գիշեր։	իթ լուքս տհէր ուիլ պի ը սթօրմ թու-նայթ	It looks there will be a storm to-night.
Այո, ես ալ այդպէս կը կարծեմ։ Կը տեսնեմ ամպերը կը հաւաքուին։	եէս, այ թհինք սօ թու, այ սի տհը քլաուտզ ար կէտհըրինկ	Yes, I think so too. I see the clouds are gathering.
Լսէ՛ որոտումը։	հիյր տհը թհընտըր	Hear the thunder.
Ի՜նչպէս սաստիկ կ'անձրեւէ։	հաու հարտ իթ րէյնզ	How hard it rains!
Անձրեւը դադրած է։	տհը րէյն հէզ սիյզտ	The rain has ceased.
Երկինքը բացուիլ կ'սկսի։	տհը սքայ պիկինզ թու քլիյր ըփ	The sky begins to clear up.
Արեւը բացուիլ կ'ըսկսի։	տհը սըն պիկինզ թու պրէյք աութ	The sun begins to break out.
Նայէ ի՜նչ գեղեցիկ ծիածան մը։	լուք, հուաթ ը պիւթիֆուլ րէյնպօ	Look, what a beautiful rainbow!*
Ամառն անցաւ։	տհը սըմըր իզ օվըր	The summer is over.
Աշունը եկաւ։	տհը ֆօլ իզ հիյր	The fall is here.
Առաւօտներն ու երեկոյներն զով են։	տհը մօռնինկզ էնտ տհը իյվնինկզ ար քուլ	The mornings and the evenings are cool.
Սաղարթներն թափիլ սկսան։	տհը լիյվզ ար պիկինինկ թու ֆօլ	The leaves† are beginning to fall.

* rain'bow'' (րէ'յնպօ) ծիածան

† leaf (լիյֆ) տերեւ, սաղարթ (չոր տերեւ)

[illegible]	[illegible]	The days are much shortened.
[illegible]	[illegible]	The nights are long.
[illegible]	[illegible]	The fire begins to be comfortable*.
[illegible]	[illegible]	We have had a fire already.
[illegible]	[illegible]	In our building† too, they have begun to turn the steam§ on.
[illegible]	[illegible]	The fire is a good companion‡.
[illegible]	[illegible] 22[illegible]	The 22nd day of December is the shortest day of the year.
[illegible]	[illegible]	Look at the fall moon, how bright she is!
[illegible]	[illegible]	The Winter has come.
[illegible]	[illegible]	It is very cold.
[illegible]	[illegible]	I don't like the Winter, do you?
[illegible]	[illegible]	I do.
[illegible]	[illegible]	Can you skate?
[illegible]	[illegible]	I can, but the ice must be thick enough.
[illegible]	[illegible]	Last year the Winter was very severe‖.
[illegible]	[illegible]	Tomorrow it will snow
[illegible]	[illegible]	It is snowing now.

[illegible] հանգիստ – to comfort, մխիթարել, [illegible] comfortable, հանգստաւէտ
[illegible] շինել, կառուցանել – building, շէնք
[illegible] շոգի
[illegible] ընկերակից
[illegible] խիստ, սաստիկ

Կարելի է շատ սաստիկ սառի։	իթ մէյ ֆրիյզ վէրի հարտ	It may freeze very hard.
Ես ցուրտէն կը դողամ. երթամ դուրս ձիւնյորդեմ որ ինքզինքս տաքցնեմ։	այ էմ շիվըրինկ ֆրամ քօլտ, այ էմ կօինկ աութ թու շըվլ սնօ թու ուարմ ըփ մայսէլֆ	I am shivering† from cold; I am going out to shovel snow to warm up myself.
Դուրսը շատ սահուն է։	իթ իզ վէրի սլիփփըրի աութտօրզ	It is very slippery§ outdoors.
Կը յուսամ ձմեռը շուտով պիտի անցնի։	այ հօփ դը ուինթըր ուիլ սուն պի օվըր	I hope the winter will soon be over.
Գարնան օդեր են, որուն կը բաղձայի։	իթ իզ սփրինկ ուէդըր, ուիչ այ ուազ լօնկինկ ֆօր	It is spring weather, which I was longing‡ for.
Գարունը ամենէն աւելի սիրած եղանակս է, որովհետև եղանակներէն ամենէն ախորժելին է։	դը սփրինկ իզ դը սիյզըն այ լայք պէսթ, պիքօզ իթ իզ դը մօսթ փլէզընթ օվ օլ սիյզընզ	The Spring is the season I like best; because it is the most pleasant of all seasons.
Ծառերն սկսած են պտկիլ և շուտով կատարեալ պիտի ծաղկին։	դը թրիյզ ար պիկինինկ թու պըտ էնտ դէյ ուիլ սուն պի ին ֆուլ պլում	The trees are beginning to bud*, and they will soon be in full bloom.
Կարելի է գալ շաբթու ունենանք ձիւնախառն անձրև կամ կարկուտ։	ուի մէյ հէվ սլիթ օր հէյլ նէքսթ ուիյք	We may have slit or hail next week.
Գարնան բնութիւնը կը ժպտի ամեն տեղ։	ին դը սփրինկ դը նէյչըր սմայլզ էվրի հուէր	In the Spring the nature smiles everywhere.
Օդը մեղմ է։	դը ուէդըր իզ մայլտ	The weather is mild.
Արևը տաք է։	դը սըն իզ ուարմ	The sun is warm.
Ծաղիկները կը փթթին։	դը ֆլաուըրզ ար պլումինկ	The flowers‖ are blooming.

† shiv'er (շի'վըր) դողալ

§ slip (ս)լիփ – մէկ վանկ) յանկարծական սահիլ – to slip – յանկարծ սահիլ slip'per-y (ս)լի'փըրի) սահուն

‡ long, երկար – to long, *for* կամ *after* ըղձալ, բաղձալ, կարօտ քաշել

* bud (պըտ) պտկիլ. ծառ պատուաստել

‖ flow'er (ֆլաու'ըր) ծաղիկ – to flower, ծաղկազարդել. ծաղկիլ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ։

1. *Յօդը տեսակ մը մասնանիշ է, որ մասնաւոր անուն մը կը մատնանշէ. որմէ կը հետեւի որ անուն մը մէկ յօդ միայն կ'առնէ և ոչ աւելի։ Եթէ նախադասութեան մը մէջ մէկէ աւելի յօդեր գտնուին, այդ նշան մ'է որ որքան յօդեր կան, այնքան ալ անուններ ըլլալու են։ Նոյնպէս ածականի մը վրայ դրուած յօդը կը ցուցնէ թէ հոն գոյական անուն մը վըրպ կ'իմացուի. ինչպէս,* The neuter verb is conjugated like *the* active [*verb*] *— չէզոք բայը կը խոնարհուի (խօնճըկէյթըտ է) ներգործական[թայ]ին պէս։*

2. *Յօդը՝ իր յարաբերած անունէն միշտ առաջ կը դրուի. եթէ անունէն առաջ ածական մ'ըլլայ, յօդը ածականէն առաջ կը դրուի. այսպէս, the* man, *մարդը — the* wise man, *իմաստուն մարդը։*

3. *Դերանուանական ածականներէն* *both* *(երկուքն ալ)էն վերջ կարելի է յօդ դնել. ինչպէս, both the* men, *երկու մարդիքն ալ, ըսելը սխալ չէ. բայց աւելի լաւ է առանց յօդի գործածել այսպէս, both* parts, *երկու մասերն ալ։ Same, նոյն բառը միշտ որոշեալ յօդին կամ ուրիշ որոշիչ բառի մը հետ կը գործածուի. այսպէս,* On *the same* day, *նոյն օրը —* In *that same* hour, *միեւնոյն ժամուն։ Few, քիչ, քիչեր, քանի, կը գործածուի թէ յօդով և թէ առանց յօդի, բայց տարբեր իմաստով. ինչպէս, The few* who were present were in the secret*, *քիչեր, որոնք ներկայ էին, գաղտնիքին տեղեկացան. կը նշանակէ ներկայ եղողներն ամենքն ալ գաղտնիքին տեղեկացան. մինչ Few* that were present, were in the secret, *ներկաներէն քիչեր գաղտնիքին տեղեկացան, կը նշանակէ հոն քիչեր կը գտնուէին, և անոնցմէ ալ մէկ քանին, ոչ ամէնքը, գաղտնիքին տեղեկացան։*

4. *Հետեւեալ դերանուանական ածականներն՝ any, each, either, every, much, neither, no կամ none, some, this, that, these, եւ those յօդ չեն առներ։ Հետեւեալ դերանուանական ածականներն՝ all, both, many, such, եւ what յօդերէն առաջ կը դրուին. այսպէս, All the* world, *բոլոր աշխարհը — Both the* judges, *երկու դատաւորներն ալ — Many a* mile *(մայլ), մղոններ — Such a* thing, *այդպիսի բան մը — what a* fun, *ինչ կատակ մը։ Նոյնպէս ալ տեսակ ցուցնող որ և է ածական որ too, so, as, կամ how մակբայ ունենայ իրեն հետ, յօդէն առաջ կը դրուի. այսպէս, Such*

* se'cret *(սի՛քրէթ) գաղտնի. գաղտնիք*

a gift* is *too small a* reward for *so great a* labour, այըդըլէօէ նուէր մը շատ փոքր վարձատրութիւն մ'է այնքան մեծ աշխատութեան մը համար։ Հետեւեալ դերանուանական ածականներն ալ՝ *few*, *former*, *first*, *latter*, *last*, *little*, *one*, *other*, եւ *same* յօդէն վերջը կը դրուին. այսպէս, *The many* favors which we have received, (այն) շատ շնորհքներն, զորս մենք ստացած ենք։

5. Որոշեալ յօդը յաճախ քոմփէրէթիվներուն եւ սիւփըրլէթիվներուն հետ կը գործածուի անոնց իմաստին աւելի ազդուութիւն տալու համար. այսպէս, *The more* I examine it, *the better* I like it, (որքան) աւելի շատ կը քննեմ զանիկա, (նոյնքան) աւելի լաւ կը սիրեմ զայն։ "Neither if we eat not, are we *the worse.*" – *I. Cor.* viii., 8. «Եւ ոչ եթէ չուտենք, կը պակսինք (աւելի գէշ չ'ըլլանք)։» – Ա. Կոր. ը., 8։

6. The յօդը չկրկնելու համար, երբեմն գոյական անունը յոքնակիի կը փոխուի, պայմանաւ որ գոյական անունի ածականներն նշանակութեամբ իրարմէ հեռու կամ հակառական ըլլան. ինչպէս, *The* indicative and potentiat *moods*, Սահմանական եւ Կարողական եղանակներն. փոխանակ ըսելու *The* indicative and *the* potential *mood*։ Բայց գոյական անունը յոքնակի եղած ատեն յօդը կրկնելը սխալ է. այսպէս պէտք չէ ըսել *the* indicative and *the* potential *moods*։ Նոյնպէս ալ գոյական անունը եզակի եղած ատեն, յօդը չը կրկնելը սխալ է. այսպէս ըսելու չէ *The* north and south *pole*†, Հիւսիսային ու Հարաւային բեւեռ. այլ *the* north and *the* south *pole*։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ա. — Անորոշ յօդերէն *a* միշտ գործածելու է բաղաձայնով սկսող բառէ մ'առաջ եւ *an* ձայնաւորով սկսող բառէ մ'առաջ. այսպէս, *A* man was talking to *an* actor, մարդ մը կը խօսէր դերասանի մը (հետ)։

Բ. — *A* կամ *an* յօդը այնպէս գործածելու չէ որ յոքնակի անուն մը յարաբերելու երեւոյթն ստանայ. ինչպէս, Come with me Bertha, I want to show you *a house and gardens*§. եկուր ինծ հետ Պայծառ, ես կուզեմ ձեզ ցուցնել տուն մը և պարտէզներ. որը սխալ է. ուղիղը պիտի ըլլայ ըսել, Come with me Bertha, I want to show you *a* house and *its* gardens, եկուր ինծ հետ Պայծառ, ես կ'ուզեմ ձեզ ցուցնել տուն մը եւ անոր պարտէզներն։

---

* gift (կիֆթ) նուէր, ընծայ – to gift, օժտել

§ gar'den (կա՛րտըն) պարտէզ – to garden, պարտէզ մշակել

† pole (փօլ) ձող, կանձոխ (Տե՛ս. օրէնք) երկրագունտի բեւեռ. Բոլոնիացի

Գ. — Երբ նախադասութեան մը կազմութեան մէջ՝ անուններ իրարու կը միանան տարբեր կցորդներով, կամ իրարմէ կախում ունենալով եւ կամ իսկական հակապատկերով, յօդը եթէ վերջինին ալ կը պատկանի կրկնելու է. ինչպէս, "She never considered the quality, but merit‡ of her visitors†." - *Wm. Penn.* «Ինք բնաւ նկատողութեան չէր առներ իր այցելուներու յատկութիւնը (քուալիթին) այլ արժանիքը». ասիկա պէտք էր ըլլար *the* merit։

Դ. — Երբ ածականներ՝ որոց ցոյց տուած որպիսութիւնները կը պատկանին միեւնոյն անունը կրող, բայց անհատաբար տարբեր իրերու, միացած են, յօդը կրկնելու է. այսպէս, *The* north and *the* south line, Հիւսիսայինն ու Հարաւային գիծը - կը նշանակէ երկու դիծեր, որոնք արեւելքէն արեւմուտք կ'երկարին. նոյնպէս *a* black and *a* white horse, սեւ մը եւ ճերմակ ձի մը – կը նշանակէ երկու ձիեր – մէկը սեւ եւ միւսը ճերմակ։

Ե. — Երբ ածականներ՝ որոց ցոյց տուած բոլոր որպիսութիւններն կը պատկանին մի եւ նոյն իրին կամ իրերուն, միացած են, յօդը կրկնելու չէ. այսպէս, *The* north and south line, կը նշանակէ մէկ գիծ Հիւսիսէն Հարաւ երկարող. նոյնպէս, *a* black and white horse կը նշանակէ մէկ ձի մը, որը թէ սեւ եւ թէ ճերմակ է (խայտաբղէտ)։

Զ. — Երբ երկու կամ աւելի մի եւ նոյն անունը կրող առարկաներ իրարմէ կը զանազանուին այնպիսի ածականներով, որոնք իրարու հետ չ'ն կրնար միանալ մի եւ նոյն իրը նկարագրելու, յօդը ամեն մէկ ածականին վրայ դրուելու է, եթէ անունը եզակի է. եւ առաջին ածականին վրայ միայն, եթէ անունը յոգնակի է. այսպէս, *The* nominative and *the* objective *case*, կամ *The* nominative and objective *cases*, ուղղական եւ սեռական հոլովներն։ – *The* fifth, *the* seventh, and *the* eighth lesson, կամ *The* fifth, seventh and eight lessons, հինգերորդ, եօթներորդ եւ ութերորդ դասերն։

Է. — Երբ մի եւ նոյն նախադասութեան երկու մասերը (phrases) իրարու համապատասխան մասնաւոր նշանակութիւն մ'ունենին, յօդը եթէ առաջին մասին մէջ գործածուի, վերջինին ալ դրուելու է. այսպէս, "For ye know neither *the* day nor *the* hour." – *Matt.* xxv., 13. «Ինչու որ ոչ օրը գիտէք եւ ոչ ժամը»։ – Մատթ. իե., 13։

---

‡ mer'it (մէ'րիթ) արժանիք [այցելու

† vis'it (վի'զիթ) այցելութիւն – to visit, այցելել – visitor,

Ը. — *Երբ մասնաւոր կապակցութիւն մը կը կազմուի ու-րոյն մակդիրներու միջեւ, իրենց հետեւող անունը յոգնակի դրուելու չէ. այսպէս, սխալ է ըսել* Both *the* first and second editions (էտի՛շըն – *տպագրութիւն*), *թէ առաջինը եւ թէ երկրորդ* տպագրութիւնները. *նոյնպէս սխալ է ըսել* Both *the* first and *the* second *editions*, *այլ ըսելու ուղիղ կերպն է* Both *the* first and *the* second *edition*, *թէ առաջին եւ թէ երկրորդ* տպագրութիւնը։

Թ. — *Երեք կամ աւելի մասերէ բաղկացեալ շարքի մը մէջ, եթէ յօդ գործածել ուզուի կամ ամեն մէկ անունին դնելու է եւ կամ առաջինին միայն. ուղիղ չըլլար հինգէն երեքին դնել երկուքին չը դնել կամ չորսէն երեքին դնել մէկին չը դնել. այսպէս,* I saw one day *a* wolf, *a* lamb, *a* cat and *a* mouse ..., *օր մը ես տեսայ գայլ* մը, *գառնուկ* մը, *կատու* մը *եւ մուկ* մը ...... ։

Ժ. — A *կամ* an *յօդը կը նշանակէ* տեսակի մը մէկ հատը միայն, *ուստի եւ գործածելու չէ այնպէս, ինչպէս կը գործածուի* *the ամբողջ տեսակ մը ցուցնելու համար. այսպէս, սխալ է ըսել* *a sparrow* is a sort of *a bird*, ճնճղուկ մը թռչունի մը մէկ *տեսակն է. այլ պէտք է ըսել* *the sparrow* is a sort *of* bird, ճնճղուկը *տեսակ մը թռչուն է* (թռչունի *տեսակ մ'է*)։

ԺԱ. — *Յօդը գործածելու չէ առաքինութեան, մոլու-թեան, կիրքերու, արհեստներու կամ գիտութեան անուն-ներու հետ. ոչ ալ ուրիշ որոշիչ բառեր ունեցող անուննե-րու հետ. եւ ոչ ալ այնպիսի անուններու հետ, որոց նշա-նակութիւններն ինքնին, առանց յօդի ալ, որոշ են. ինչպէս,* "Let not *mercy* and *truth* forsake thee:" – *Prov.* iii., 3, «Թող ողորմութիւն ու ճշմարտութիւն *քեզ չը թողուն.»* – Առակ. գ., 3։ – *Falsehood* is odious (օ՛տի-ըս) ստութիւնը *գարշելի է*։ – *Iron* is useful, երկաթը *օգտակար է*։ – *Beauty* is vain, գեղեցկութիւնը *ունայն է. եւն*։

ԺԲ. — *Երբ տիտղոսներ կը յիշուին իբր պարզ տիտղոս, կամ իբրեւ անուններ՝ պարզ անուններ կամ բառեր, ա-նոնցմէ առաջ յօդ դնելու չէ. այսպէս,* He is styled *Marquis*, *ինք կը կոչուի* Մարքիզ, *ոչ* the Marquis *և ոչ ալ* a Marquis *կըր-նայ ըլլալ*։

ԺԳ. — *Երբ երկու անուններու միջև բաղդատութիւն մը կամ ընտրութիւն մը լինի, եթէ երկու անունները ալ մի և նոյն նիւթին կամ առարկային կ'ակնարկեն յօդը առաջին անուան վրայ միայն կը դրուի. իսկ եթէ տարբեր նիւթերու ակնար-կեն, յօդը երկուքին վրայ ալ դրուելու է. այսպէս, երբ ը-*

սենք He is *a* better teacher than poet, *ինք աւելի լաւ ուսուցիչ մ'է քան բանաստեղծ – մի և նոյն անձի երկու տարբեր յատկութիւններն՝ ուսուցչութիւնն ու բանաստեղծութիւնն իրարու հետ բաղդատած եղանք․ բայց երբ ըսենք* He is *a* better teacher than *a* poet, *ինք աւելի լաւ ուսուցիչ մ'է քան բանաստեղծ մը – երկու տարբեր անձերու ուսուցչի մը եւ բանաստեղծի մը ակնարկած եղանք։*

ժԴ․ — *Երբ նախադասութեան մը փոքրիկ մէկ հատուածը* *who* *կամ* *which* *դերանուննովը սկսի, անոր նախընթացը միշտ կամ որոշեալ յօդը և կամ որոշիչ բառերէն* (*this*, *that*, *these*, *those*) *մէկն ունենալու է իր հետ․ այսպէս,* All *the men*, *who* were present, agreed to it, *բոլոր մարդիկը, որոնք ներկայ էին համաձայնեցան անոր։* "*The things*, *which* are impossible with men, are possible with God." – *Luke*, xviii., 27. «(Այն) բաները որոնք անհնար են մարդոց կողմանէ, հնարաւոր են Աստուծոյ կողմանէ։» – Ղուկ. ժը., 27։

ժԵ․ — *Ընդունելութեան մը հետ յօդ գործածելու չէ․ բայց երբ ընդունելութիւն մը դերբայական անուանի մը վերածուի յօդը առ հասարակ ընկերացնելու է․ այսպէս,* *By saying* this, *այս ըսելով* – *The completing of* this, *ասոր ամբողջացումը։*

159․ *Վարժութիւն*

[Հետեւեալ նախադասութիւններն վերլուծել ծանօթութիւններուն համար ապացուցելով ընդօրինակելու և դերբային ձևը։]

1ին Ծան․ համար։ — Such an one is not to be looked for. — He is an useful man. — She is an European. — We attended an yearly meeting. — He bought an horse.

2րդ Ծան․ համար։ — "And it came to pass about an eight days after these sayings." — "As a first fruits of many more that shall be gathered." — "In the midst of a thick woods."— "As we went on the country for a little ways improved*."— They returned after a seventy years.

3րդ Ծան․ համար։ — "The perfect participle and imperfect tense ought not to be confounded†." — "An eye is soon lost, or bone broken." — "I despise§ not the doer, but deed." — For the sake of an easier pronunciation and more agreeable sound."

---

* im-prove' (իմփրու՛վ) *բարւոքել*
† con-found' (քընֆա՛ունտ) *շփոթել.*
§ de-spise' (տիսփա՛յզ) *ատել, ծաղրել*

4րդ Ռուլ. Կարէքթ — "It is proper that the vowels be a long and short one." — "To distinguish‡ between an interrogative and exclamatory sentence." — "The passive and neuter verbs." — "There are two voices; the Active and Passive."

5րդ Ռուլ. Կարէքթ — "Into a dark and a distant unknown." — "The deepest and the bitterest feeling."

6րդ Ռուլ. Կարէքթ — "They can not be at the same time in the objective and nominative cases." — "The imperfect, the perfect, the pluperfect, and the first-future tenses of this mood, are conjugated like the same tenses of the indicative" — "Nouns are sometimes in the nominative or objective case after the neuter verb to *be*." — "In the second and third person of that tense."

7րդ Ռուլ. Կարէքթ — "Between the adjective and following substantive." — "He shows that Christ is both the power and wisdom of God." — "Sometimes both the accusative and infinitive are understood." — "The verbs *must* and *ought* have both a present and past signification."

8րդ Ռուլ. Կարէքթ — "The word *that* is used both in the nominative and objective cases." — "The indicative and the subjunctive moods." — "I doubt of his capacity§ to teach either the French or English languages."

9րդ. Ռուլ. Կարէքթ — "Verbs have six tenses, the Present, the Imperfect, the Perfect, Pluperfect, and the First and Second Future tenses." — "It is an irregular verb neuter, indicative mood, present tense, and the third person singular." — "The fifth, sixth, seventh, and the eighth verse*."

10րդ Ռուլ. Կարէքթ — "It shows what kind of a man he is." — "What sort of a thing is it?" — "This part of speech is called a verb."

11րդ Ռուլ. Կարէքթ — "Either thou or the boys were in the fault†." — When the verb has a reference to future time." — "No; they are the language of imagination rather than of a passion."

---

‡ dis-tin'guish (տիսթին'կուիշ) զանազանել

§ ca-pac'i-ty (քափա'սիթի) կարողութիւն, տարողութիւն

* verse (վըրս) բանաստեղծութեան տող. երգի, Ս. գրքի գրուածներու համար, տուն

† fault (ֆօլթ) թերութիւն, փոքրիկ յանցանք. սխալանք, ապականութիւն

12րդ Սահ. Համեմատ: — "Her father is honoured with the title of an Earl." — "The highest title in the state is that of the Governor." — The one styled the Mufti (մուֆթի – Տաճկերէն է) is the head of the ministers of law and religion."

13րդ Սահ. Համեմատ: — "He is a better writer than a reader."— "He was an abler speaker than a writer." — "I should rather have an orange* than apple†."

14րդ Սահ. Համեմատ: — "Questions which a person asks himself ... ." — "The work is designed§ for the use of persons who may think it merits a place in their Libraries‡."— Consonants are letters, which can not be sounded without the aid of a vowel."

15րդ. Սահ. Համեմատ: — "And thus far of forming of verbs."— "For making of measures¶ we have the best method here in England." — "For revealing‖ of a secret, there is no remedy**."— "A wise man will avoid the showing any excellence in trifles.††"—

Potential means the having power or will;
As, If you *would* improve, you *should* be still."

---

* or'ange (օ'րընճ) նարինջ

† ap'ple (է'փլ) խնձոր

§ de-sign' (տիզա'յն) նկար. ծրագիր. նպատակ – to design, ծրագրել, նկարել.

‡ li'bra-ry (լա'յպրէրի) գրատուն

¶ meas'ure մէ'ժուր) չափ – to measure, չափել

‖ re-veal' (րիվի'յլ) յայտնել

** rem'e-dy (րէ'մըտի) դարման – to remedy, դարմանել

†† tri'fle (թրա'յֆլ) աննշան բան – to trifle, ժամանակը աննպատակ և ի զուր վատնել, առ ոչինչ սեպել

[Ամենօրեայ օրինակներ մեզ սովրեցուցած են որ Ասիա-
կան կամ Եւրոպական երկիրներէն Անգլիախօս երկիրներու
մէջ ճամբորդել կամ գաղթել ուզող Հայ մը ինքն իր գոր-
ծերը կրնայ կառավարել, (առանց Անգլիերէն գիտնալու պէտքը
զգալու) իւր արդէն գիտցած զանազան լեզուներու կամ ըն-
կերներու օգնութեամբ, մինչեւ Անգլիախօս երկրի ցամաք ել-
լելը, որ ատեն մաքսային կամ գաղթային պաշտօնեաներու
հսկողութեան տակ կ'առաջնորդուի Գաղթականաց յատուկ
պաշտօնատունը, ուր ևս պաշտօնական մասնաւոր թարգմանի
օգնութեամբ, դարձեալ կրնայ իրեն պէտք եղածը հասկցնել*։
Բայց Գաղթականաց յատուկ պաշտօնատնէն ազատ արձակ-
ուելէն և ցամաք ելլելէն վերջն է որ իւր ճանապարհորդակից
ընկերներէն ալ զատուելով, ինքզինք անծանօթ փողոցներու
մէջ առանձին և անլեզու գտնելով, Անգլիերէնի պապակը
սոսկալի կերպով կ'զգայ․ ահա նոյն րոպէէն Ինքնուսուցչի խօ-
սակցութեան հետեւեալ դասերը կ'սկսին ճանապարհորդին
ընկերանալ եւ զինք առաջնորդել իւր պէտքերը գոհացնելու
բնական կարգով մը և հուսկ ուրեմն զինք իւր նպատակին
հասցնելու։]

---

* Թէ ի՞նչ օրէնքներով պիտի կառավարուին Ամերիկայի
Միացեալ Նահանգներն ճանապարհորդել կամ գաղթել ցան-
կացողներն գաղթականաց յատուկ այս պաշտօնատան մէջ, և
ձոն իրենցմէ ի՞նչ պիտի հարցուի և ի՞նչ կ'ակնկալուի որ պա-
տասխանեն, բոլորը կարելի է գտնել մեր «Պիտանի Գիտելիք-
ներ» կամ «Ճանապարհորդի Ընկերը» գրքոյկին մէջ։

ԴԱՍ ՁԳ. (LESSON LXXXIII.)

Քաղաքի մը փողոցներուն մէջ

[Ը] [Թ] [Ժ] [Ի]

Cit'y	(սի'թի)	Մեծ քաղաք†
town	(թաուն)*	փոքր քաղաք§
bor'ough	(պը'րօ)	աւան, շրջանակ
pre'cinct	(փրի'սինքթ)	քաղաքական ընտրողներու շրջանակ
